



493

# Բազմի

ԸՍՍԵԳԻՐ

Գրական-թերթ  
և Արտ-Երգի

Գ  
Ի  
Լ  
Ե



ԺԳ. ՏԱՐԻ


Թ. Ի Ի 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1974

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ԱՐՓԻՆԷ	Փորձել, թե չփորձել...
Մ. ՊԶԱԳՃԵԱՆ	Պատերը
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Յանախանք
Յ. ՕՇԱԿԱՆ	Մաթիի Մելիֆխանեան
* * *	Մեհեհական տուն
«ՄԵՆԵԱՆ»	Մեր հանգանակը
* * *	Զրոյց՝ Մեհեհական եռապետութեան հետ
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Ֆրանսական ժամանակակից բանաստեղծութիւնը
Լ. ԼԱՊԷՑ	Գրողներու նակատագիրը յեզափոխութիւններու ընթացքին
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Տագնապահար մտնուլը → Սալիմ Պարաֆաթ
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Սկսնակ գրողներն Ամերիկայում
* * *	Դարձեալ Սերգէյ Փատաճանովի մասին
Ս. ՖԱՐԻՏ	Կատարեալ գործ մը անկատար մարդում մասին
* * *	Նշմարներ
Բ. Փ.	Վ. Խորշեանի բեմադրած «Վենետիկի վաճառականը»
* * *	«Բագին»ի 1974ի բովանդակութիւնը

# Բագրու



## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Վ. ՍԱԿՐ. ԽԻՒՒ 12

ԴՍԵՏՍՄԱՍԻ 1974

ՊԵՐՏԻՐ

ՅՎՕԸ (ԿՅԿ)

### Ա. ԱՐՓԻՆԷ

### ՓՈՐՁԵՆԹԵՂՓՈՐՁԵԼ...

Քիուն ինք է, որ պիտի ոգնես քեզի՝ պէտք էր պատասխանելի...  
 Աւ հիմա, հոյիս խոսիքի ու երկրնորանքի մէջ՝ կը հարցնեմ ես ինձի.  
 «օգնե՛՛լ, թէ ոչ... փորձե՛՛լ, թէ չփորձել...»  
 Օր մը առաջ էր: Իր գրան սեմին՝ ներսէն յորդող երաժշտութիւնը  
 պահ մը անլարժացուց զիս: Հետզհետէ ծաւալող փոթորիկ մըն էր կարծես,  
 որ ալիք-ալիք կը տարածուէր ու էութիւնդ կ'ալեկոծէր:  
 Երկար պահ մը մատս կոճակին վրայ յամենալէ, վարանելէ ետք, սեղ-  
 մեց զայն վերջապէս:  
 — Ե՛ս եմ, Նինա՛, — պատասխանեցի ներսէն եկող հարցումին:  
 — Բանալին ոտնաորրի: Ին տակ է. դուռը բանալէ ետք, ինչոքեմ, հոն  
 դէր կրկին, — բաւա զարժանք պատճառելով ինձի:  
 Կը սիրէի թանկարժէք նկարներով ու զեղօրներով զարդարուած այդ  
 սենեակը: Արժէնի նուրբ ճաշակն ու հասկացողութիւնը մասնող արուեստի  
 յաջող գործեր բոլորն ալ:  
 Նախասիրած նկարներս տառնձնութեան մէջ պահ մը վայելելէ ետք՝  
 — Աս ի՞նչ նորութիւն է, ո՞ւր ես, — գոչեցի:  
 Բուպէ մը ետք, ննջարանի դրան մէջ էր: Մինչեւ ոտքերը հասնող կա-  
 պոյտ պարեկօտով, խարտեաշ մազերը ուսերուն թափած, դէմքը շառագու-  
 նած, աչքերը կայծերով լի:  
 — Յայտնի է, որ դրադած էիր. եւ ուրեմն ինչո՞ւ դարձեալ չեռածաշ-  
 նեցիր...  
 — Կ'ուզէի որ դայիր այսօր...  
 Արասայատութիւնը խօսուն էր: Չարանճի ժպիտ մը կը խաղար սիրուն  
 ու լուսավառ դէմքին:  
 — Առանձին՞ ես, — հարցուցի յանկարծ կասկածէ մը մտրակուած:  
 — Այո՛, այո՛, անշուշտ առանձին եմ, — խնդաց, — կը պարէի...  
 digitised by A.R.A.R.®

Հիմա պիտի հարցնես, թէ ինչո՞ւ ներս փախայ... Մերկ էի... Մերկ կը պա-  
րէի... Այդպէս մի՛ նայիր... Ո՛չ բուլբուլին ձերկ...

— Տէ՛ր Աստուած, — գոչեցի, — երեւի իզապէս Տանըընին կ'ուզես  
հետեւիլ, անոր նմանիլ, լաւ որ կենսերիդ ուղին նոյն ձևով չ'ընթանար:  
Ինչպէ՞ս է Արմէնը...

Ստուեր մը ինկաւ գէմքին, բայց իսկոյն կրկին պայծառացաւ:

— Այս գիշեր պիտի գայ... Պիտի գա՛յ... Պիտի գա՛յ, — գոչեց ուղի  
ցատկելով ու սենեակին մէջ գտնուելով, — իրեն համար կը պարէի... Այդ-  
պէ՛ս պիտի պարեմ, երբ այս գիշեր գայ... Վէ՛ճ մը ունեցանք... Տարի մըն  
է յաճախ վէճեր կ'ունենանք, նախանձոտ ալ է... Շարաթ մը առաջ բարկա-  
ցաւ, բանային նետեց ու հեռացաւ: Այդակից է... Մի՛ նկուրի երբ բռնեմ,  
թէ գրեթէ վայրագ կը գտնույ բարկութեան մէջ: «Գնա՛ ըսի, գնա՛, չեմ ու-  
զերս»: Հիմա ո՛ւր է չեմ գիտեր, բայց նա՛մակ մը գրեցի ու իր գործատեղին  
զրկեցի: Խնդրեցի, որ այսօր անպայման գայ զիս տեսնելու, թէ՛ առանց ի-  
րեն կենսքը անկարելի է ինծի համար, թէ՛ զիս տակաւին չէ ճանչցած, սի-  
րոյս աստիճանը չէ լսփած... Երբ գալու ըլլայ՝ պիտի բանայ դուռը, ինչ-  
պէս գուն ըրիր...

Իր նուրբ ժտաներով պանիկ մը վառեց. պիտու ցնցումով մաղկերը ետեւ  
նկանց. աչքերը պահ մը լրջացան, ուզողուեցան Հասարնի ֆուրերը գրկող  
պատահաններուն:

— Կ'ուզէ որ փոխեմ ապրելակերպս...

Նայուածքս չէր ուղեր հեռանալ, իր ետեւ կախուած՝ Նիքրլուի հիւ-  
նախի բնակարան: Գոյներու համանուագ մը: Յանդուղն վրձիններ, որոնք  
կը մատնէին ուժն ու կիրքը արուեստագէտին:

Նկարիչներու ծովափնեայ բոյնին, Բաքփորթի մէջ տեսեր էի զայն  
Նկարող տաղանդաւոր տղան, որ հաճելի խօսակից ալ էր: Այդ տարիներուն  
իր զօրծերը կը ծախուէին քանի մը հարիւր տուլարի, այսօր՝ քանի մը հա-  
զարի:

— Ի՞նչ լաւ բնորութիւններ գիտէ ընել Արմէնը, — ըսի անկեղծ հիւ-  
սումով:

Գլուխը հաստատական շարժեց:

— Կարծեմ իր միակ ձախող ընտրութիւնը ես եմ եղած, — ըսաւ ժլպ-  
տելով եւ իսկոյն աւելցուց, — գիտեմ որ չես ծխեր, ի՞նչ կ'ուզես խմել...

— Ոչինչ, ոչինչ, — պատասխանեցի իսկոյն:

Ձեռքը երկարեց սեղանին վրայ կիսատ մնացած խմիչքի գաւաթին ու  
տարաւ շրթներուն:

— Կ'ուզէ որ փոխեմ ապրելակերպս, — կրկնեց Նինա պարպուած գա-  
ւաթը վար դնելով, — հրաժարիմ նախափրութիւններէս, հրաժարիմ բեմէն  
ու նուիրուիմ ընտանեկան պարտականութեանց... Բայց չե՛մ կրնար... Խոս-  
տացեր էի, սակայն տակաւին չե՛մ կրնար...

— Նինա՛, — ըսի, աչքերուն մէջ նայելով, — գիտէիր անչուտ, թէ  
ինչ ըսել է ամուսնութիւն, տուն, ընտանիք, երբ այդ քայլը առիր...

Ակնարկը ինկաւ շինական դորդի ծաղիկներուն ու ձայնը շուրջի վե-  
րածուեցաւ:

— Ձե՛մ կրնար ինքզինքս բեմէն անջատել... Պէտք է համբերէ, ու  
մատահ եմ պիտի համբերէ... Պիտի համբերէ... Գիտե՛ս թէ դուք՝ Հայերդ,  
ժառանգոր ուժ մը ունիք... Արմէնին աչքերը կրակ ունին, ու երբ զիս գրկէ՛  
կարծես իր էութեան հետ կը ձուլուիմ, կ'անէանամ: Ինք գիտէ ասիկա...  
Գիտէ որ պատճառ չունի այն միւսներէն նախանձելու... Առաջին անգամը

չէ՛ հեռանալ: Քանի՛ մը ամիս առաջ կրկին պատահեցաւ: Այն ատեն ես նոյն բանը բրի: Երկու օր ամբողջ աշխատեցայ: Իր սիրած կերակուրները կարեւոր եփելու համար ամէն ճիւղ ու ջրանք թափեցի: Սեղանին վրայ ծաղիկներ դրի, մոմեր վառեցի ու երբ եկա՝ աչքերը փայլեցան, ուրախացաւ, հիացաւ. ու հին օրերուն պէս գրկեցինք զիրար: Այսօր ալ նոյնը պիտի ընեմ: Զայնը կենդանացեր էր: Յատկեց, վազեց դէպի պատուհանները ու քաշեց թանձր վարագոյրները: Կիսատուեւրը խուժեց անկիւններէն ու սենեակը մթաղանց:

— Ի՞նչ կ'ընես, — Հարցուցի զարմացած:

— Ապառէ՛, սպառէ՛, — յարեց հեռու ձայնով ու երբ էլեքտրական լամպ մը աղօտ լոյս մը տարածեց՝ ինք անյայտացեր էր արդէն:

Կիսամութին մէջ պատի նկարները խորհրդաւորութեամբ պարուրուեցան ու դաշնակի վրայ Պէթնովէնի դէմքը աւելի մոայլեցաւ:

Կարծեմ ամիս մը առաջ էր, որ Արմէնը տեսեր էի վերջին անգամ.

Վարելի չէ՛ այսպէս շարունակել, — գոչեր էր ու աչքերը կայծեր էին արձակեր, — ո՛չ, կարելի չէ՛...»

Փունտատմ էր ու անվերջ կը ծխէր:

«Պէտք է իր ասրեւակերպը փոխէ, պէտք է տունին կապուի, տունէն ներս կարգ կանոն մտնէ: Երեկոները սեղանին վրայ փոխանակ երկտողի մը՝ տաք կերակուր մը դանձմ, շուրջս զուակներ տեսնեմ: Փորձ, երգ, պար, բեմ, հաւաքոյթ, երեկո՛յթ...»

— Բայց գիտէիր այդ բոլորը, երբ ամուսնացար, — ըսի, — այդ լուրջ քայլը առնելէ առաջ պէտք է խօսէիր, համաձայնութեան մը յանգէրք: Վերտան հեմ, իր այդ շնորհները եւս գեր մը ունեցան, քեզ գերեցին, գրաւեցին... Այն ատեն շատ լաւ գիտէիր, թէ տան կապուած աղջիկ մը չէր ընտրածդ:

— Այո՛, անշուշտ գիտէի: Պոտտայանք փոխադարձ վիճումներ ընել: Կը կարծէի, որ ինքնարբարար պիտի փոխուէր, ասրեւր պահանջներ պիտի ստեղծուէին իր մէջ, պիտի կապուէր ահա: Եւ յետոյ, գիտե՞ս, երբ մարդ կը սիրէ այնպէս՝ ինչպէս մենք սիրեցինք զիրար՝ այլեւս ոչ մէկ բանի մասին կը մտածէ...»

Իր այդ խօսքերը տարին գիս ետ, երբ առաջին անգամ պատահմամբ հանդիպեցայ իրենց ծովափը: Նոր էին ամուսնացած:

Նիւնան կը պարէ ու կ'երգէ: զանազան խումբերու հետ բոլոր մեծ քաղաքները շրջած է, — ներկայացուց Արմէն երջանկօրէն, Հպարտօրէն ու՛ — եկո՛ւր, սա ծովը գիտելով սուրճ մը խմենք միասին ու խօսինք քիչ մը»:

Նիւնան ջերմօրէն, զուարթօրէն կը ճլուղէր. եւ երբ պահ մը հեռացաւ՝ Արմէն գլանիկ մը վառելով ըսաւ.

Վեր լուս, բայց ես կը դգամ, թէ ինչ կը մտածես եւ ամենեւին չեմ մեղադրեր քեզ: Պիտի չաշխատեմ ինքզինքս արդարացին... Գիտեմ թէ մարդը երբեք պիտի չհաւանէր, ետ կեցնելու համար պիտի պայքարէր: Փորձեցի, բայց չյաջողեցայ... Կեանքի մէջ անբացատրելի բաներ կան... Պիտի ուզէի ըսել նախատահմանուած, կարծես պարտադրուած, որմէ խուսափելը մեր ուժերէն վեր է յաճախ: Սրտով բարի, լաւ աղջիկ է Նիւնան եւ վերջին ծայր կապուած ինձի: Առանց պայմանի կ'ուզէր սպրիլ ինձի հետ, բայց խորհեցայ, թէ մայրս շատ աւելի այսպիսի պիտի գտնէր ատիկա եւ ամուսնացայ: Զարմանալի եղաւ մեր հանդիպումը, — ճառագայթեր էր Արմէնի ղէմքը, — այդ գիշեր՝ մօրս յանկարծակի կորուստին ստեղծած վիշտն ու

պարապը Հոգիին մէջ՝ զացեր էի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ներկայացուցիչներէն...»

Նինայի վերադարձով ընդմիջուեր էր Արմէնի խօսքը այդ օր, բայց ինչ որ հետագային լսեր էի Նինայէն՝ մասամբ ամբողջացուցեր էր կիսատ մնացած պատմութիւնը:

«Գիտե՞ս ինչպէս Հանդիպած եմ Արմէնին, — բաւ օր մը երջանկօրէն, — քարեկամուհի մը աւելորդ հրաւիրատուն մը ունէր եւ ստիպեց, որ ընկերանամ իրեն: Արտատուար հաւաքոյթ մըն էր: Ափրիկեցիներ, տարօրինակ տարազներով տարօրինակ այրեր ու կիներ: Կային նաեւ լրագրողներ, մասնաւոր հրաւիրեալներ: Բարեկամուհիս, լատ խելացի աղջիկ մը՝ իր գործին բերմամբ այդպիսի անձերու հետ միշտ չփժան մէջ, հիանալիօրէն կը զուարեանար եւ ամէն անգամ, որ այդ զարմանալի մարդոցմէ մէկը կը ներկայացնէր ինձի՝ փախչելու բուն փափագ մը կ'ունենայի ու դէժքս հաւանաբար կը մտնէր ներքին տաղնապս, երբ աչքերս հանդիպեցան կրակոտ աչքերու, որոնք կարծես կը զուարեանային անհնելով մասնուած կացութիւնս:

«Յանկարծ, չեմ գիտեր ինչպէս, կարծեմ ներքին բուն մղումով մը, իր առջեւ դատոյ ինքզինքս ու սկսանք խօսիլ հին ծանօթներու պէս: Շարունակ խմբիչ կ'անցնէին: Աչք աչքի կը պարպէինք գաւաթները ու ամէն պարպում գաւաթի հետ զիչ մը աւելի կը ծօտենայինք, կը կապուէինք իրարու: «Փախչինք հոսկէ», խնդրեցի ի վերջոյ: Ու փախանք... Այդ նոյն զիչերն իսկ խոտացանք այնու շրջանուիլ իրարմէն:

Կիսամութիւն մը ու զեփուտի նման շարժում մը:

Գրան մէջ, գիշանոյշի մը սարուադիծը, որ իսկոյն կենդանացաւ ու հեղանկուն նազանքով դուրս թռաւ:

Գեղակերտ մարմինը բոսորագոյն շարժի թափանցկութեանը տակ թրթռուն, դէժք՝ երազային, բոպիկ ոտքերը կարծես ամպերու վրայ: Թեւերու ու ձեռքերու հմայիլ շարժումներով կարծես մէկը կը կանչէր, մէկու մը կը ձգտէր...

Կր դիտէի զարմացած, շլացած, յափշտակուած, հիփնոսացած:

Հեղահեղ արագացող, թափ առնող երաժշտութեան հետ կերպարանափոխուեր էր: Դէժքը շառագունած, ամբողջ էութիւնը սիրով բռնկած, վառուող ջրն էր կարծես, գալարուող բոցէ լեզու մը:

Մերթ յուսահատ, մերթ մուկանած ու կըքոտ, մերթ աղերսանք, մերթ ծառայում, բայց ի վերջոյ, պարտուած, պարտասած, կու պար ի յնալ ոտքերու առջեւ:

Այդ բոպէին երեւակայեցի զինք այդպէս սիրայորդ աչքերով՝ Արմէնի ծունկերուն վարած:



Հեռաձայնի դանդաղ արթնցուց զիս այս առաւուս կանուխ: Քնթաթաթ աչքերս ջանացի բանալ ու վերցուցի բնկալուչը:

Գիծի անդիլի ծայրէն պզտիկ ձայն մը նախ, խօսելու ճիգ մը:

— Նինա, դո՞ւն ես, — Հարցուցի զարմացած:

— Չե... կո՛ւ, չէ... կա՛ւ, — կը հեկեկար, — օգնէ՛ ինձի... օգնէ՛ ինձի... Մենք քոնջ մը նման կը սիրէ ու կը յարզէ քեզ... Խնդրեմ, Համոզէ զինք... Համոզէ զինք...

Ու հիմա նստած, միտքս անհամար մտածումներով պաշարուած, կը Հարցնեմ ես ինձի. «Փորձե՛լ, թէ չփորձե՛լ... Փորձե՛լ, թէ չփորձե՛լ...»

Ա. ԱՐՓԻՆԷ

Մ. Պ Զ Ա Ք Յ Ե Ա Ն

— Ամէն անհատ իր շուրջ ունի պատճառ, երբևէն երկու, երբևէն երեք, երբեմբև՝ հազարումէկ, — ըստ Սերոբ գիմարցի նստող աղջկան:

— Ինչե՞ր...

— Պատեր... մարտահանգիւրիս պատը կը տարբերի ուրիշի ճը պատէն: Մէկուն պատը բարձր է, միւսինը՝ ցած...: Սերոբդի ճը պատը պետնին հաւատար է: Մէկուն պատը ժարժարեայ է, միւսինը՝ ցեխապատ...:

— Վե՞րջր...

— Կան հաստ ու նեղ պատեր, կան դիմացկուն կամ խաւաքարտէ պատեր...: Ո՞ճէ՛, ինչո՞ւ չես խմեր...:

— Պատերու պատմութիւնը վերջացա՞ւ:

— Պատերու պատմութիւնը կը նմանի պատերուն... անվերջանալի է...: Մանաւանդ իմ սեփական պատերուս...:

**Պ Ա Տ Ե Ր ...**

Պատերու այս պատմութիւնը երբեք պիտի չուզէր զրգուել Սերոբ, Էթէ չսփէն աւելի խմած չըլլար: Գիմարցի գոյղեր էին: Ո՞ճանք կը պարէին, ուրիշներ ժտեր՝ միկ խօսակցութիւններու մէջ մխրճուած էին: Բայց ամէն անգամ, ոչ Սերոբ կը նայէր այդ ամէնէն աւելի ժտերիմ պարող գոյղին, իր աչքին առջեւ կը պատկերանար աշխարհի ամենահաստ պատը...: Ան շարունակ պատեր կը տեսնէր աշխարհի բոլոր անհատներուն առջեւ:

Պաշտօնական առաջին ժամադրութիւնն էր դիմացը նստող աղջկան հետ ու առաջին իսկ առիթին տղան կը խօսէր ինքնիր մտտին: Ան միշտ զգացած էր, որ իր եւ մարդոց միջեւ, մանաւանդ իր եւ աղջիկներուն միջեւ կը բարձրանային անանցանելի պատեր ու ինք պարտաւորուած էր հաղորդակցելու բոլորին հետ պատերու վրայէն՝ առանց երբեք յաջողելու պատուել, քանզի, նուաճել այդ պատարները...:

— Պէտք է գիտնաս սակայն, որ ոեւէ անձի պատը կամ պատեղը բարձրութիւն կը փոխեն Համաձայն գիմադրին անհատականութեան, Հաղորդականութեան կամ ակարութեան, — եզրակացութիւնը եկաւ գիմադր նստող ազնիւէն... :

Ուրեմն ի՞նչ... : Սերոբ Հաղորդական չէ՞ր : Անհատականութիւն չունէ՞ր :

• • •

Սերոբ ու Սաթիկ ծանօթացած էին ժեքենափորութեան դասեր տուող գրասենեակի մը մէջ : Միտսին գացած էին փորձերու, միտսին ներկայացած թնոթեան ու միտսին ալ յաջողած : Երկուքն ալ լաւ կը վարէին ու կը կարծէին, որ մինչև իրենց կեանքին վերջը ոչ մէկ արկած պիտի ունենան :

— Բայց ես չեմ գիտէի վարպետ վարող եմ, — ըսած էր օր մը Սաթիկ :

— Այդպէս ալ պէտք է ըլլայ... : Պի՛նք Հիմնաբարն է րնտանիքին :

Բայց ի՞նչ ազերս վարողին ու ընտանիքին միջև... :

Տղան ձախող խօսակից մը եղած էր իր ամբողջ կեանքին ընթացքին : Դասարանին առաջինը ըլլալով Հանդերձ, շտաբակի նախանձով կը գիտէր գասարանին ամէնէն ծոյլ աշակերտը, որ կը յաջողէր ժամերով իր շրթներէն կտնել բոլոր գեղեցիկ աղջիկները :

— Ինչի՞ մասին կը խօսին ժամերով... : Ինչի՞ մասին պէտք է խօսիլ աղջիկներու հետ, — Հարց տուած էր օր մը :

— Պարապ բաներու մասին, — պատասխանած էին :

— Պարապ բաներո՞ւ... :

— Այո՛ : Աղջիկները լուրջ բաներու մասին խօսողները չեն սիրեր... :

Առ առաջին իսկ ներկայացած առիթին, Սերոբ սկսած էր խօսիլ եղունգի, մագի, Հազուտի, օգի մասին, բայց...

— Կը բաւէ պարապ-պարապ բաներու մասին խօսիլ, — սաստած էին պի՛նք :

Ուրիշ անգամներ, երբ Սերոբ փորձած էր խօսիլ լուրջ Հարցերու մասին,

ուզած էր փիլիսոփայիչ, արածարանութեամբ ողորկ գիմացի աղջիկը, դարձեալ ծոյն պատը բարձրացած էր իր գիմաց :

— Պարապ բաներ... : Պարապ խօսակցութիւններ :

Իսկ Սերոբ չէր յաջողեր նուաճել այդ պարապը : Պարապութիւնը կը Հանդիսանար իր մրցակիցը ու ինք անճրկած՝ չէր գիտեր ինչպէս պայքարիլ անոր դէմ, ինչպէս ընկճել զայն : Ո՞վ էր այդ պարապութիւնը, որ լեցնել անկարելի կը թուէր իրեն : Ի՞նչ պարապ արարածներ են աղջիկները, կը մտածէր : Բայց ինչպէս այդ պարապութիւնը այնքան մեծ կարելութիւն կրնայ ստանալ, կը զարմանար :

Մեծ խուճրով մը պտոյտի գացած էր օր մը : Առ այդ պտոյտին ընթացքին յաջողած էր մեկուսանալ իրեն անծանօթ աղջկայ մը հետ : Այս անգամ փորձած էր խօսիլ պարապ ու իմաստուն բաներու մասին՝ թեթեւութեամբ, ու գինով իր ըրած այս գիւտով՝ ուզած էր ընկճել զովէն քաջ աղջիկը տաք ու բռնի Համբոյրով մը : Բազմաթիւ Ֆիլմերու մէջ տեսած էր նման տեսարաններ : Բռնի Համբոյրը միշտ ալ յաջողած էր ընկճել յոխորտ ու կարծր աղջիկը : Ան մեծ գոհունակութեամբ գիտած էր մերժող աղջկան բռունցքին թափի վերածուիլը : Ենչաւառ գիտած էր գեղեցկուհիի մը ապտակելու համար տարածուող բազուկը, որուն ձեռքը արու դերասանին ճարպիկ ձեռքին մէջ կը ստուէր ու ատելալիտ նայած քներու փոխանակումին կը յաջորդէր բիրտ ու թուշեայ Համբոյր մը, Համբոյրներ, գիրկընդխառնում : Սերոբ տեսած էր նման տեսարաններ ու կը Հաւատար, որ աղջիկները կը սիրեն բռնի Համբոյրը, բիրտ ուժը : Ինք ալ կրնար բիրտ ուժ գործածել : Սակայն այդ արկածախնդրութիւնն ալ վերջացած էր դէմքին վրայ ըստացած արիւնոտ ճանկերով ու պտոյտը առանց շարունակելու վերադարձած էր տուն ու անգամ մը եւս ինքզինք դստած էր պարապութեան մէջ :



• • •

Հիմա, վերջապէս, գտած էր աղջիկ մը, որ մեծ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր զինք: Սերոբ կը կարծէր, որ զրտած էր մէկը, որուն հետ հաղորդակցելու համար պատեր նուանելու կարիքը պիտի չզգար: Միասին կը տօնէին իրենց վարորդի քննութեան յաջողութիւնը, մոռնալով, որ քննութիւն ու կեանք բոլորովին ասորբի բաներ են, ա'յնքան տարբեր, որքան ինքնաշարժներու շարժումները կանոնաւորող կանաչ ու կարմիր լոյսերը... Մոռցած էին, որ քննութիւնը եթէ կանաչն է, կեանքը կարմիրն է, մտանգը, աննախասեսելին, անընկճելին:

— Կ'ուզեմ տեսնել քեզ...  
— Ու՛ր:

Ուր: Նոյնիսկ առանց կախման կէտերու: Սերոբին թուեցաւ, որ ուրին վրայ նոյնիսկ պարոյկ չկար: Ուրեմն...

— Փարլըմանին զիմաց...

Սերոբ զիտէր Սաթիկին աշխատավայրը: Հետեւաբար Խորհրդարանին դիմաց հանդիպում մը յարմարագոյնն էր:

— Պէտք է դիտնաս սակայն, որ սեւէ անձի պատը կամ պատերը բարձրութիւն կը փոխեն համաձայն զիմացինին անհատականութեան կամ տկարութեան, — կրկնեց զիմացը նստող աղջիկը:

Մոզական ժպիտով մը Սաթիկ տղուն կ'առթէր այն խաբկանքը, որ անոր ուժին ու կրակին զիմաց իր պատերը կ'անշարժան, կը չբանան, կը դառնան գետնի հաւասար ու ինք Սերոբի համար, միայն Սերոբի համար պատրաստ է վերածուելու անցանկապատ այգիի մը:

Սաթիկ կը յաջողէր ներս հրաւիրել Սերոբը ու իր պատերը այնպէս մը կը բարձրացնէր, որ տղուն համար այլեւս անկարելի ըլլայ դուրս գալ:

— Մեզի երթանք:  
— Ինչպէ՞ս...  
— Ըստ, մեզի երթանք...  
— Ձեզի՞...  
— Այո, մեզի:

— Բայց...  
— Բայց ի՞նչ...:  
— Բայց...:

— Մասհողուելու պատճառ շուներս: Մնողքս հարսանիքի դացած են ու ստաւտեան ժամը Ծէն առաջ շեն վերադառնար...:

Ետքաթ երեկոյ էր:

Սաթիկ կիրքի անհղափաղ կշտոյթով մը կը յաջողէր խնթեցնել Սերոբը: Առաջին գոհացումէն անմիջապէս ետք, ան համոզներու անազնաձայն հեղեղով մը կը յաջողէր ընկզմել Սերոբի ժխտական բոլոր գոյանութիւնները, կը խորտակէր իրենց միջեւ բարձրացող բոլոր, բոլոր պատերը... Սաթիկ՝ այնքա՛ն փորձառու, կը փարէր տղուն շրթներուն ու փերով, արժուկներով, կուրծքերով, սրբունքներով, մարմնի բոլոր ըջիջներով յարձակում մը կ'երագործէր: Իսկ Սերոբ մոռցած իր բոլոր գիտցածները, մոռցած իր բոլոր որոշումները՝ անզուսպ մղուձով կը հիւսուէր աղջկան մարմնին:

• • •

Պաշտօնական ամուսնութենէն ճիշդ շաբաթ մը ետք սակայն, Սաթիկ յանկարծ կը կերպարանափոխուէր: Ան մէկ օրէն միւսը կը վերածուէր ստացակոյտի մը, որուն վրայ պիտի փշրուէր Սերոբի սիրով շողախուած համբերութիւնը:

— Պարսպ բաներ...:

Սաթիկն ալ, ինչպէս իր կեանքին բոլոր աղջիկները, սկսած էր իր բոլոր խօսքերուն, իր զգացական արտայայտութիւններուն զիմաց բարձրացնել հասարակաց պատ մը՝ միակ բառով. «Պարսպ»: Ան իրեն հետ թերած էր ձոնին, որուն հանդէպ ցոյց տրուած գուրգուրանքը կը զգուեցնէր տղան: Ժամանակին հետ Սերոբ սկսաւ նախանձիլ այդ շան: Ու իրեն կը թուէր, որ ինք ասարական մըն է իր տան մէջ: Ամէն անգամ, որ փորձէր դուրս բանալ, ձոնին կը սկսէր վայրագօրէն հարել՝ իր մէջ տեսնելով մրցակից մը, թշնամի մը...: Իսկ Սաթիկ փոխանակ իր գալուստը ողջունելու, կը փաթ-

Թըւէր շան ու կը լռեցնէր զայն ջերմ համբոյսներով :

Սակայն Սերոբ կը հաւատար, թէ ջիւղերու ժամանակաւոր խանդարում մըն է անորը, որ ամէն աղջկայ կրնայ պատահել ամուսնութեան յաջորդող ամիսներուն :

— Բժիշկի մը պէտք է ասեմք չեղ... —

— Պարտ'ալ բան... —

— Բայց ինչո՞ւ այսքան փոխուեցար... —

— Պարտոյ խօսքեր չե՛մ ուզեր լսել... —

— Բայց ես կը շարունակեմ սիրել չեղ... —

— Պարտոյ բաներ կը խօսիս միայն... Պարտ'ալ բաներ... —

Պատկերասփիւռին դիմաց նստած՝ Սերոբ աչքին ծայրով Սաթիկը կը դիտէր : Եւրբ սենեակէն յանկարծական լացի մը ձայնը ոչ մէկ ձեւով կըցուտ խռովել կնոջ հանդարտութիւնը : Սերոբ պահ մը համբերեց, այս անգամ ուղղակի նայեցաւ կընտը երեսին, մարդկային, կնոջական, մտեղէն աշխատասերին, որուն վրայ երկարած գուռով միակզաղ աբաշայտութիւնը թանձրացուց իր ջղայնութիւնը : Լացը ճիշի վերածուեցաւ, աղիոգորմ ողբի, բայց կնոջ նայուածքը մնաց նոյնը :

— Պակեքը կուլայ ներսը... —

Սաթիկ նայուածքը շեղեց պատկերասփիւռի պատուանէն՝ անմեկնելի ակնարկ մը շարունակեց Սերոբի վրայ, ոտքի ելաւ ու լկտի քալուածքով մը մտաւ մանուկին սենեակը :

Ձգիտացայ, որ փողոցայինի մը հետ ամուսնացեր եմ, անցաւ Սերոբի միտքէն :

Ներսը Արայիկ կը շարունակէր ճշալ ու Սերոբի թուեցաւ, որ Սաթիկ փոխանակ դիտեցնելու՝ աւելի կը զրգուէր անոր լացը : Ոտքի ելաւ ու մտեցաւ ննջասենեակին դրան :

Սաթիկ մերկ երկարած էր մահճակալին վրայ ու ստուած նայուածքով կը դիտէր առաստաղը, իսկ ձոնին հեշտանքի պահեր կ'ապրէր, մինչ Արայիկ ջղածիգ ճիշեր արձակելով կը փորձէր դուրս գալ փոքրիկ մահճակալի աննուսնելի պատերէն :

— Ա՛լ չափը անցաւ, կը հասկնա՞ս... —

Սաթիկի մօտ ոչ մէկ հակազդեցութիւն :

— Օր մը պիտի սպաննեմ այս շունը. — ըսաւ պոռալով :

Սաթիկ արհամարական նայուածքով շափեց դինք ու աւելի սեղմեց շունը :

Քիչ առաջ, երբ Սերոբ տուն վերադարձած էր, անիմաստ նուէր մը բերած էր իր կնոջ : Ան ունէր մարդկային ակրնակալութիւնը, որ այս ձեւով կը յաջողի յիշեցնել Սաթիկի ի՛ր ծննդեան աստիճարձի օրը, կրնայ վերջ առլ այդ ստուսարտութեան ու կը յաջողի հալեցնել անոր սրբախն ու մարմինն շուրջ կարծրացած սառեալը՝ կախարդական տեֆրոսքով մը : Սերոբ միամտօրէն կը հաւատար, որ իր կինը կը հրաժարի անասնական հակումներէն ու կը վերածուի առողջաստի սենեակի Սաթիկին՝ մեղաւոր մարմնով, բայց անապակ հողիով : Տղան այնքա՞ն պահանջը կը գզար ինքնեկ, անպատշտ, յարգող, պոռթկացող սիրոյ : Ան կ'ուկրնակէր, որ իր Սաթիկը, մատանիի մը փոխարէն այս անգամ իր բաղուկները օղակէ իր շուրջ, անմիտանաւ սէր արտայայտէ, գէժքր ողողէ համբոյններով, թրթուացնէ մարմնին բոլոր թիթիւները ու խորտակէ իրենց միջեւ բարձրացած պատր... : Իսկ աշխարհի բոլոր շքեղ թէ տղեղ պատերը զղուանք կը պատճառէին Սերոբի : Ինք ամուսնացած էր Սաթիկի հետ՝ կարծելով, որ վերջապէս գտած է մէկը, որուն հետ պիտի կարենար հաղորդակցիլ անմիջակա՞նորէն, սիրտէ սիրտ, ու զղացումէ զղացում... : Նոյնիսկ Արայիկը կը ներկայանար իրրեւ պատ : Թէեւ մանուկը լքուած էր հիմա ու կը ժպտէր՝ ակնկալելով, որ հայրը կը փոխադարձէ իր ժպիտը, բայց Սերոբ չէր յաջողեր անցնիլ այդ պատէն ալ անդին :

Ան կը տեսար անցնել Սաթիկի բարձրաբերձ պատէն :

Կ'ուզէր, որ յիշէ, թէ վաղը իր ծննդեան տարեդարձն է :

Մտածումները նոր տողերու նման իրարու կը հետեւին Սերոբի ուղեղին մէջ : Կը վերադառնայ ննջասենեակ, մանուկը կը դետեղէ մահճակալին մէջ, կը մօտե-

նայ կնոջ մահճակալին ու կը նստի ծայրամասին: Կնոջ մերկ մարմինը պահ մը Սերորին մէջ կ'արթնցնէ զսպուած զգայնութիւններ: Նայուածքը կը պտտացնէ Սաթիկի դէմքին վրայ, պահ մը կը յամենայ հոն, կը դառնայ շրթներուն շուրջ, կը դիտէ լայն ճակատը, կ'իջնէ վար, կը հասնի վրդին, կը դանդաղի հոն ու վերջապէս կը հասնի ծիծերուն, որոնց շեշտը ամբարձրէն սեւ պտուկները կը զրգոնի իր մէջ ամբարտաւած ցանկութիւնը, ապա նայուածքը կը հասնի պորտին, կը նաւարկէ դէպի ձախ, դէպի աջ, մինչեւ եզրերը մէջքին ու յանկարծ...

— Կը յիշե՞ս պատերը:

Սաթիկ արճամարական նայուածքով մը պարտազ արաններ խօսիլը կը հասկցնէ ու կը շարունակէ մնալ իր մարմարեայ, սառն մերկութեան մէջ:

Առանց յուսահատելու այդ փորձին ձախողութենէն, Սերոր կը փորձէ ուրիշ յիշատակներ զրգոնել Սաթիկի յիշողութեան մէջ:

— Կ'երեւի զիջ մը գիրքեր եմ: Մասանին մասս կը սեղմէ:

Սաթիկի նուիրած մասանին է, որ այժմեա կախազտնի շուանին օղակը կը յիշեցնէ:

Իբրև պատասխան՝ կինը կոնսակը կը զարձնէ, դէպի ձախ տեղափոխելով նաև իր կողքին մրափող շունը:

Քեանց այս մարմինը ինծի կը պատկանի, այս ծիծերը, այս կոնսակը, այս բուսերը, այս սրունքները, նոյնիսկ այս եղունգները իմս են... Սաթիկ իմս է...: Իմ կինն է: Ես իրեն կը պատկանիմ, ինք՝ ինծի: Իմս է, իմս, իմս...:

Սերոր այս անգամ խօսքը ուղղելով կոնսակի մը՝

— Ժամացոյցս պէտք է ժամադրօրծին տանիմ...

Գարձեալ Սաթիկի նուիրած ժամացոյցն է:

Եւ վերջապէս, Սերոր կ'երկարէ ձեռքը ու մասնորոն կը փորձէ կոր դիմ մը յառաջացնել Սաթիկի մարմինն վրայ, ըսկրակելով անութէն, անցնելու համար մէջքէն ու հասնելու մինչեւ կոնքին գաղաթը,

երբ հաջոց մը եւ ճիշ մը կը միջամանն իր շարժումին: Ետ'անը կը ճշայ, թէ Սաթիկ կը հաղէ...: Սերոր շի կրնար ճշդել:

— Կը բաւէ, կը հասկնա՞ս:

Սաթիկ կը նստի անկողինին վրայ ու կը գոռայ:

— Ձիս առանձի՛ն ձգէ: Առանձի՛ն: Կը հասկնա՞ս:

Սերոր կը փոխադարձէ դրեթէ պոռայով:

— Ձիս խաբեցիր...: Կը կարծես, որ չե՞մ հասկնար... Կը կարծես, որ չհասկըցա՞մ...:

Ու շատ կարեւոր բան մը յիշեցնելու համար, ձայնը մեղմացնելով, թուշային շեշտով մը կ'ուսեցնէ.

— Ձե՞ս յիշեր, որ վաղը...

— Վա՛ղը, փա՛ղը: Վա՛ղը ի՞նչ:

Սերոր կը շլճորի ու օտքի կը կանգնի, Կինն ալ իր ամբողջ մերկութեամբ, առանց խիպի, կը կանգնի անկողինն վրայ ու կը գոռայ:

— Քեզի պէս ամուսին չեմ ուզեր ես, կը հասկնա՞ս, չե՞մ ուզեր, չե՞մ ուզեր...

Արայիկ կը սկսի դարձեալ ճշալ, շունն ալ վերջին յաղթանակին փստակ դոհունակ նայուածքով մը կը դիտէ կրօնը, իսկ Սերոր կը դոռայ զայրացած.

— Ինչպէ՞ս...: Ինծի պէս ամուսին...

— Ձե՛մ ուզեր...: կը հասկնա՞ս: Ձե՛մ ուզեր...: Անհասականութենէ զուրկ մէկը չեմ ուզեր: Միայն պարտալ խօսքեր...

Արայիկ աւելի կը բարձրացնէ իր ճիշը, շունը ձանձրացած կը յօրաննէ, իսկ ներսէն պատկերափոխութիւնը լուր մը կը հազորդէ ֆախախտած օդանաւի մը մասին:

— Կը կարծես որ...:

— Ի՞նչ կը կարծես...: Եթէ ես արդայ ըլլայի, առաջին պահանջս, առաջին պայմանս պիտի ըլլար ա՛յն, որ առանց աղջիկս ինծի պէս չըլլար...: Ձըլլա՛ր: Կը հասկնա՞ս: Ձըլլա՛ր...:

— Բայց...

— Բայց ի՞նչ, ի՞նչ մարդ ես դուն: Ա՛ն գաւազը ու դնա՛: Կորսուէ՛: Մի՛ կե-

նար: Մի՛ նայիր մարմնիս: Մի՛ նայիր: Չե՛մ ուզեր: Գնա՛, գնա՛, գնա՛ կ'ըսեմ:

— Լու՛ն՝ այլևս, անդամ անասուն...

Սերոր շառաչուն ապասկով ժը կը յաջողի ստապալել կիներ, կը յարձակի վրան, մասները կը գնէ անոր կոկորդին ու կը փորձէ խեղդել գայն...: Սաթիկ կը մտաբռնի: Կը ճանկուտէ Սերորին ղէմքը, կը պտտէ անոր շապիկը: Ու փախուստի գիժելով սաքի կը կանգնի, երբ Սերորի երկրորդ սեղան չարուածը դարձեալ կը ստապալէ ղինք ու անկուժին մէջ կնոջ գլուխը կը դարձուի պտտին: Պտտին վրայ երեւցող արիւնի շեշտերը աւելի եւս կը կտաղեցնեն ղինք: Պտտը կը ստանայ անխիթական իմաստ, Սերոր կը յիշէ իր եւ մարդոց միջեւ գտնուող բոլոր պատերը, կը յիշէ իր արիւնտ գէմքը, երբ բերտ չամբոյր ժը փորձած էր կորզել պտոյտի անմահով աղլիկէն, կը յիշէ ստապաստի անարիւն անկողինը ու կը յարձակի Սաթիկի մարմնին վրայ: Սակայն կը սահմուկի: Կնոջ գլուխն չորսող արիւնը ու արիւնը լիզող շունը կը ցնցեն ղինք: Սերոր կիցով ժը ջարդուփչուր կ'սնէ շան ծնոսար, կ'առնէ Արայիկը, կը փաթթէ ծածկոցին մէջ ու կը նետուի գուրտ:

Մտնուկը արտասովոր լուսթիւն ժը կը պահէ: Լայնցած աչքերով կը դիտէ չայրը, որուն կը թուի, թէ աշխարհի բոլոր ճամբաները կը վերջանան պատերով: Պատեր, պատեր, անճամար պատեր...: Աշխարհի բոլոր ճամբաները կը վերջանան արգելիքներով, ցանկապատերով, փաթեղներով...: Սերոր կը սուրայ, կը կրկնապատակէ ղնացքը ինքնաշարժին, կ'արճամարէ բոլոր կանաչ ու կարմիր լոյսերը, կը սկսի մտնուլ նախ Սաթիկի, ապա Արայիկի, ապա իր գոյութիւնը...: Ինքնաշարժը կը թռչի ու յանկարծ, այդ արագութեան մէջ, Սերոր կը փակէ աչքերը, ստուելի եւս կը ճնշէ արտագոցուցիչին վրայ եւ, վերջապէս, վերջապէս ամէն բան վերջ կը գանէ...: Ամէն բան վերջ կը գանէ պարապութեան ժը մէջ: Դարձեալ կը յագթանակէ պարապութիւնը: Կը կթին բոլոր պատերը աշխարհին, բոլոր բարձր ու ցած, չաստ ու ծօսք, մարմարեայ ու ցեխապատ պատերը, կը փչրուին նիթական ու չողեկան բոլոր պատերը Սերորի աշխարհին ու չողեկին մէջ...:

Մ Ո Վ Ս Է Ս Պ Զ Ա Ք Ը Ն Ա Ն

Է. Ս Ա Ր Ա Ճ Ե Ա Ն

**Յ Ա Ճ Ա Խ Ա Ն Ք**

Քող վայրկեանները այս գիշեր  
Յուշեն ինձի յուշերը իմ,  
Քող երկվայրկեանն իսկ վաղանցով  
Դառնայ հիմա դարաշրջան  
Ու քարանայ՝, քարանայ...

Գիտնամ միայն,  
Որ գրիչիս ծայրերուն,  
Ու քառերուս հմայքին,  
Մտքիս ճամբուն. սրտիս կարկին,  
Բազուկներուս կատաղութան,  
Տաք շրթներուս ազահութան,  
Եւ աչքերուս կրակին հետ՝  
Կը հասնի բու պատկերը մեծ  
Իմ սրտ թուղթին....

Գիտնամ միայն...

Այնուհետեւ,  
Խաղաղօրէն պիտի կտորեմ  
Քեզ հալածող գրիչը այս,  
Ապա պիտի պատռեմ թուղթն այս քեզ բացատրող  
Ու հաւաքեմ  
Երկար թէ կարճ տողերս բոլոր  
(Որոնց մէջէն կ'անցնիս դուն միշտ գաղտագողի)  
Խտացնելով քեզ մէկ կէտի՝  
անհունութեան հեռուներուն...

Որպէսզի ալ  
Սչքերը իմ քեզ չորոնեն  
Ու բազուկներս չբացուին պարփակելու պատկերդ հին  
Եւ շրթներս մոռնան ընդմիշտ գինարբունքները անցեալի...

Բայց կը վախնամ որ սիրտս խենթ  
Կրնայ պայթիլ  
Ու թնդիսէն իր ահագին կրնան լուծուիլ հեռուները անհունութեան  
Եւ չբացնել ե՛ւ քեզ, ե՛ւ զիս...

**ԷՆՕ ՍԱՐԱՃԵԱՆ**

Յ. Օ Շ Ա Վ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՄԱՆԵԱՆ

( Վ Է Գ )

Գ.

Ըստ մեզի, թէ Մատթէոս-Սրտալէս-Սիրզէյ Մելիքիանեանց իրական անձնաւորութիւն մըն է: Անիրական պատմութեամբ մը սակայն:

1902ին, Կապպականէն մինչև Գրոպէնտէս (Մաթիկ Մելիքիանեանց հեմարանական, շատ խնամքով սորված էր Մերձաւոր ու Միջին Արևելքներու հնախօսութիւնը, տեղագրական անուններու հին կոչումն ալ գործածելէ ախորժող, գիտութեան մարդու սովորութիւն դարձած խցճատութեան պատճառով), ամբողջ կովկասը, Հայաստանը, Փոքր Հայքը, Կապպովկիան կըտորոշանցնող սա նոր Մարգո-Փոլոն տյնքան շահեկան թուեցաւ ինծի, որքան միջնադարու վենետիկցիին: Ո՛ր հրաշքը պաշտպանած էր զինքը, որպէսզի Այրարատէն Վասպուրական, Սասունէն Կիլիկիա, Իկոնիայէն Բիթանիա, միշտ հետի, զինանշանի մը մէկ բաղկացուցիչ մասին նման սուր իր մօրուքը կզակին ամբասեւեռ, հասնէր ինծի զողջ ու առողջ, զուարթ ու խանդավառ: Հիմա ասոր վրայ մտածելն իսկ սարսափ կու տայ ինծի: Բայց աշխարհը մեն, պարզ իր օրէնքներուն հետ, ջով ունի ուրիշներ, անսովոր, անմատոյց, որոնք նոյնքան ճակատագրական են ու խոտիչ, քանի որ կը խուսափին վերլուծումէ, անբացատրելի ըլլալուն: Ոճիր-արկած շահագործող Թերթօնազիր մը հեշտանքով իր գիրքին մէկ կարեւոր գլուխը պիտի տար պատահարի մը, զոր ունիմ մտքիս մէջ սեւեռուած, անջինջ ու պարզ: 1918ին, Փետրուարին ինծի վիճակուեցաւ ապրիլ արաման փախուստի մը, Թալաթի ոստիկանութեան ցանցէն, Պոլսոյ վրայով անցնիլ Պուլկարիս: Բազաբական դատապարտեալ մըն էի: Լուսանկարս՝ բաշխուած ոստիկանական բոլոր կեդրոններուն: Ձեմ պատմեր հոս, թէ ինչպէս ճարուեցան թուղթերը: Գերման զինւորներու համազգեստները: Բաւ է յայտարարել, որ կատարուեցան բոլոր ձեւակերպական արարողութիւնները, արձանագրութիւնները, դիւանէ դիւան, Միզէճի մեն կայարանին մէջ, ուր թուրքերը հաստատած էին զազանի ոստիկանութեան շատ զօրաւոր Կիւրո մը եւ կը գործածէին իրենց ամէնէն ճարտար որսահանները: Անցայ սակայն, զէմքի զալով հանդերձ պատին փակցուած իմ լուսանկարին: Գերման զինուորի համազգեստը կախարդական բանաձեւ մըն էր, հրաշք մըն ալ սա անշուշտ: Նոյն միջոցով Պուլկարիս ինկած ուրիշներ գեռ չեն մեռած:

Մատթէոս Մելիքիանեանց միամիտ էր շատ ու առով՝ անպաշտպան, ազատել կրնալու համար իր կարճաօտ անձնաւորութեան ընդարձակ ոգիսա-

կանք, մարդկային պատահարին տոգիւմէնքին հանդէպ շատ խորունկ, մտայլ իմ հետաքրքրութենէս, որ գրամուլ, խանդավառ, ցնորական իմ խառնուածքիս անհասնել յատակը կազմեց: Իմ գրական աշխատանքը չի պար ուրիշ ակէ: Բոլոր իմ վիպակները, վէպերը վաւերատիպ անձնաւորութեանց ու աւելի քան իրաւ գէղարու արձագանգներ են: «Մնացորդաց» ուրիշ բան չէ, եթէ ոչ պատանեկան այդ զորուոր ձգտումին պատշանեցումը կենսաբն, այսինքն՝ մարդկային պատահարներու աւելի մեծ թիւի մը, — ինձմէ պահ-ւածին վրայ: Այդ հոգեկան արամադրութիւնն էր, որ զիս ըրաւ լուս, ու-րիշները լսելու ատեն ճարելու համար իմ սա ցանկութեան: Այս արամադրու-թիւնն էր, որ ապրումներու ընդարձակ հոսանքներն իսկ իմ մէջ, շուրջը, դուրսը եւ դասաւորեցի իրր պատահարներու հանդէս մը: Աւրիշներ կը գրեն թերեւս բազմաթիւ ազգակներէ թերազրուած: Ես գրեցի միայն ու միայն մարդեր, այսինքն՝ մարդկային պատահարը սեւեռելու, փրկելու թերեւս մի-անկի, բայց իրաւ, հաստատ առաջադրութեամբ: Այդ էր պատճառը թերեւս, որ ըլլամ Մաթիի մտիկ ըրած:

Տեղի տուի իրեն, ուզածէն աւելի իսկ, երբ սկսաւ իր յեղումը. կոհակ-կոհակ դադափար, տեսութիւն, վարդապետութիւն թափելով զրաւ, տառա-պէս որդելով իմ պատանիի խանդավառ հետաքրքրութիւն արկածէն ու վը-տանդէն, իմաստէն ու կենսաբն, պատմութենէն, ինչպէս երազէն: Հսկայ լուզորդ այդ մեծ ջուրերուն վրայ, անիկա կը յոգնէր ո՛չ թէ կենսաբն, շար-մուտէն, այլ հանդիսաէն: Ու հանդիսաբ պարզ բառ է հոս. այսինքն՝ ա՛յն պահը, երբ փոխանակ տիւնկտիկի, ըլլար առիպուած ինձի սեւեռելու պա-տառ մը կենսաբ, սարուած իրաւ, ան ալ՝ ծածմուած, դժկամ ու յիմար:

Աւանդութիւնը կ'ուզէ, որ ամէն Ազիլէս կրունկ մը ունենայ: Քօսքն ալ՝ կրունկը Մելիթիանեանին: Այնքան ասարուած իր առաջելութեան միւ-տիւնէն, այնքան ինքզինքը պարսպած մարդոց միջին հրայրեանքէն, փակած՝ իր զգայարանները աշխարհի ամէնէն աւագ թելադրանքներուն, ծորումնե-րուն, անիկա մերկ էր մօրէ ծնած տղու մը նման խօսքի հրայրքին դէմ: Ու-րիշ ոչ մէկ ճամբայ, որպէսզի ճարուէին գիծերը, տարբերը, որոնցմէ կազ-մուած է իր սա կենդանագիրը: Առաջին իսկ օրուան վախճանին, յստակ էր իմ գէմ երիտասարդը, որմէ պիտի դային, ինչպէս լուսանկարի մը ապակիին, հոգեղէն անոր կազմը, շիղերու ցանցին շուրջ: Իմ դերը եղաւ օգտուիլ կրնալ այդ հանգամանքէն: Այդ երիտասարդը ինքզինքը տուաւ, առանց իսկ կաս-կածելու, որովհետեւ խօսիլը ամէն բան էր անոր, հոմանիշ՝ աւելորդ չէ ք-սել շունչ առնելուն ու տալուն: Թա՛ւրով, մեթոտով, գինքը մօտեցուցի այն անհրաժեշտ զոհարաններուն, «բնդհանրուն», որոնք կարիք մըն են մտիկ ընողին շարք բողոքի թերեւս, քանի որ շատ շարուած անոր մտածումին բեռը կը հանգչեցնէին գէթ պահի մը համար, անոր ընծայելով պատահութիւն շունչ առնելու (մեր ուղեղն ալ, այսինքն՝ անոր մտածական fonctionnementը են-թակայ է սա բնախօսական իրողութեան), աւելի ուժով դառնալու համար իր ճարտանքներուն: Զեղի գփուար է մտապատկերել այդ ճպտութ, որ լսփած էր իր շրջանին բոլոր ընկերային, ընկերարանական վարդապետութեանց խարն ու կոթունքը (հասկ՝ որմէ ցորենը չէ արձակուած կամին տակ) ու կը հաւա-տար իր դերին, առաջին դարու նորընծայ հրեայի մը նման, Միսիան քարո-զելու իր խանդին մէջ սիրայօժար մեռնելու: Յեղափոխական փրովիակամուն հետ, այսինքն՝ ճիշդ ու ճիշդ միտի նման ճաթելու աստիճան ճոճրուէն յե-տոյ, զրանաթոր, սպասած՝ անիկա քանի մը բոպէ շունչ կը փնտռէր լուս-թիւնէն, որմէ ետք կ'ըլլար մասշնի «արիւնառութեան», անդիտակցարար բանալով ծալքերը իր անհասական կենսաբն, անշուշտ միշտ ժլատ, բայց

միշտ ալ արամադիր այդ զանձինն գտանալու, քանի որ ամէն յեղափոխականի նման կը հաւատար այդ անձին արժէքին: Միւս կողմէ՝ հզօր է հակադրութիւնը, որ կայ հարազատ յեղափոխականը յօրինող զոյգ անձնաւորութեանց խառնուրդ շինքին մէջ: Աւելորդ է խօսիլ վճռական, արքի, արու, հոյակապ երիտասարդէն, որ իր դազափարին համար կը յարձակի մահուան վրայ, իր բոլոր հսերուն պիտաց հանելով իր նուիրումին սիրայի հանդէս: Մեր Հին, մահաւանդ պատմութիւնը բիւրեւ կը հաշուէ անոնցմէ: Բայց զիչոր պիտաի ընդունին, որ յեղափոխականը ըլլալու պարզսիրտ, միամիտ, մանուկէ մը տանի, բոլոր այն մարդերուն վրայ, որոնք իր ամանազիտութենէն կ'իջնան դուրս: Կհանգր ասանցի մը պէս կրելու վարժուած, անոր հետ իր հաշիբ բնորոշ յարգարած հոգեբանութեամբ մը՝ անիկա պիտի նայի իր շուրջի փոքր բուններուն, անտարբեր, գրեթէ սուտ, հեղեղով, ինձիպէսները, ամառի աչքով զիչ ամուսնաները (կ'ակնարկէր գրողաշաները, որոնց դանդաղ կը զործէ երեսակայութիւնը), որոնք կը զրոյն մարդու մը մոյնրովը, տարակներովը, ծնողներուն մասնաշաղկութիւններովը, ծննդավայրովը, շնչին, սփռնէն, ազայական, հենցումենց մանրամասնութիւններով, խաղերով, — բոլորն ալ մարդ մը նիթացնող:

Բերան փոխ մը, հանգիստ մը, շունչ աննել մը, սւրեմն իր անձնականին սա փշրանքները, որոնք մեացին զիչ, յաղեցնելու համար իմ մույլ հետաքրքրութիւնը մարդկային պատահարէն, պատկի դէպքեր (polit fait), որով խանդավառ սկսած եմ մաքիս շնքը: Այնքան ալ դժուար էր զինքը կեցնել փորձել, երբ զազափարները, վարդապետութիւնները «կը հայնէր» (երնել, ցորենով խաւն ծեծըը հովին տալ, հասկէն զատելու համար հատիկը) արտակարգ արագութեամբ: Առջի օրերու ժլտտութիւնը զիչ-զիչ պիտի կոտրէր սուկայն: Յետոյ զազափարներու արտաբերումին համար իր վարժ յեղումը անզգայարար կերպարեց իր սօր, երբ ան մօտեցաւ անձնական տարբերութեանուններին: Յոգնեցնող, առտարան իր սօր, այդ ժլտա ինքնասփռումը ունեցաւ իրը հակապի գրուագում մը:

Դուք, որ կը կարգաք սա սողերը, ինքզինքնիդ կը տանիք հեքիաթին, լեռնային քարայրի մը ներք, տարօրինակ կրակի մը առջեւ օրեր երկարող սա վերլուծումին նոյնքան տարօրինակ յայտնութիւններով: Բայց եղէք ուշադիր: Յեղափոխական Մաթիկները, զէթ անոր դպրոցին խլեակները Սփիւռքին շատ մը հայաշատ կեդրոններուն վրայ կ'ապրին սակաւին: Ես հանդիպած եմ անոնց Երուսա, Ասիա, Ափրիկէ: Ու նոյնն էին բոլորն ալ, իրաւ է թէ դահազուրկ արքաներու նման աղօտափայլ, բայց իրենց հաւատացողներուն ձօտ վայելելով նոյն անպարփակ հիացումը, զոր սենեցաւ ինձմէ ներս, 1902ին մեռնող Մաթիկ Միլիթիանեանցը:



Չեմ գիտեր ինչո՞ւ խուսափեցաւ ճշգիւն, յստակ յայտնելի իր գեղին, ծննդավայր գեղին (չէր կրնար քաղաքացի մը ըլլալ, այսպէս ուղեցի, առաջին իսկ բուպէին, իմ ալ ծնունդիս, որ տեղի ունեցած է քաղաքի մը մէջ — ու մանկութիւնս ու պատանութիւնս — որոնք անցան գեղին մէջ, զիս յօրինելով տարօրինակ գեղացի մը, մէջէն անցած քաղաքին — ու զարդացումիս (մարմնական) հանդիտութիւնները արդարացնել ջանալով իր վրայ: Քաղաքացի մը շէր կրնար ըլլալ սա երիտասարդը, հակառակ դիմադրեաներուն նրբութեանը ու խօսուածքին ազնուականութեանը անհերքելի վկայութեան) իրական անունը, սր միշտ յածեր է իմ յամեցուն հետաքրքրութիւն



նր ամէն նոր դէմքի առջեւ, հողին հետ հաղորդ ազգակներու դրութեան մը հաւատարիմ մինչեւ այսօր: Գէպի ծննդավայր ամէն հարցում, շեղում, ա- նիկա միշտ դիմաւորեց վեհաշնչաւ:

— Կոմիտայից:  
Ետեւէն կարճ ու վտեմ՝  
— Պրծաւ զնաց, էլի:

Իր ծննդավայրը լսող ամէն զեղադիտի յատուկ յսկանական խուսափու- մով մը: Տարիներ պիտի հարցնէի ես ինծի, թէ ինչո՞ւ այս ազան կ'ուզէի զեղէն: Գեղացի՛: Ինծի՛ պէս: Ինքնազնահատուծի տարտամ ստուեր մը եր- բմն լուծում մը հարեց, բայց յիմար լուծում մը, արուամ ըլլալով խոր այն արհամարհանքը, որը ես ունէի ինձմէ, այնքան կանուխ, իրբեւ մէկէ մը, որ դատապարտուած էր, իր երազներուն ներքեւ զբաշուելու վարձ, թոխիքի տեղ սողալու՝ կեանքի ճահեմին: Այսպէս է կեանքը:

«Յովկատից» ուրեմն:

Դժուար չէ մեր հայրենիքին լեռնադիր մէկ անուշիկ դիւղը կամ Ա- րարսր եզերող բլուրի մը, զարդանակի մը նմանող աւան մը աւելի առջեւ բերել, անոնցմէ կազմելու համար սա երիտասարդին անդրանիկ տասնամ- եակը, որոշ բարեկեցութեամբ (չիշեց, թէ հայրը այդի ունէր ու իրենց զե- նին՝ անուն) ու գործիլ դերէն, ճակատագրէն, որոս իր մայրը այնքան սրբ- առու ու երազանքով թել-թել, տախտակ-տախտակ յորինէր էր իր բալիկէն հասուկ տարիքին համար, թերեւ ընարած ալ դակից կամ մօտի ուրիշ ուսու- նէ մը քաղցրաւուի աղջնակ մըն ալ, որ պիտի անցնէր հայրենի սեպիսին, գր- բաւելու իր տեղն ու յաւերժելու արեւին կերպարանքները:

Կոմիտայ, այս դարու սկիզբը, իմ մտադալ զգայնութեանս համար ան- տարազէի, համապարփակ խորհուրդ մը, հոգեբանութիւն մըն էր: Մաթիկ Մեխիքիանեանցի պատմումը ինծի բերաւ բարեքը այդ Կոմիտայ աւելի յատուկ տեսնելու ինձմէ ներս: Պարզուեցան ինծի համար բաներ, որոնց հանդիպե- ՚ի իրենց զրականութեան մէջ, բայց չէի հասկցեր: Անոնց արտայայտու- թեան անկանգնելի աղբաւորութիւնը, մերինին տարազէ պ խնամքին ու բռնադ- բօտութեան դէմ դատեր էի մերինին լափ գրական, այսինքն՝ արուեստու- կան: Անոնց ժողովրդական աւելը, մա՛նաւանդ երգերու մէջէն, դատմ էր սիր- տըս, բայց տառապանք առթած ուղեղիս: Մաթիկ Մեխիքիանեանց բարեքը ը- բաւ մա՛նաւանդ ինծի մօտեցնելու, սիրելի ընծայելու արեւելահայ վէպին արժանաւոր բարեխաւնութիւնը, հակառակ անոր, որ հոն գործող տիպար- ները կնիքին ասկն են ծանր կազապար զարձող իրապաշտութեան մը: Ոչ Մա- ժուրեանի յիմար հերոսները («Անգլիական ու հայկական նամակամիջներուն վիպաչին մտերը, ու ինքը՝ «Ան լեռին մարդը» ամբողջութեամբ), ոչ ալ Տիւրքի նոյնքան կեղծ հերոսները («Մայտա», «Արաքսիս», «Միլիտան») անկարող էին դիմանալ արեւելահայ վէպին ամէնէն խոնարհ մարդոց իրա- լութեան առջեւ: Աւելի՛ն՝ այդ մարդերը, այսինքն՝ Բաքի, Երրվանդա- դէի, Մուրացանի, նոյնիսկ Պոչեանի հերոսները չէին զգլխից վերաւոր: Իրենց անբաւականութիւնը, անխնամութիւնը դադարեց մը չէր ինծի, բայց որքան սխուր, թեթեւ, զեկէի, երբ բազմատուէր արեւմտահայ վէպին ան- բնականութեան, այլանդակութեան հետ: Մարդիկ կ'ապրէին ու կը հասկնա- լին իրենց ապրումները՝ վիպասաններուն տաղանդին թուր միջականութեան- ցը ընդզէմ: Սա պարագան արդիւնքն էր անուշա մեծ, բարեբաշի, թուրքէն բոլորովին տարբեր քաղաքակրթութեան մը, ուր փոքր ժողովուրդները կը շարունակէին պաշտպանուիլ իրենց կարգ մը հպարտութիւններէն: Կէս դա- բու աղբեցութիւն մը մեր լալկան հոգիին վրայ երեւան կը բերէր չէն, խա-

զազ, հոգի ու լերան զգայութիւններուն ինքզինքը տաճար բնծայող յատակ մը, ուրտա մը: Կովկասը քաղաքական հալածանք բլլալէ առաջ, երկիրն էր աւազներուն ու գողալիներուն, լեռնական բարբերուն ու բացսիրտ, աննենդ լէրներուն: Մաթիկին յիշումը խոշոր չափով մը կը թելադրէր առաջ թաթը, սողնիկներու, կիներու, շինուփիկներու ուրուստուերներով: Բայց ասկէ առաջ, այսինքն՝ առաջ պետական գրութեան եւ յարակից կողմակերպութեան շարիքէն առաջ (այս է առաջ բռնապետութիւնը) Թուրքերէն ու պարսիկներէն հառաճուած հայ հայրենիքին վրայ շողացեր էր պայծառ, հաւատարմոր, քիչիկ մը զգայնոտ հողերանութիւնը սլաւ ցեղներուն, որ իր քաղաքական անընդունակութիւնները տշտը կը քուէ, անկոտորան, դերման հողերուութիւններուն առջեւ ասկաւ նահանջող: Հոս չեմ կրնար լայննալ 1900էն առդին, աւելի ճիշդ՝ 1914էն առդին ամբողջներուն ժառանգուող պատարանքի էլիքներուն աճան յիմարութեան: Կը ճանչնամ արեւմտեան մեծ ազգերուն ո՛չ միայն մշակոյթները, այլև անոնց անհասանելի բազմութիւնները: Գոյն Թափած էին առաջ աղետականութեան, քաղքենի աւագ կարգին ամենապան ներկայացուցիչները: Ու մարդ կը համակրէր այդ արեւարին անհուն գժբախտութեանցը դնով անոնց բարձրակուսակ մեղքերուն ու կը մտար զգոյլ, կասկածոտ հրահրայիններուն (not-dique) թերկուած աւաքներութեանց: Մլաւ հողին մօտ է հայու հողին, հողային մօտիկութեան մը, զոր նոր բառ մը (tellurique) թերեւս կը բացատրէ: Աս էր պատճառը, որ Նալպանդեանցը առաջ քաղաքաբարբարութեան զինակիր մը բլլալը գոհողութիւն մը չնկատեց, իր ժողովուրդէն խլուած իր սժերուն գործածման մէջ իր վատեան հասնող վերածելով ժողովրդային հանգանակի մը: 1850էն առդին, արեւելահայ երթոտարողութիւնը — մասաւորականներու փողանցը — իր անուղբ, ոտկորները ճարեց այդ հողերանութեան մէջ: Բայց մեր յեղափոխականները առաւելին շտրվեցան անուշտ իրենց ազգը սիրել եւ անոր համար գոհուելու յօժարիլ, բայց սորվեցան աննոցմէ — մեղքերէն դուրս — գործելու, գործողութեան կիրքը, որ առանմին իրականութիւն է: Կը բաւէ բաղդատել 19րդ դարու երկրորդ կէսը արեւելահայ ու արեւմտահայ կեանքին, համոզուելու համար, թէ որքան հզոր միջամտած է սլաւ հողին<sup>(\*)</sup> մեր ամէն արտայայտութեանց մէջ:

Վնովկասից, ուր միայն նոր քաղաքներ չէր, որ կը բուսնէին քանի մը տարուան մէջ, ինչպէս սովորութիւն է դատել առասկան շինարարութիւնը, Ասիան շէնցնելու յաւակնող ուղիին ծնունդ: Այլևս մանաւանդ կը ծնին մեր լեռներուն մէջ չերքէզ դիւզակներու նախատիպ գեղեցկութիւնները, այն ազդիկները, որոնք կը կենան խրճիթի մը դրան, մեռքերնին իրենց փորին ու կը նային հիւրին, ճամբորդ արեւնի մը նման տաք-տաք իջնելով երակներդ ի վար: զաղթական (Թուրքերոյ մէջ) այս ցեղին համար, մօտ գեղեցկութիւնը կերպարանք, մեւ բլլալէ առաջ՝ ներքին զգայութիւն մըն է, քնախօսական ու ատով անվերածելի: Լեռներու պտուղները առոյգ են ու առողջ ու անոնց համար, ջերմ, թոյլ, յամեցուն, ծաւալուն բանէն, որ դաշտերուն գիրութեանէն

(\*) Կը գգուշմամ շատ յստակ վճիռներ, աֆորիզմներ առաջարկելի ցեղերու հոգիին վրայ, ինչպէս կ'ախտթոյն բնիլ գերման մտածողները (Ռեյդերիմի, Շփնկիլեր) փորտաթը նր կը շմամ ուրծուրիլ, խոր հմուտքեան մը ճգտառովը: Իրողութիւնը այն է, որ արեւելահայ երթոտարողութիւնը — կազմակերպիլը հայ հոգիի ճար յղագրէն — աշակերտ է ռուս աւանդութեան: Արեւմտաստիպը անգտտ կերտներ եւ սարտի կազմակերպութիւններ միայն կորողացան առ ընդ: սպասիմ:

կ'ստնէ իր հեշտութիւնն ու յորդութիւնը: Նոյն այդ գեղեցկութիւնը, այն դարու սկիզբին, ատեն չէր դատած դաշտայնանայու, քանի որ այդ գիւղերը կը պահէին իրենց tellurique համերը, զարկերը: Թուրքերէ ճնշուած ժողովուրդներու մէջ գեղեցկութիւնը դժբախտութիւն մըն է, իրական ցաւ մը, ամէն մարդ գիտէ ինչու, բայց զիշեր գիտեն, թէ նոյնիսկ թուրքին հասողութենէն ազատ ցեղերու մէջ, միշտ այդ երկրի երեսին, գեղեցկութիւնը դարձած է սրբաբնութիւն է...: Մինչ Մաթիկ Մեխթիստեանց իր «Կոմիկասք» կ'ուզէր, նա կը մտածէի մեր ճակատագրին, մեր արջիկներուն, հոն՝ Արարատի ու բարձր ուրիշ լեռներու թափերուն, ուր կը պտտին, ասանց ահի այդ լեռներուն արջիկները, որոնց երեսին անաղաղա ինչպէս վառը կը վառի արիւնք, ինչպէս հողին միւսին մէջ շրջուած վարդի մը, բարակ, իմաստուն, ինքնիշխան բաւազ: Ո՛վ մեր պատանութիւնը: Գեղի շարունգաւ բարձր նայու նման արջիկներու ետեւէն, վասնի ստոյգ էր պատուհասուած այդ սրբապղծութիւնը բնիշ յանդգնողին: Եստ, չա՛ս էին իշխանուհիները, որոնց անցքին պարտաւոր էի աչքերդ խոնարհել գետին, այլապէս սեւամորթ ներքիններու մարտկներ կը ճգմէին անխորհուրդ նայուածքիդ հետ, զի՞թո՞ւ ըրբանդ: Քանի՞-քանի՞ պատանիներ վրայ տուած են իրենց աչքին պտուղները: «Կոմիկասք», ուր գինի խմելու համար մարդ պիտի չվախնար բանա առաջնորդուելէ, հայհուտուելէ, նախատուելէ ու ընդդիմութեան մը պահուն ալ չենք-չնոր՞ք շարդուփուր ինչպէ: Ուր երգելը մեզք չէր, մասցու ահասկէն, թե՞ ընդ տուելէ, տեղէն, դաւկըներէն ու ջրող աքսոր՞ դէպի Ափրիկէ, արեւէն մարուելու ալ անվերադարձ: Անծանօթ չէի Միսիւրիային, բայց ունէի բաւական հասունութիւն բարձր գետեղիու իր ճիշդ ոլորտին մէջ, թուրքիոյ մէջ Միսիւրիան ամէն գիւղի սահմանէն կը սկսէր:

Ըսի, թէ խուսափեցաւ ճշգրիտ իր ծննդավայրը: Բայց թարմ, գունազեղ կենդանութիւնը իր կարգ մը զգայնութիւններուն պերճաբաւ էր շատ: Քաղաքի աղայ մը լեռ մը իրբեւ պատկեր կը զգայ ու կ'արտայայտէ: Իր գրտայրանքները, առաւելապէս մորթը կը մատնեն օտարը, հանդիսատեսը, հիւրը: Լեռան աղուն ձայնէն իսկ լեռ կը հատի: Զոր, գետակ, ձիւն, կանանչ արօտներ, անձուն ծաղկատանը հայ հաստամեաներուն, ջուրեր, լիճեր՝ իրբեւ փրանք անոր քաղաքական, ընկերարանական ընդլայնումներուն մէջ կը թռչին յանկարծակի, թելադրելով հոգեյատակը, որ գումարն է այդ զգայնութիւններուն: Ըսի, թէ ուր կը տարբերի քաղաքի տղան գեղացիէն: Առաջինը թատրոն, խաղ, գպրոցական արշաւներ, օդափոխութեան պատկերներ միայն պիտի յիշէ, երբ մեծնայ: Մաթիկին անդրանիկ աշխարհը խաւարած ամայք մըն է: Բայց անոր յուշերուն մէջ նա կարծեցի հաստատել հետքերը, փոքր ու անջինջ, այն զրկանքներուն, որոնք շինել էին իմ ալ մանկութիւնը, ուր տիրական նոթ է, աշխարհ չաղաքը: Ու ի՞նչ քաղաք: Իմ գրականութեան մէջ այդ քաղաքը թուրքով է պայմանաւոր: Ու անոնք, որ հարիւր տարի յետոյ պիտի ենթարկեն հաշուարկարի արեւմտահայ գրական արդիւնքը ու դատարեն անոր մէջ հայ հոգիին երեսները, անարդար պիտի ըլլան, երբ իմ քաղաքը մերժեն իմ գրականութեան, այն դիտար պատմաբանով, որ անոր մէջ տիրականը թուրքն է: Կ'ընդունիմ, որ թուրքերուն քաղաքը արեւմտեան քաղաքը չէ, ան՝ որուն կը հանդիպինք Արեւմտաքի վէպերուն մէջ: Բայց ստիպուած եմ աւելցնել, որ այդ միւսէն շողուած ու մորթուած կոյտերու արիւնով զոյնի ելած իշխանուհիները գեղ, լիւն, արա, դաշտ, այգի, այսինքն՝ շարժուածի ելած հայեր էին ու իրր այդ անցած են իմ գործէն ներս, որոնք թուրքէն շատ անդին ինկող սպրուսներ են: Տակաւին կը զգայի անորակելի այն լքուած, աչքէ ու սրտէ հեռութիւնը, որ մեր մանկութիւնն էր մեր հոտին, ան-

Հայր կամ անձայր, երբեմն երկուքն ալ միասին: Ո՛րք մը: Ուրիշ ի՞նչ կըր-  
նան ըլլալ բոլոր անոնք միւս բախաւորներուն պէս պուտ-պուտ, կարգով-  
կանոնով չհասունցած, մեծերու շուքին, ճարելով կեանքին բնուր կրելու կա-  
րող ուսուցանող, շիզերու ցանդը, զոր մէք անդրանիկ յուզումները կը հիմնեն  
(հիւսնէ): Ու շունեցան մեզ իրենց կապող, բայց անդարձ ուժով՝ այն զգա-  
յութիւնները, յետոյ զպացումները, որոնք աուն մը, ըսել կ'ուզեմ՝ բնասնիք  
մը, այսինչ թաղին ժամայասակ կնիքովը կնքաւոր առարկան կ'ընեն: Հայ-  
րենիք գաղափարն ալ ուրիշ տեղէ չի մեկնիր: Ու որք է մեր ժողովուրդը ո՛չ  
միայն այսօր, այլեւ երէկ, զար մը, զարեք առաջ ալ: Ու որքեր են տակաւին  
բոլոր արժատախիչ ազաքը, որոնց համար կեանքը անդէ մը, հողէ մը չի  
սկսիր: Աւելի ետքը գտայ, որ մեր բոլոր գործիւնները, յեղափոխականները  
կ'իյնային այն նկատումին շատաւիպին: Ո՛րք մը, — պէտք է կրկնել հար-  
ցումը. — Մաթիկ Մեղիքեանեանցը: Ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ ու երկտասարդը,  
որ քարայրի մը փորը ինքզինքը կը զգար իբրեւ իր տունին մէջ, մանաւանդ՝  
կուշա էր իրմէ, քանի որ առատ էին իր ամբարները: Աւելի ետքը, այդ օրե-  
րէն սակէ քան մը տարի, եւ հանդիպումն ըրի իր նմաններուն, անհուն ճը-  
պուսներ, համայնավոր, ասկիւստի վարդապետութեանց վրայ լայնատա-  
րած իրենց բառերով, մամեր ու մամեր, երանելի, ինչպէս անսպառ, միշտ  
վերջին բառին լարած իրենց բոլոր ուժերը, իրաւունքէն, հմտութենէն շտա  
անդին ինկող սփիստութեամբ մը, որ չի զարմացներ զիս այսօր: Մաթիկ  
Մեղիքեանեանցին ամէնէն հետու յիշատակը իր մանկութենէն (միշտ ալ պի-  
տի հարցնէի մարդկային պատահարը տարօրէն լուսաւորող ստ եղբարկուս  
հարցումը վէպին, ինչպէս իրականութեան մարդերուն, հոն կարողալու յա-  
ւակնութեամբ թերեւս ամէնէն անսուտ վկայութիւնը յարափոփոխ պատկեր-  
ներէ բազմաբուսած վերացական յղացքին. — մարդուն): Եւսիւր, մի մուք բակ  
էր, տանիքէն միայն լուսնալու արտօնուած: Դէպք, իր այդ վկայութեան  
վրայ յաւելում՝ չորս պատ, երբեմն քարով, երբեմն հող-աղբուսով, աւելի  
յաւախ՝ կաղնիի օտտերով հիւսուած, իրար բռնող՝ իրենց շրթներէն: Ան-  
շուշտ գետինը թրծուած հող, որ աստուէ տարի կ'ամբանայ: Բացէք ծակ մը  
զազաթէն: Դուք կ'ունենաք այն խշտին, որ լոյսին բացուեցան աչքերը մեր  
որբերուն: Թերեւս օր մը պատմեմ այն քունն ալ, ուր իմ մաման զիս իր պը-  
լուպին փաթթելով դբած է միակ առարկայ հացի տաշտին մէջ: Կր պակսէր  
օրանը: Օրան իսկ չեն ճանչցած իմ սկստները: Ու ասիկա արեւելեան մեծ  
քաղաքի բոլոր փարթած պալատներուն կողքին: Անիկա շրանածեւեց պատ-  
ճառք այդ կերպ լոյսին: Ինչ փոյթ կ'ովկասէն զայր: Կարիք ալ չկար բացատ-  
րութեան, զի ես գիտէի, մեր բունիկէն, հոյաչէն թաղի մը ծայտին, հան-  
ւած, հրդեհուած սպարանքի մը աւերափայլէն, զոր շուններուն ժանիքնե-  
րէն կը խնչին մեր մայրերը, կը գոցէին ինկած աղիւսներէն գոյացած ծակու-  
ծուկերը պատերուն, վրան կը նետէին փողոց ձգուած թիթեղի թերթեր ու  
կը ծուարէին այսպէս ստեղծուած պատսպարանին ներք, երեքը, չորքը  
լայն-լայն անցնող իրենց զակընները անօր մէկ անկիւնը զետեղելով վրայէ  
վրայ: Առջի մեծ պատերազմի վախճանին, Պոլիս շատ-շատ էր թիւը այն  
կարգի բնակարաններուն: Երկրորդ մեծ պատերազմին սկիզբը Փարիզ տար  
ժառիկ պատկերներ զետին արժուկներուն ծոցը դարձնալ տեսայ: Յիսուն-  
փաթսուն տարի առաջ, Պրուսայի մէջ անսովոր չէին այդ թշուառութեան  
բոյները: Օրուան հացը երբեք զինը չէր օրուան վաստակին, նիւար ու պա-  
տահական: Մենք կ'ուսէինք փիղերու պէս, ինչպէս կը պատկերեն տարւոք-  
ները մեր ուտելու անպթութիւնը, անկշտութիւնը Աստուծոյ մէկ նոր պատու-  
հասը դաւանելով: Ո՛չ շորը, ոչ ալ պաղը այդ բոյներէն ներս շունէին ընե-

լիք: Ինչպիսիք թուղթը շատ-շատ քանի մը օր, ձիւնին կատաղած պահերուն...  
 Ուրիշ ի նշ կրնար բլլալ Մաթիկ Մելիքեանեանցը (անիկա խուսափեցաւ իր  
 մականունին հիմնական մասը՝ Մելիքը պաշտպանելէ, ինք՝ որ դասակարգա-  
 յին անարդարութեան դէմ դրոճ էր բացած այն մատաղ եռանդով, ինչպէս  
 ուրանայէ) այդ խաւար-բակ սենեակին մէջ, ուրկէ մարդահասակ դուրերու  
 մարմինները, հակայ յետոյքներու վրայ պըպզած կուռքերու նման կը նստէին  
 անոր ալ միաբեր բակին, իրենց թերանին վրայ դիտարկի պէս կրելով շրջուած  
 գրիւթ, լեցուն՝ գոյն-գոյն հեղուկներով, Այրաբատեան Հայաստանի ամէ-  
 նէն հին ու գոգոր արհեստը պատմող: Համար: Ի՞նչ յիմար եղաւ Մաթիկ Մ-  
 լիքեանեանը, կարծես ամշնալով այդ մարդը զննել այդ դուրերուն խոր-  
 հուրդին մէջ, երբ մելիքութեանը կը թելադրէր ուրիշ աշխարհ, ուրիշ ար-  
 ձակութիւն: Լուց անիկա: Ես յորինեցի այդ մարդը: Քիչ մը հօրմէս, քիչ մը  
 ալ դրացի էպիկէլէն փոխ ասորբեր առնելով ու նետելով անոր կենդանագրին  
 խմորին: Էպիկէլը — ուստա, ինքնատիպ, լեզուն բերնին դարձող ու սասա-  
 նին շափ հնարածիտ յանախորդներուն աչքերը շլացնելու ներքին իր սեփա-  
 կան խառնուրդներով — կանուխէն կուզ կապած, գուրբուս անդունդներուն  
 վրայ ծոռիչն-ծռիչն: Անշուտ: Մաթիկ յիշեց իր ուղեղին փակած պատկե-  
 ըր անոր մտանքներուն, որոնք երբեք յեղան գոյնովը ուրիշներուն: «Ճերմկելը»  
 մտայող այդ մտանք՝ բայց չյիշեց անոր մայրը, աչքերուն գոյնը, հողիին  
 կերպարանքը, այսինքն՝ այն ամէն անկուռի տարբերը, որոնք անհիմ ար-  
 ասածորումը, ասարկայումս են ինքնիմէն ու բերեղացող, մանուսնդ մա-  
 բող հոգեյաստակներու, եւ որոնցմով մանուկը քիչ-քիչ կը սասանայ իր հայրը  
 հոգեպաշտ, ըլլալու համար պայն լիութեամբ, երբ աւարտի անոր կազմաւոր-  
 ման հրաշքը, անկի սասնե-սասնը՛նդէն ետք, երբ թանձրութիւն ճարին  
 ընկալուչ անոր ջիգերը, կրել կարենալու համար անհուն ծանրութեամբ այդ  
 պատկերները: Մաթիկ Մելիքեանեանը, հակասակ բշչկական ճիւղի մը ոպա-  
 որ բնիւն, անտարբեր էր այս ամէնուն: Անիկա չըսաւ հիւսնուրութեան իր  
 հօրը, որ մեռած էր, մենէ շատերուն հայրիկին նման, ելած շալակը շորտ  
 մարմարու ու ա՛լ շարձած, ճիւղ ինչպէս էր պատահածը իմ հօրը, որուն  
 հիւսնի պատկերը շունիմ մաքիս մէջ քանդակուած, բայց ունիմ դազադ  
 մանելու տեսարանը, շորտ մարդոց շալակը ելլելու միւս տեսարանը ժօրս բո-  
 պիկ ճոռոցին մէջ, երբ պիտ կը ձգէր ինծի ասորնիկց աղջկան մը խնամքին ու  
 անձրեակախառն ճիւղին ասի կ'ըլլար աներեւոյթ աչքերէս: Ի՞նչ անուշիկ աղ-  
 ջիկ էր այդ պուպրիկը, որուն գոգնոցին գրպաններուն շաքար ու նուշ ու սուղ  
 շորեղէնները, յամիչէն ու արմաւէն սկսեալ, պարպիլով զանոնք իմ սպաշա-  
 հար ուրախութեանս: Ու խաղ ու խնդուք: Պէտք պիտի ըլլային սա եղերա-  
 կան, անդարմանիկ տեսարանները, որպէսզի իմ անօթի երեսներուս քիչիկ  
 մը մպիտ բացուէր: Հէ՛ջ աշխարհ: Քեզ ա՛մ է շինիր այսպէս անիրաւ: Հիմա  
 երբ սպասած անուշն ու կուշտ, զրկուած հարուստին այդ աղջկան սփոփիչ  
 ներկայութեանէն, մութէն վախցած ու ասկաւիս այցուած աւելի մութ բանե-  
 ըն՝ ուղեցի յամառ ու անգութ լացով մը ուշացած պապան, թղկտելով ինք-  
 գինքս ու թղկտելով սիրտերը մամա շրջապատողներուն, իմաններ, հասուն  
 աղջիկներ, մանարանին տէրը, աղաքը, պուպրիկը, որոնք իրենց ապարան-  
 քէն վազեր էին մեր հիւղակը լացէս սարսափած, նուազած ինկող մամա  
 սթափեցնելու եւ համարողով փակելու վշտին մանրիկ, բայց անդուսպ փող-  
 բակները... իմ բերնին: Ողջերուն համար մահը դաման են ըսեր ու ոնցեր:  
 Մահը ամէնէն խոր փորձառութիւնն է կեանքին, պայմանով, որ ասացուա-  
 ծէն զնշուի բաժինը կրօնքներով, դրականութիւններով, արուեսաներով ա-

նոր ներքո զհանդուած Հասարակ տեղիքին: Ձայն կ'ապրինք անուշտ քիչ մը ամէն օր եւ ամէն տեղ: Բայց շատ քիչերու վիճակուած է ճակատ ճակատի կենալ անոր Հեա: Մա՛ւր դառնագոյն փորձառութիւնն է, որուն թուրայէն անցնող ողջն է միայն, որ կը Հասկնայ անոր ահաւոր տոնգծուածը: Ոչ մէկ բնագոյնական շահարկում սա տողերուն ետին: Ոչ մէկ փարատաբնաւ նրբախուզութիւն, որուն ճամբով երբեմն խորհողներ կհանքի պատկերներու կը Հասնին: Բայց զայն լիովին զգալու Համար անհրաժեշտ է Հասուննալ, զգացքն կ'ըսէ՝ գաւալ մը քաղած քլլալ: Այդ է պատճառը, որ ահա ժողովուրդը անկէ միայն իր կըցածը, ուզածը Հասկնայ: Այդ է պատճառը, որ թուրքը զայն վերածէ իրական orgiesի...: Մեռած էր Հայրն ալ Մութիկին, ձգելով իր աղաքը, իմ Հօրս պէս, անոր մամային, սեւերով կնիկ, իմս փոր կրնունէն, անորն ալ Հաւանարար ծօտիկը այդ թիւին:

Ու թող մեծնան անոնք, այդքան կանուխէն Հազարդ քլլալով մահուան Հաւատար տխրի ցուին: Ողբերգութիւն էր փոխ-նացը, զոր մեր քաղաքներն շատ չի Հասկնար: Այլ'արը փոխած Հեքիաթներուն աշխարհը, որդէնոր մեղ քլլար կարելի Հանդիպել անոր: Ու մութին ելլելուն՝ ես ափ կ'առնէի մեր թաղէն անկին — որուն բոլոր տունները վճարուած — ուրիշներու գուռ ու փոխ կ'ուզէի, ամէն մարդ զխալը, թէ ինչ կ'ուզեն առանց Հօր աղաքը, մութը կրնան լուսն... Որբութիւնը՝ Հաւատարութիւն, որուն մէկ եզրը մինակ է կնցած այդ դժբախտ մաման: Որ պէտք չէ մեռնի, մահը խորելով աղոցը սիրոյն: Աս է պատճառը, որ այրիները կատարեն շորս կնիկի գործ, յոգնել չզբառնան ու շահին, պարտկեն ճակատագրին Հարուածէն ջախջախուած պրոֆատիկները: Հիւսնա՛յ: Ան պէտք չէ քլլայ: Գառկած՝ Ան գործի գրայ, միշտ օտարի առն իրիկունը բերելու իր աղոց աման մը ուսեսա... Այդ մաման է, որ պիտի քարերէն ճարէ Հացը Ֆիլիթուն, փաղաքուշ վերադիր, որով կը մեծարուէինք մենք, Հացը բոկտելու, ազալու եւ վայրկենապէս անհեա բնելու մեր մազխարտութեան մէջ: Վէպ մը առանձին, անհունապէս քրտառուէ իմ երկրորդ մանկութիւնը, ուր աշխարհին բոլոր զրկանքները մամայիս բազուկներուն աղեղովը կը վանուէին ինձմէ: Վէպ մը առանձին այն անպատմելի ստուգութիւնը, որ լուս-հինգ Փելլի բերաններուն Համար Հացի աղբիւր մանակ այրին կայ: Հիմա կը խորհիմ՝ թերեւս մանկամարդ. Հիմա կը խորհիմ՝ ենթակայ Հազարամէկ փորձանքներու. Հիմա կը խորհիմ՝ ինքզինքը մոռնալու իսկ անկարող, քանի որ մեր քաղաքակրթութիւնը ո՛չ միայն Հացը կը բաշխէ իր ուզածին պէս, այսինքն՝ անհուն լրբութեամբ, այլեւ իր ստորին կիրքերուն յազուրդ կը Հետապնդէ աղքատներուն կարիքներուն ուղիով: Ո՛վ իմ մայրը. դուն ի՛նչ արցունք եղար ինձի, շատ աւելի ետք, Մութիկին ալ ետքը, երբ թաղեցիր մէկիկ-մէկիկ աչքիդ լուսերը ու անդրանիկիդ զերեկո-մանին սաղեւ հոգ ուզեցիր քու գլխուդ...:

Բայց պէտք է քաշել: Ու ձգել, որ իրենք իրենց մեծնան որբերը, դրժուար, արագ, քարի պէս՝ քարերուն գրայ: Յաճախ անօթի լուսցուած գէշերը կապելով յաղորդին: Լալ իսկ վախնալով՝ աւելի շանթոթնալու Համար, ինչպէս կը ինդրէր մաման: Յաճախ ցերեկն ալ պահելով վերժակը գրող, քանի որ դուրսը միւս է Հասակէզ աւելի, ու սուղ անուխը՝ Հացէն աւելի: Ու պէտք չէ ստոխի, նոյնիսկ երբ մասնորոշ ժորթը փակչի երկաթին, այնտեղ ձգելով մաս մը ճերմակի: Ու մեծնան, մեծնան: Աղաթն ու նախատիքին, ցուէն ու ողորմութեան, զրեթէ ծօտիկ մուրացողներուն: Չհասկնալով ինչո՞ւ մաման դովք կ'ըսէ այնքան շատ անգամ, իր լալը ձգած Հիւղակին դունէն, բոլորէն տեսնելի կատարի մը պէս սեւ ու սառուցիկ, երբ աղաքը զուարթ են Հացով, պատուով ու խաղէն զինով: Ինչո՞ւ կը կանչէ Հեռու Հայրիկը սա անմեղան-

բուն, զանոնք փողոցին ձգած այգուկն զող: Թող գայ այդ հայրիկը ու դնէ տղան իր հիւանդ լանջքին, շրթները լայնէ ու պագնէ մէկ-մէկ...: Տղաքը դիտան այդ զոյժին բոյր բառերը, այնքան յաճախ հղեր են այդ բառերուն լացին մէջ ու կր զարմանան լուզան մտածային, քանի որ իրենք փողոցի երեւին հիմա չուք ունին ու կոխէն ալ չեն ընկրկիր...:

Մայրերու կեանք: Ո՛րն է վէպը, որ կարենար հաւատարիւ քեզի: Վասնզի ասոր, յիտուն, հարբուր, հաղար էլը անբաւական կու գայ իր մէջ, միտն առնելու որրուժեան մը մէկ հատիկ ասարին: Ո՛ր գնել, ինչպէ՞ս նուաճել այն միւսները, ասոնք ալ ժամանակի կտորներ, բայց մասնաւորաւ, անձնացած ասնի, աստուարի եղանակներէ, որոնց իւրաքանչիւրին համար կեանքը կը բաշխէ նոր կտու, նոր ապրում: Որոնք կու դան զիրենց սարիքովոր: Խորհած ասի՞ք, թէ ինչու կաղանդ Պապան կր ժոռնայ կարգ մը ասուներ, դիւզիք երբեմն, քաղաքներ ու երկիրներ: Կու դան օրերը ուրիշներուն համար: Բայց քեզի, որ ո՛րք ես...: Ո՛ր վէպը՝ որ համարձակէք ծօաննուլ, իր խորութեան ու մտահրուճ լման ստրաստիւն մէջ, մթերքին այն հարազատ ապրումներուն — ասանց վերադիրի — որոնք ղիզուին պիտի մեր ուսերուն, աւելի նիւզը՝ մեր ջիւղերուն ու իրենց ներքին ստեղծմին շատնելի ժանգը պիտի րլւրղեն, հիւսնն անոնց, այդ անուշիկ լարերուն, որոնց դերն էր ըլլալ շքեղ ընդունարան, թրթուղին նուազարան հովէն ու ծովէն, խոտէն ու ծաղիկէն, խաղէն ու երգէն ծիածունուող ամէն ծուկնի, ամէն հեշտանքի, ամէն սարսուռի, ինչպէս են հակասագիրները մանուկներու ջիւղերուն ուրիշ-ուրիշ երկիրներու երեսին ու մեր ծօնն ալ՝ հորթներուն, դասներուն, ձգուած արտուն մէջը աշխարհին համերուն, կեանքին զողջրութեանց:

Եղիւր է, որ նախանձով նայիմ շան իւկ լակոտներուն, որոնք յարգանքով կը պարտուէին անորակի մեքերէ ասաք հայ մանուկ ասաք մայրիկ-նանի մէջ անթարթ մորթնաող: Ժանգը՝ մեզ վիրաւորող, մեզ թունաւորող՝ իրարմէ խորունկ անարգարութեանց, որոնցմէ փոքրագոյնն իսկ այնքան բարձրակայակ կ'իջնայ մեր որրութեան նախահար հողմիկներին, ուրիշ-նորուն ասաւ, անարգել մայրիքով կրկնապէս կարկատի ելած զրկանքը ասալին ու երկրորդ մանկութիւններուն, որոնք այդ խախտաւ, դեղին, սիքած, զղմած յուզումներուն սպիները կարծես կը յաւերժեն մեր հողիին երեսին ու ալ չեն անհետի քանին դաներուն մեզ ընել լիցիկն դարնուած, դեղնախաւաւոր, առնուազն մարդաստեանց ու կեանքին նայելու իսկ անարմատիք, նոյն-իսկ այն նարազային, երբ այդ կեանքը շէտար 1880ի մանուկներուն սպասող զարհուրանքը...: Ու ասիկա այսպէս քու դեղիդ, քու ցեղիդ, քու ամբողջ ժողովուրդիդ համար: Թող ըլլար Մաթիկը իմ տեղը, ամէնէն թուրք քաղաքին ամէնէն մասլ մէկ խորչին ծնած: Թող ըլլար հացին առաջը պսակած: Թող երկաթէն ըլլար ծակուած ասալին իսկ ամսուն իր կեանքին, կը խորհիմ, թէ պիտի ներէր ինծի իմ արտմութիւնը, զոր շփարանկաւ երեսիս զարնել շքեղ շաւառնութեամբ մը, իր անձին ու զրկանքներուն հանգստովը այսպէս լուսաւորուած: Բայց ան ի՞նչ դիտար, ուրկէ՞ դիտար, թէ բանուորի տղաքը ունին ամէնուն նման ապրումներ եւ ան ուրիշները, որոնք մեզի միտաքը ունին ամէնուն նման ապրումներ եւ ան ուրիշները, որոնք մեզի միտաքը սեփական: Այսպէս է, որ իմ ծննդեան խորը ձորով մը բաժնուած էր հինաւորաց ու մասլ ծառաստանէ մը, չորս մեծ, դարաւար սօսիներու քով ուրիշ քարքարուաներով ողկուզուած անտառակ, ու այդ ժայռերուն թելե-րուն աակ զնդակ մը պլլելու պէս սեղմող մզկիթին մթադնած կապար գմբէ-րուն տերեւներուն մէջ ճիւղերն ու բոյսերը սանկացնող մահիկ իր նարման-թը, տերեւներուն մէջ ճիւղերն ու բոյսերը սանկացնող մահիկ իր նարման-թովը, սուր իր սարբերովը աւելի սլաքող: Թող ըլլար Մաթիկը զեզ ալ բնագիւղ, սուր իր սարբերովը աւելի սլաքող: Թող ըլլար Մաթիկը զեզ ալ բնագիւղ — ձմեռները մեր մանարանը աշխատանք շունկեր ու մեզ կը նամբէր դէպի կած — ձմեռները

մեր գեղերը — ու ազատ լեռներու միւսին մէջ տաքնալու, եփելու գրուած  
ամուր մանուկը նոյն տանն: Որ քաղաք գարձին կը պտուկէր հիւանդ, կա-  
րօտովը իր ամայութիւններուն: Ու քաշուէր, բայց զազնխարչը յուշերով դէ-  
պն պուրակը, աղբուրները՝ այնքան բազմաթիւ, նսճիները՝ այնքան միմիկ  
կամ այնքան իմաստուն, խոժոտ, բայց սարսափէն դամուած իր հիւզի սե-  
մին, ուրականներէն ժարգերու, որոնք սեւ իրենց վերաբերուները մէկ թիւին  
նման, իրենց ահաւոր մարուքը փարսեյնն ապստեփի յուսացումը կը կա-  
տարէին այդ շուրհերուն առջին, աչքով փնտռելով ուսուելիք մանուկ մը,  
որը կամ ոչ, հայ կամ թուրք, այդ զազաններուն համար անդոյ խղճմտանք:  
Հէ՛յ քաղաքը թուրքերու առաջին սուլթաններուն, որոնց շնորհապիղծ դամ-  
բարաններուն մէջ այս դարու սկիզբը ազայ կ'ուսէին, լայն-լայն խաղաղու-  
թեամբ: Որուն զիջ մը թիթիւ բանուած փողոցներուն մէջէն իմ տարիքով  
քանի՛-քանի՛ ազաք փախցուած էին, ամէն ժարդ կը փսփսայ՝ ինչու: Զուտ  
հայարնակ գիւղերուն մէջ մեռո՞նք մեզ կը պաշտպանէր, թէ բարբերը կը  
մայրին աւանդական իրենց պարզութեամբ: Զեմ վիճիք: Քաղաքին փողոց-  
ներն իսկ ինձի կու տային նոյն սարսափը: Պատմեցի՛ մեզի, թէ այս պատ-  
մումին մէջ երեսուց պատանին, գիւղապետին մէկ հատիկը, ուսումի համար  
քաղաք գիջուած, ժօրը պնդումներուն հակառակ, որ չէր կրնար ըմբռնել Աս-  
տուծոյ օր մը, տանն իր մանուկին արեւէն ջերմանալու, պաշտպանութեամբ  
կը բերուէր դպրոց, կէս մը սանկախան փողոցներուն յայրաս կարեկիւս-  
թեանց բնդդէմ: Այդ քաղաքին մէջ, ինչպէս ամէն տեղ թուրքիւն բնդարձակ  
հողերուն երեսին, արդիւում էր հայերուն գէնքը, սուր կամ կրակ: Ու սա-  
կայն դաշտոյնով դպրոց կ'առաջնորդէի իմ խնամքին յանձնուած պատանին:  
Այսպէս են ապրիւր մեր պատանիները այդ զա՛ւտ ազնիւ, շա՛ւտ վեհաճան  
ժողովուրդին, Թոմարի մէջէն հարազատ, մաքրամաքուր, սկզբնափայ սո-  
տանին մէջ: Կոմա Քէյքերիկ, իր հարու ամերիկեան խորհրդածութեանց  
մէջ, թուրքերը այդ մակդիրներով կ'որակէ: Ինքնատիպ մասնադր չեմ գիտեր  
ո՛ր է հանդիպեր այդ վերադիրները թելադրող զգայութիւններուն: Զրօտա-  
շնչիկներուն անհուն է եղած յարիքը, յանուն ինքնապաշտպան, երբ կը գրեն  
իրենց ապաւորութիւնները: Մտանք մը յուսախար եղած եմ արդէն ուրիշ  
կոմա՛ մը, առ ուլ գաղիացի (Կոպիւս), որ Պարսկաստան իր ընտելութեան ըն-  
թացքին իր զգայութիւնները հրատարակած է՝ ստեղծելով ահաւոր անդրա-  
դարձումներով եղբրական վարդապետութիւններ, մեծ ու փոքր ցեղերու  
հարցին շուրջ: Գերման մասնադր զո՞վ ունի նկատի այդ ազնիւ ու վեհանձն  
որակականներուն հաին: Ինչո՞ւ միտքէն չ'անցնէր, որ այդ որակումները ար-  
դարացնող ժարդեր կրնան կենալ ու կան բոլոր ժողովուրդներուն մէջն ալ,  
առանց որ թուրք արիւն մը ըլլար անհրաժեշտ սա առաքիլութիւնները սնու-  
ցանելու միտերու գրութեան մը մէջ: Խորհած ունի՞, թէ քացի ափրիկեան  
կիսափայրենի ժողովուրդներէ ուրիշ ոչ մէկ ժարդկային համախմբութեան  
մէջ — զբէք անունը ազգ — հանդիպելի կրնան ըլլալ ժարդկութիւնը հիմնո-  
վին հերքող ամենափայրազ հանդէսները արեան ու կրակի, զորս պատմու-  
թիւնը արձանագրած է իրրեւ ջարդ: Ու հարցը, զայն ընելը, անոր ծարաւով  
ապրիւր, անոր մէջ երիտասարդանալը թուրքերուն ազնիւ ու վեհանձն ալ մե-  
նաշնորհն է մեր օրերուն անգամ, ո՛ր մնաց քանի մը դար առաջ: ԾՆՎի պա-  
տերազմին, փրփականտի արդիւնք թուրք եւ գերման բարեկամութեան քա-  
ղաքական հաշիւները ի՞նչ դիւրութեամբ կը միջամտեն, որպէսզի անխոնջ  
տասը դար կործանելէ զատ ուրիշ ոչինչ իրազործող ժողովուրդ մը յայտա-  
բարուի Si noble, si généreux: Այդ այնքան ազնիւ ու վեհանձն թուրքերը ես  
ապրիւր եմ սակայն, դարձեալ մեր գեղերու պարունակին: Մարդեր էին, ու



րոնք իրենց հալալին հարամը խառնելու կը դժուարանային: Կը վախենային վաշխէն: Կը հասնէին մեր տաղանայներուն՝ եղ, ցորեն, անուշ արածադրելով յունեցողներուն, կեսվարն ալ տանց մէջ: Ատիկա իրականութիւն է ու ես թերեւս բլլամ խօսած այս հոգեկան գիճակին վրայ: Բայց ահա աւելին: Առ-վի տարիներուն — ամէն տարի անդամ մը սո՞վ էր մեր շրջաններուն — այդ կեսվար գեղէն հաճի Արթիւր (տեսնել ՎՄԱԿԱՐԳԱԳՐ, Ա. Հատոր, ՎԱՐ-գանգի ճամբով) բացած է իր ամբարները բոլոր աղբատներուն, շունեցող-ներուն, հայ՝ որքան թուրք, որոնք կրած են անոնց պարունակութիւնը ու օրհնած մեծ չորպանին: Աղետութեան եւ վեհանճութեան օրինակները մի՛ մենայնորհէք առ ու ան ցեղին: Ու մանաւանդ գրօսալիկի մեր հոգեգիճա-կը, ձեռքի մատուցած հերթախրական ցոյցերը, աղլիկը, կնիկը, բերքը, բա-րեքը մի՛ ընդհանրացնէք, վեհներ արձակելու համար, որոնք ամէն օր հեր-քը: Եսնայ այդ ընդարձակ կայսրութեան մէջ: Թուրքերուն վրայ խօսելու ար-տօնուած ցեղը հայն է միայն, որ շատ մը հասարակաց կողմեր ունի անոնց հետ, կողմեր՝ որոնք արիւնէն դալուն շափ կու գան հողէն, հովէն, ջուրէն, երկինքէն: Այդ է պատճառը, որ եւրոպացիներուն, ամերիկացիներուն տուած թուրքը սպառուած ապրանք է: Մենք՝ հայերն միայն կը ճանչնանք թուր-քը, որտան ճանաչու՞մք մը: Յետոյ այդ յարաբերութիւնը — հայու եւ թուր-քի — արուած է զարձակ տարրեր մեր ժողովուրդին երկու հատուածներուն համար: Սփիւռքի հայութեան մէջ անիկա, այդ հարցը դեռ չապականուած զգայութիւն մըն է, շատ խոր բռնուած ըլլալուն մեր ներքը: Արեւելահայերը գոյն կը զգան ուրիշ: Այդ է պատճառը, որ Մեծբրիտանիան Մաթիկը թուր-քը արդարատօրէն զգալու համար կարիք ունենար հետաքրքրութեան, ըսել կ'ու-ղեմ՝ ինքզինքը փշելու, նեղելու, բռնադատելու, իր ջիղերուն ինկած զգա-լութիւնները տարօրէն անցնելու, նմանելով քիչիկ մը Տոն Քիչոտ ասպե-տին, որ իր եռանդին մէջ մնալու երջանկութեան սիրոյն՝ ուխտարներ կը հա-նէր զէպի առեւտութիւն: Դիտեցի, որ ամբոյն էին այդ զգայութիւնները, քանի որ մտցած էին իր երկրացիները թուրքին իմաստը: Անիկա զարմա-նալի կերպով պիտի հաստատէի 1918ին, երբ Պուլէն փախայ գերման սպայի տարազով Պուլխարիա: Երիտասարդ սպայ մը, որ պաշտօն ունէր փախտա-կանները հերոզութեան տակ պահելու, կը զարմանար, թէ ինչպէ՞ս ինձի պէս երիտասարդ մը ստիպուած էր փախչել Պուլէն, ծանօթ անոնց լեզուին, բար-քերուն, գրականութեան: Ահաւոր էր իր միամտութիւնը, աւելի քան Քէյզեր-լինկ կոմսերը: Անշուշտ բարձրագոյն միջամտութիւն մը կ'արդիւնէր փախտա-տականներուն թուրքերուն յանձնուելը: Պօսեցայ իրեն 915ի սպանդէն ու վարձատրուեցայ իր անդլիական փրօփականտի շափաղանցութիւն: Պուլ-կար սպան չէր կրնար ըմբռնել, որ անմեղ, մանաւանդ անգէն մարդեր մոր-թուէին: Յիշեցուցի իրեն 76ի սարսափները, որոնք պատմութեան մէջ Պուլ-կար անդթաւթիւններ անունով կը մահն արձանագրուած: Թօթուեց գլուխը: Մ ՈՒՑԱՆ Է՛ր: Մաթիկը սպայ մը չէր ազատագրուած ժողովուրդի մը յաղ-թական բանակին մէջ ծառայող: Ու մտած էր, իր կարգին: Այսպէս է, որ բառն ալ՝ քուրքը քիչ կ'երեւար իր այնքան բազմակեղծոն յարձակողականին մէջ, ուր չէին ինայուեք շանթեր փաշաներուն, մուլաներուն, բռնապետնե-րուն, Համբաին, աղաներուն, պէյերուն, օրիկաներուն, խուլիգաններուն՝ բոլորն ալ թուրքէն տարրերական բառով մը, հետու, գրեթէ անծանօթ այն զգայնութեան, որ մնլն էր: Վասնզի ջարդը, մեր գերութեան տախտակները, չղթաները, մանաւանդ հոգեգիճակը արեւմտահայերուն համար անհատական չէն, ըսել կ'ուղեմ՝ անհատներով պայմանաւոր: Լաւ փաշաներ շա՛տ: Բայց փաշայութիւնը մեր պապերուն համար մանկահաւաքն էր, աղլիկներուն ա-

սեանդումն էր, բերքին թալանը ու փշ ժրն ալ աւելի՝ քան այն կուտ, պարպապարպ տարազը, որով մեր անկարողութիւնը կը կարծենք դիմաւորել բառերով, քիչէնով, յոյսով...: Յանցառ բացառութիւններէ դուրս, անոնք ալ մարդերու ամէնէն ստորին խաւերուն պտականոց քանի մը պատիկ սճրագործ — որոնք շարգարարներու մէջ իրենց հակառակորդներուն իբր հակացոյց՝ զուճակէք կիներ ազատեր էին սպանդէն — շարգին մասին մեր ներքին վկայութիւնը ոչ մէկ կողմէ շնորհուեցաւ: Ամբողջ ժողովուրդ մը, սուլթանէն մինչեւ յեանադոյն գիւղին Բեյխամ հազարդ էին շարգը ստեղծող, արգարացնող, փառաբանող հոգեվիճակին: Ինծի արուեստը զգալ ուրիշ բան ստակայն, շարգի մը սասն զարձեաց, այս պատմութիւն թուականէն առաջ տարի հաք, ուր շարգի զգայութիւնները ողողեցին զիս: Կը շարգուէին թուրքերը, Արեւելեան Եւրոպայի մէկ գիւղաքաղաքին մէջ: Պուլկարները յաղթական մասն էին քաղաք ու արածած թուրքերէն այնքան սիրուած արեան բաղնիքը: Կը պարտէին լուկան: Կը թալանուէին խանութիւնը: Պուլկար զինուոր մը ունի երկաթեայ փողկապ մը: Զրի՛: Կատակն կտորը մեղքն ինկած էր: Որ մը հաք մարթելու արարքին ամբողջ սասակութիւնը զեռ անլինջ կը մնայ մաքիս մէջ: պատմութիւնը հանդիպեցայ մեր զպրոցի թուրքերէնի սուուցին, անաւելի մայր մը: Մորթիք էին զաւակները, առեր ձեռքէն կինը, այրեր հայրը, ողջ-ողջ թաղեր մայրը: Զինքը ողջ մտող հրաշքը կին մըն էր: Բայց այդ չէ, որ պիտի ուզէի պատմել: Այդ սազնապի օրերուն սա ամէն բանէ զրկուած մարդուն պարպեցի քսակս: Դիմեցի զինուորական հազարապետին անոր կեանքին համար ու պահուեցաւ այդ կեանքը: Իրողութիւն էր, որ 1912ին, այդ քաղաքէն չէ դանուած ոչ մէկ հայ, որ իրենց սուուցիչէն աւարբեր ապրած ըլլան թուրք ողորդութեան դիմաց: 1915ին, զեղի համար պիտի չզտուէր մէկ հասակ թուրք, որ աւարբեր մասնէր, գործէր շարգարար սուազանիւն: Ու մի մոռնաք այս փաստերուն տարողութիւնը: Կը կրկնեմ. հայ եւ թուրք յարաբերութեանց հարցը հոգեբանական վերջիւում մը չէ ինծի համար: Այլեւ՝ ներկայ ապրում մը: Թուրքն ու շարգը մեղի համար նոյն զգայութեան երկու երեսներն են: Այսպէս չէր, չէ հեռուէն եկողներուն, շրջիկ վաճառորդներուն, մենայնորհ հայածողներուն, ատան իմաստասէրներուն ու... Մեկիջիւնեանց Մաթիկին համար, որ թուրքը փոխարինած էր աւելի տարած, բնականուր տարազով մը — ԹՇՆԱՄԻ՛, այսինքն՝ գիրքերէ իր մտքին կառչած քառ մը, սոսանց ահաւոր զգայութեանց խումբին, որով հանպուցուած ան կը խորանար մեզմէ ներս:

Այս բնականութիւնը այնքան իրական էր, որ թուրքերը կը ճանչնար իրենց կրկններէն, այդքան վաղաօր ու կը պատմէր անոնց անպթութիւնը նոյնիսկ իրենք զիրենք տուած ստեղծներ: Թշնամի՛, Բարեկամներ չենք եղած, չեն եղած տէրերն ու զերիները: Այդ մասին օրինազրուելիքը ո՛չ թէ իրողութեան փաստն է, այլ այդ վիճակը հասկնալու մէջ մեր նոր գործիքները, զործարանները, Եւրոպայն ու ԺՊՐԴ դարու քաղաքական ու բնկերային գիտութիւնները, որոնք մայր յղացք մը լաստակերտեցին, սոսանց մտահոգուելու, թէ ո՛ր իրականութեանց կրնար վերածուիլ անիկա: Ու սխալի մէջ չեմ, եթէ երբեք յայտարարեմ, թէ մեր պատրանքին չափ — այդ յղացքներուն տարողութեանը վրայ — ինչպէս մեր ուսմանթիղմը, ես կ'աւելցնեմ մեր անդիտութիւնը թշնամիին հոգեբանութեան: Մենք կը փոխուէինք շատ արագ: Թուրքը իր հոգեկան խորագոյն գիտակցութեան նոր կը դառնար, ժողովուրդ մը ըլլալու համար, ան՝ որ դարերով աշխարհակալ էր եղած, այսինքն՝ բանակի սպառ: Թուրքերը որդեգրելով Արեւմուտքի արտաքին երեսը, Համբար ուսման մին յայտարարեցին իրենց համար հոգի մը, որ Դ-Տրդ դարերու իւրամինն էր,


ուր ներարկուէին ցեղամիջին ալ աստիճանաց բոլոր աշուտը թոյները: Այս վերլուծումը զիս հետուններ կը տանի հիմա: Ստիպուած կը կենամ:

Ապահով եմ, որ ոչ մէկ յեղափոխական ճամբայ ինկած կ'ըլլար դէպի Հայքնիք, ոչ թէ մտիւն իր անէին, զոր յօժարած էր զոհաբերել, այլ սարսրոպէս այն հետակարին ժողաւանջովը տապալած, եթէ երբէք թուրքը ըլլար ճանչցած մեզի պէս, այսինքն՝ իբր զգայութիւն, միտի, սակորթի փորձառութիւն, հողիին բունին տրուած հաթաղան ու մեղքին թեւերուն օղակուած կախաղան: Թուրքը այդ մէկ հատիկ բառն է, որուն մէջ կը խառնան մեր պատգիտուն ամէնէն եղբրական ապրումները: Այն աղաքը, մերիններէն, որ կ'ան թուրքին դէմ, ըրին տարկա, իրենց հաշտոյն, մեռնելու հաստատ վճիռով, երբէք չանդրադասեալով հաւաքական դատին վրայ այդ ելոյթին ունեւնայիչ շարագուշակ հետեւանքներուն: Արեւմտահայը տուած է հայ յեղափոխութեան միտքները: Ատիկա տակաւ կը դառնայ պարզ, երբ երեւան կը հանուին գործիչներու յուշերը: Արեւելահայերը, որոնք մահակառոյց այդ զգացումը մասնեցին շահագործելու աւելի բնդարձակ, համապարփակ ուղղային նպատակներու սպասին, հաւատարիմ էին իրենց ուրիշ կարգէ զգայութիւններուն, գործնալ այդ թուրքին, բայց... Կովկասի մէջ, ուր ցեղը կը պարզէր պատկերը անկանդնելի թշուառութեան, աղաին ու ախտերու մէջ խորասոյզ, կործանած ու անխելք: Մասիկ Մեյքիթանեանցը պիտի յիշէր Մասկուայի թուրք սուսնողները, պոռնիկներու սպասարկու, հասարակ թըլառականներ, որոնց իմացականութիւնը կը մնար հաւատար ֆիդիքազան անկարութեան: Այդ էր թերեւս պատճառը, որ ինքն իր վրայ ըլլար ստիպուած բունութիւն գործելու՝ մեծցնելու համար այդ թշնամին ու գտնէր եղբ մը, ուր հաշտուէին մեր ժողովուրդի զոյգ մեծ հաստուններուն իրարմէ յուշորովին հետացած, տարալէմ զգայութիւնները, ապրումները: Բառարանի բառ մը ու անոր տակը խոսքած ապրումները սրբան իրարու հետ իրենց ասրորթ կ'ըրնեն ճմաւնած, ծանօթ է բոլոր զազափարները տարանջատող մտածողներուն: Մեր յեղափոխութիւնը — այսինքն՝ անոր պատմութիւնը մինչև այսօր չէ գտած հասարակաց գետին մը, ուր մարդկորէն ըլլային հասկնալի արեւմտահայ Հերոս մարտիկներուն խելացնոր արարքները ու արեւելահայ գործիչ իմտելիզնտներու անկանդնելի յիմարարանութիւնները: Ի՞նչ միտմիտ են այդ յեղափոխութեան տեսարանները, երբ իրենց կապուած գանդաւաններու սիրտին կարծեցին դրած ըլլալ ազնուագոյն սերմերը: 1915ին ստորնութեան ու մասնութեան մէջ աշուտը հանդիսացող մեր զանդուածները, երբ աղէտին պատասխանատուութիւնը կը նետէին այդ Արեւելքէն բուսած մարդոց սուսերուն, կ'ըսէին իրենց խորագոյն ճշմարտութիւնները: Արեւմտահայը, կուսակցականը, գէթ մինչև մեր վերջին պարտութիւնը մը տաւ այդ գործունէութեան մէջ մէկ ու միակ զգացումով մը, — Հարկ չկայ այդ զգացումին անունն իսկ տալու: Թուրքը ասելը ապրումներուն ամէնէն իրաւք, ինչպէս կ'սկզբապինն էր այդ օրերուն: Ու պէտք է արդար ըլլալ, ըսելու համար, որ թուրքերը ամէն բան ըրին այդ աստիճանը հրահրելու, ազգային զգացման վերածելու մեր, ինչպէս իրենց մէջ, նենգ ու պաղարին սպասումով մը, սրբագրելու համար գիմարութիւնները հին սուլթաններուն: Մինչև 1915, ինձի պատահած է լսել շատ մը թուրքեր, — բժիշկ, դեղագործ, պաշտօնեայ, փաստաբան, մանուսանդ սպայ, որոնց մէջ ոմանք կ'երթային առաջ ո՛չ միայն ծագրելու մեր ազգային ճիշդը, այլ մանուսանդ մեր յիմարութիւնը, խրմարութիւնը, օտարին վրայ հաւատալու չափ անմարդկային ցնորաստութիւնը, իբր թէ եւրոպացիները չունենային ուրիշ գրաստութիւն, Հայերու բարեբան վրայ մտածելու եւ գործածելու իրենց մեծ-մեծ

կազմակերպութիւններ, դիւանագիտական մեծ ձեռնարկները: Երեսուն տարի առաջ չէր բաւեր յեղափոխական ըլլալու համար ուրանալ մեր թշնամին, ըսել կ'ուզեմ՝ զայն դաւանիլ եւրոպական դիւանագիտութեան դասական շրջաբանութեան մէջ, եիւանդ մարդու, որուն օրերը համրուած էին: Այս տեսակ արտադրութիւն մը, անհրաժեշտ ըլլալով հանդերձ, չժողոջ ստեղծուած միւս իրականութիւնը, վտանգին զգայականը, քանի որ սակմանը անցնող ամէն հերոսի գիտուն, ինչպէս մեր ժողովուրդի հաւաքական գոյութեան վերեւ կախ էր առակին սուրբ: Ձեր բաւեր զայն վերածել գրական յղացքի(\*), որպէսզի հարաւորութեան ստեղծուէր իմացապէս, մանաւանդ զինուորագրուելու այս շարիքին դէմ, որ զիսպարուած Տգիտութիւն կ'անուանուի: Որքան շատ տեսեր եմ Մաթիկէն ետք հզոր ու շքեղ ոտփնասներ, որոնք թուրքերէն կը սորոջէին, որպէսզի այս ժողովուրդը լուսաւորեն ու բնկերփարտեան վարդապետութեանց ընդհանրացմամբ մը միանգամ ընդմիջաւ արժատութիւն ընեն ազգը ազգին դէմ լարող մտաւեր: Այս մտածումը Մաթիկէն ուղեղին մէջ ապագային խակ, աւելի յետոյ պիտի ընդունուէր ամերիկացիներէ, որոնց երանելի ուղեղին ծնունդն էր գիտաբ հայ սրբերուն արդիւնը հայոց լեզուի սուսմը, հայածել անոր գործածութիւնը, արտօնելով արեւէ ուրիշ լեզու: Ասիկա ո՛չ միայն ինքնատիպ է իր մտածողութիւն, այլև ահաւոր կերպով իրաւ: Նիւ Իսթի պաշտօնաններուն անդեկագիրները պաշտպանած են այդ հրէշութիւնը բնկերութեան կեդրոնին, Ամերիկայի մէջ: Մաթիկ Մելիքեանեանց սոցիալիստ էր՝ յեղափոխական ըլլալուն շափ: Ու իր զարդները կը շփուէին երկու աշխարհներուն հիմնական հարցերուն: Ձեր գիտեր, թէ իր այս տեսութիւններով որքան կը հեռանար մենէ, որ թուրքը չէինք եւրեանկայեր, այլ կը շարունակէինք ինչ որ իրենք զազրած էին ընելէ զոտկուտեան, այսինքն՝ կրել զայն, թուրքը, մեր ջիղերուն ճամբաներէն, թանձր, անխուսափելի շարուի մը նման: Ընկեր Մաթիկը մեզի շափ ուժով տանու անկարող ու անվարժ, պարաբ ունէր, աւա՛ղ, երեսակայիսու, կըր չէր անցած Սահմանէն: Նշանաւոր այդ հրուանդանը իմաստութեան ծովերուն:

(\*) Հայտ երբայու համար Առեւտր բնկերային վարդապետութեան մը սովորիւն, այսինքն՝ չկոտայնի, գրեթէ չհոցնի, կամուտր մեղակցութեամբ, կուրտեանք, բարբարութիւնը, որ բուրք մեծ ծաղովուրդիմ մտա տեսակ մը վազանցուի spasme է եւ ոչ թէ հոգեյաւակի տեսակն գրութիւն, արիւնք եւ իր մտերը, որով հայնակամ ծաղովուրդներու մէջ կը փոխարինեն իմաստիմ fonctionnementը, առեւտրով ուղեղը: Ասիկա՛ն՝ արամայէ ետք այս տեսութր իրողութիւնները, հաւատալ ուրիշ տրտմութիւններու, այսինքն՝ զարգացման, գիտութեան մէջ բարեյաւման ու մեր քննամիմ մեզ ալ սիրող ընծայող ինքնապատիր սուտիմ, — պարագայ, որ լայնօրէն սպացուցուած է այսօր, երբ ո՛չ միայն Եւրոպայի մէջ կը պաշտպանուինք բուրքերը, այլև ետերդայիմ Հայաստանի մէջ, առանց կիտի ունենալու ուրիշ ծանրակշիւ փառանք, որոցմէ մէկն է Պոլսոյ հայերուն հոգիմ պարտադրուած պետական ընկարձակ կեղծիքը: Այդ մեր արիւնէն կեղ մարգերը իրենց քրքուցման գրոցուը կը երտիրենք բուրքերէն վեր, հեռուէ մեզ ընկով կրկնապէս միւս:

(Շար. 4) Թ. ՕՇԱԿԱՆ



## ՄԵՅԵՆԱԿԱՆ ՏՕՆ

Յարկաններու այս սարսան ետն թահարուն հետ՝ զՅաղկն չի կրնար չիճիւ ուրիշ ճը, այս սնգամ ոչ սնկառ զտառկաւոր, այլ բացառիկ սնկառկանութիւն ճը յայտարարած ճեր ժամույն ճիկ բացառիկ սնկամը, հայ գրականութեան ճիկ սնկննն աւելի յայտնագործական սնկը, ճարտարածող յունչ, սուլտական ստուշիտլ բարբերը սըն- լացնող կըրը բերած ճրբիկը, նորին կառաղութիւն ճՄնննանը, որ 1914 Յունուար ճիկին սկսու եւ գործեցու նոյն սարսան 1 Յուլիին, շնկամնը, սառճ, ետըը թիւ ճիւնի լրյո շննայիւով:

Ետըը թիւ՝ սովորական նուալով, կընրու գումար՝ 112:

Այսուանչեքով, գործերական ճեր ժամույն թէ գրականութեան ճիկ ճՄնննանի կրնուճը ուղղակի կրնայթ ճը կցու եւ, կ'ըստ'նք ստանց ճերտալուսութեան, կորիլի չի յիշիլ ուրիշ հանգիս ճը, որ այդգան թիկ թիւերով եւ այդգան կարն ժամանակի ճիկ սանց- նան ըլլայ ա'յնքան հաւաղու, որքան սանգնից թիցը՝ Հայաստաննայ Գրականութեան սն- սիլով սրբիւ եւ սնոր իտիւարըղ զգնող յարաշահներուն զճ սարկերային բարկութեամը ճը ալիկան կրնատարը իր գործերով:

Հանն կցուք սրգնի, որ ճՄնննան ճիւճամանակ կրկու նահատներու ճրյո սա- րու իր գոյլարը, ճիկ կոզմէ աւարիկիւով ճոտացական սովորութիւններ սւ տառարի սգ- զնկութիւնները հանդիսարող սնկարի զըշակները, ճիւս կոզմէ հրահրիւով սանցնագործու- կան սուիւնով կնկաթթիւս սաղանգները Հայաստաննայ Գրականութեան ճնն սնեիլգին նուիրուելու յընթեան:

Տարբեր կրկիւրներու, ճաննագործներու, սնկառական զրտարաններու, զրտըն- րու թէ ճառարտականներու ճոտ ճեր կրկարմնայ փնտառուցները համարճակութիւն կու սան շոնու, որ սանուագի Սփիւռքի ճիկ, Երուսաղէճնն ճիկնի Պէյրութ, Պուսնն ճիկնի Յու- նաստան, Կիպրոսնն ճիկնի Պարսիստան, Փարիզնն ճիկնի Լոնտան սւ Միացեալ Նահանգ- ներ՝ ճՄնննանն հանգէսի ճիւրտարանն սրինակները սասայտորէն սակաւաթիւ եւ: Մնեք կըր- ցան ճեք ճիկ հաստանայ այլն սնցրնիլ հու, Անն ժարկի համայարանի ճաննագործանն ճիկ, իսկ ուրիշ ճը՝ Պոսթընի Գնորը Քոստանի ճիկանցն ճիւս զսնններուն կարգին: Մեր սնկանն ճրյո գումուանը Պոսթընի հաստանային յուսանկարական գումուանն է:

Եւ սրովհետեւ այս է կրականութիւնը, շնթերցող՝ աւելի ճանցնիլու համար այլ նշանուար հանգէսի ճիւրտարանն, փորճնեք սալ սնոր բովանդակութեան ճերճուար գումաները:

*«Մեծանոցի մէջ առնելու տունի կէտը գրուած են իրենք, Մեծանոցանները, «Հանդուսան-  
կը» ստորագրողներու կողմէն եւ նիւթերու Հեռուստա յանձնարարութեամբ»:*

**ԴԱՆՆԷԼ ՎԱՐՈՒԹԱՆ**

*Երկու բանաստեղծութիւն՝ 1) «Բարտեմիոս», 2) «Հասուն սրբա»:*

**ՅԱԿՈՐ ՔԻՒՇԵԼՃԻԱՆ**

*Ջորա Հարքինճի՝ 1) «Հրանտ Եղաբունց», 2) «Վարանա Փակագան»,  
3) «Հին ստաւուտները» (Եւան Եսմբ - Անգրանան), 4) «Հայր Աման Ե-  
րեմեան»:*

*Երկու գրաբանութիւն՝ 1) «Հրաշալի յարութիւն» (Վ. Քէրէնան), 2) «Վան-  
ցը» (Տ. Յէօկիւրեան):*

*Մէկ տեսական յօդուած՝ «Հայաստանայ գրականութիւն»:*

*Երկու արժանի գրութիւն՝ 1) «Անտուն սպիւրը», 2) «Համարայրի մը պատ-  
մութիւն»:*

**ԱԼԱՐՈՆ**

*Եօթը բանաստեղծութիւն՝ 1) «Ամի», 2) «Արշակունի», 3) «Ճիւղարտ»,  
4) «Պիմանան», 5) «Մարտիկ», 6) «Արարչութիւն», 7) «Ամբիմ»:*

**ԿՈՍՏԱՆ ՋԱՐԵԱՆ**

*Տեսական Հինգ յօդուած՝ 1) «Անդամագործութիւն, խնձրութիւն, դիւցազ-  
նութիւն», 2) «Հայր Աման Յիսուսը», 3) «Բարտեմ (Համագրութիւն), 4) «Հնե-  
քանութիւն», 5) «Անպարկ»:*

*Ջորա բանաստեղծութիւն՝ 1) «Մեկնումներ», 2) «Ճարտ դիւրը», 3) «Հայ-  
րեմիի սրբ», 4) «Ասպիւրան կեանք»:*

**ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԻԱՆ**

*Ջորա կար արժանի կէտը՝ 1) «Ազատութիւն կախարհիմ դրոյ», 2) «Վար-  
ուն հայրը», 3) «Բանակապա», 4) «Ազատի ճակատի խուարիկը»:*

*Այս աշխատանքներէն զատ, Մեծանոցաններէն երկուք՝ Յ. Քիւֆէնան եւ Կ. Ջոր-  
եան ունին սարքեր կէ մը, ուր «Յիսմարտապա», «Յիսմարտապա», «Երկիր», «Միք խ-  
սարանը» խորագրերու տակ խօսած են լեզուական, թատերական, քննադատական ու գրա-  
կան այլուստեան բարձրու ժամին, մեծանոցան նախ արդար տեղութեամբ, այրեցեալ կիր-  
քով, սպաննիչ պատճառաբանութիւններով:*

*Մեծանոցաններէն զատ, Հան ստորագրութիւն ունին յախարար Գեղամ Տէրմար-  
պեանան՝ 1) «Հայ քնաշխարհն ու իր բարբառը», 2) «Մեծանոցան իրանիքն», Գորէն Ջոր-  
զորեան՝ «Հայրեմիական սար», Եւսուրջ Միստրիան՝ «Հայ ճոր սիրուող արունտի ու  
դրականութեան հանգիւղ», Վահան Քէրէնան՝ «Ճայ հայերէն լեզուին», Կրատէա Յարու-  
թիւնան՝ 1) «Երակուն ճոր յարժանը», 2) «Գեղանուցները», եւ շարք տասնեակ մը արիչ-  
ներ, որոնք բախ յունկան Հայ գրականութեան մէջ առանձին պատուանդան ունենալու:*

*Հարկ է թերեւս նշել, որ տեսակի ու տեսան աշխատանքներու թիւան  
նպաստներէն աւելի Հիմնադրիներու, յաւկապէս խմբագրութիւնը կողմուց կողմաբանութեան  
սպասարարութիւններով բացառուանքն «Մեծանոցան» լուսնը, որոնք հասարակութիւնը տեսան  
Պաշտոն սահմաններէն սերտն ու նոր յայտերով կրկններ Հոգիները կողմուցն միշտու Երկու-  
սոս ու միշտու ժընտ:*

*Արտատպութիւն ժընտէն կը զրէ:*

*«Մեծանոցան» աւալին թիւը կողմու եմ տեսեր: Կարգադի ներայրական փաստաւորու-*

քիմիկոս: Ազրի՛՛, ազրի՛՛, մա՛նուանց էրք բարոյազե մնացնելու համար անուպանգ-  
ներն ու սնուիները — ցեղեցկութեանց մուրճերը կը շարժէ՛, արգարութեան հարուածներ-  
ով: Ափսո՛ս, որ հանդէպ ֆոքր է եւ ամսագիր: Իմ երկրորդ հայրենիէ՛ւ, ուր պիտի մնամ  
ժամանակ մը, էջէ պէտք ունենա՛մ ձեռքիս, անկե՛զծորէն ձերն է:

Հեանգալաուսիանո՛՛ ձեք գործին եւ սէր ամենուց:

Իսկ Գահրէ՛կ ՎՅուսարի-Արեւշի՛ մէջ, Սուրէն Պարթևեան կ'ըսէր.

ՎՍտացամք աստիճ համարը այս նոր պարտիակահին, որ խուճք մը երիտասարդ ու  
ազգանդաւոր գրադէաներու նախանշանութեամբ կիմնուած է Պոլսոյ մէջ: ՎՄեհեանակա-  
նէրը — որոնց գրական ժանիֆուր արդէն երասարակած ենք այս էջերուն մէջ, մեր ներ-  
կայ մտաւորական միջակայքստութեամ մէջ կու գտն կտրծորէն ձեանարկելու գրական մա՛-  
րագործութի աներածնոյ գործին եւ արժէքներու վճարական ու անազգ մշակուի մը հետ՝  
նկատագրելու հայ գեղագիտական ստեղծագործութի նոր ու ազուար իսկալ մը:

ՎՄաքուսիան կը մտպրենք իրենց:

Ժամանակաշրջանի աստիճաններէն շատերը ՎՄեհեանէն ենք — կը զանաւորէն արդէն, եւ  
պարտաւորու բերումով զուր մնացողներն ուլ սնոր երկուճք դիմաւորեցին աչքազէս, Սիւս-  
մանթոյի եւ Սուրէն Պարթևեանի պէս խանգաղատանքով ողջունեցին զայն՝ եղբայրական  
ձեռք կորկանելով անապահեցներուն դիմ ՎՄարտրէնո ծառայող ու աստիճանորիներուն կը-  
կիզած յարգանքով մը ժամկետը բազմանոց շարժեցան:

Նորութեան ծարուր մ'ը աստիճանութեամբ գրացող, հայ գրականութեան աստիճ-  
անները շեղարձակելու եւ խորութիւնները ասանելու պոթառայեցնելու մ'ըջան հասնող  
ու ձեանաութիւն ժամանող, եւ նաեւ գրականութեան անունով հանդիսարարուած զգնելու-  
քիմիկոսը, ստափախութիւնները, շանքամն ու սրբազգութիւնները աչքան անաչք հար-  
ուաներու նեթարկող երկասարգները, բնական է, պիտի աշկոծէին գրականութեան ժամ-  
արայները, ու աշկոծեցան ժամարայները, արեւմտէ ոմանք պէտք զըսցին երկրորդ անգամ  
պատմութի, ՎՄեհեանի ջահերէն յարգող լայտերուն մէջ փոխով իրենց անապահութեան հե-  
անանքները...

ՎՄեհեանի նմանակը յիշեցնող այս զգով ծանոթութենէն հաք, պիտի փոքրէնէնք,  
որ անկեղ վարակիչ շունչ մը զանար նա՛ւ աշարուան երկասարգներուն համար, գրա-  
կանութեան հանգէպ պաշտամուտի հանող նայ ոչը բանկէր անոնց որքին ու ախրող վտան-  
գաւոր անապահութեան փոխարէն անոնց երակներուն բարբաբէր պատճառարանուէր բար-  
կութեան հարը:



M E H Y A B, Revue arménienne de Littérature et d'Art

# ՄԵՐ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Մերկայոյզ կրկնապատկերներէ բոլորուած, զորո անգթօրէն անստոյգ ճակատագիրը կուած է իր լայն հարուածներով, դէպի ո՛ր ջողարկուած նպատակը կ'ընթանայ հայ արուեստագէտը՝ դանդաչելով. որպիսի՛ ոլորտ մը կը տեսնեն իր մոլորուն աչքերը. որպիսի՛ արձանի մը ձեւը կ'առնէ իր մարմինը. եւ ինչպիսի՛ պար մը կը դառնան իր ոտքերը՝ կապարեայ ծանրութեամբ բեռնաւոր. եւ իր լեզուն ինչպիսի՛ մոգութիւն մը կը բարբառի:

Ատե՛նն էր այլեւս, խորհեցանք, որպէսզի այս կենսական հարցերը ներուժօրէն եւ խորապէս թրթրան հոգիներուն խորը անոնց, որ իրենց մէջ կը դգան զօրութիւնը ստեղծելու, կերտելու եւ կանգնելու: Եւ ցանկալով որ, վե՛րջապէս, Արուեստի Մեհեանին ճակատը փոզփոզէ ցեղին կուրծքին վրայ, մենք՝ միացած մեր կամքերուն մէջ, եւ բռնուած ստեղծագործ խենթութեանց տենդովը, գիտակից այն ուժերուն, որ կը հանդիս տակաւին այս ազգին հոգւոյն խորը, կու գանք աղաղակել:

- ա) ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՀՈԳԻՈՅՆ.
- բ) ԻՆՔՆՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՁԵՒԻ ՄԷՋ.
- գ) ՄՇԱԿՈՒՄ՝ ԿԵՆՍԱՆՈՐՈԳ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՈՎ ՄԸ՝ ՀԱՅ ԼԵՁՈՒԻՆ.
- դ) ՁՈՒՏ ՊՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԵՌՈՒ ՊԱՀԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵՆԷ ԵՒ ԼՐԱԳՐՈՒԹԵՆԷ:

Կը յայտարարենք պաշտամունք եւ արտայայտութիւն Հայ Հոգւոյն. որովհետեւ Հայ Հոգին գո՛յ է, քայց դուն ուրեք կը յայտնուի: Պէ՛տք է բեկանել դատակնիքը, որ զԱյն լուութեան դատապարտած է:

Կ'ըսենք. առանց Հայ Հոգւոյն, չկայ հայ գրականութիւն ու հայ արուեստ: Ամէն ճշմարիտ արուեստագէտ՝ իր ցեղին հոգին միայն կ'արտայայտէ: Հայ Հոգին, դարբնուած մթին ու մե-



ծաշուք պատկերներով լի անցեալէ մը, լուսաւորուած տխրորէն սեւ արեւէ մը, թրծուած կեանքի մը մէջ, զոր Գողգոթայի ճամբաներ կ'ակուսեն, մեր օրերուն կը թուի ըլլալ հրաշք մը, որուն խորհուրդնորդ պէտք է արտաբերել: Հայ Հոգին իմացական տիեզերքին մէջ տարբ մըն է, որուն յայտնութիւնը պիտի գարմացնէ խորհող մարդկութիւնը: Պարզել այդ հոգին՝ հական պարտաւորութիւնն է ամէն հայ արուեստագէտի:

Կ'րսենք. արտաքին գործօններ — ստացական սովորութիւններ, օտարտի ազդեցութիւններ, զգացմանց խոտորում եւ ձեւազեղծում — տիրած են անոր՝ բայց չեն կրցած ձուլել զԱյն: Մենք կ'ընդհամարենք զԱյն, Հայ Հոգին, անոր ճանաչներուն կայծկոյտար գողթիւնեան եւ միջնադարեան փանդիոններու յարեուն վրայ, եւ իմաստին խորք մեր ժողովրդական աւանդովէ պերուն՝ վայտն զանակներ մեր ցեղային հանճարին: Կը զգանք, թէ մենէ իւրաքանչիւրին մէջ թաքցած է Ան, եւ, առհասարակ շունչին թիւղորումներէն միշտ կենդանի. պիտի բարբառի ա՛նմիջապէս, որ գտնէ իր ազատագրութիւնը: Ազատագրէ՛նք զԱյն, Հայ Հոգին, պայքարելով նոյն իսկ ինքզինքնու ղէմ, բոլոր կապանքներէն ու թոնոթիւններէն այլազգի ազդեցութիւններու:

Կը հաւատանք. Հայ Հոգին՝ Լոյսն է, Ուժն է, Կեանքն է, մարմնաւորուած անդրիական շքեղութեանը մէջ ԱՐԻԱԿԱՆ ցեղին, որուն կը պատկանինք:

Կը յայտարարենք ինքնուրոյնութիւն եւ անձնականութիւն մերի մէջ. որովհետեւ, հա՛րկ է կրկնել այս տարրական ճշմարտութիւնը, ամէն արուեստագէտ պարտի ըլլալ ինքնուրոյն եւ անձնական ձեւին ու խորքին մէջ իր գրուածքներուն: Որովհետեւ, հա՛րկ է բռնլ տակաւին, արուեստը՝ յայտնատեսական ստեղծագործութեան եղանակով, իրականացումն իսկ է ներքին եսին, որով եւ ո՛չ մէկ նախանշանակալ ազդեցութիւն կրնայ թոյլատրելի ըլլալ:

Կ'րսենք. մեր հոգին, որ Հայ Հոգին իսկ պիտի ըլլայ, պիտի ընդանցնի այն բոլոր ձեւերուն մէջէն, զորս մենէ իւրաքանչիւրին զգայականութիւնն ու ներքին կոտորթը կը թիւղորեն: Կը ժխտենք ի յառաջադունէ տրուած կաղապարեալ ձեւերու հարթ կաղիթ հպատակութիւն: Կը նախընտրենք արտայայտութեան գործիները՝ հարագատ բոլոր ձեւերը՝ որ կրած են Հայ Հոգին մեր տոհմային արուեստի ու գրականութեան մինչյայժմեան երեւոյթներուն մէջ, բայց կը յայտարարենք, բայց կը պահանջենք անկախութիւն արտայայտութեան ամէն ձեւերու, որովհետեւ կը հաւատանք, թէ մինչեւ որ չըլլայ ինքնուրոյնութիւն եւ անձնականութիւն ձեւերու մէջ՝ չենք ունենար ինքնատուութիւն, չենք ունենար ստեղծագործական նորանոր հարստութիւններ:

Կը յայտարարենք մշակում՝ կենսամորոգ պատուաստումով մը՝ հայ լեզուին. որովհետեւ կը հաւատանք, թէ մեր լեզուն կատարելագործման իտէալը՝ անբաւական կը համարի այն ասորեալը, զորս կ'օգտագործէ հայ լեզուն ներկայիս: Ո՛չ մէկ գաւառաբարբառ առանձինն՝ գոհացում կու տայ անոր, նոյնիսկ ըլլայ ան

ուսանիկ բարբառ մը՝ ինչպէս կը կոչուի պոյսաՀայ բարբառը։  
 Հոչակելով մաքրագործումը հայ լեզուին՝ բազմաթիւ օտարահունչ բառերէ, կ'որոշենք զիմել հայ լեզուին զանազան աղբիւրներուն, գրարարին եւ բնաշխարհի հայ բարբառին, եւ որդեգրել հարազատ ու հայեցի բառերը, բացատրութիւններն ու աստիճանները, եւ պատուաստել զանոնք մեր գրական լեզուին, առանց մեղանշելու անոր ներգաշնակութեան օրէնքներուն զէժ։ Կ'ուզենք չիմենել լեզուի զեղեցկազխութիւն մը՝ նոր գիծերու, նոր գոյներու, նոր շնչաւորու յաւելումով։

Կը յայտարարենք զուս գրականութիւնը հետու պահել քաղաքականութենէ եւ լրագրութենէ. որովհետեւ երկու վտանգներ են անոնք, լրագրութիւնը եւ քաղաքականութիւնը, որ մեր օրերուն դարանակալ կը սպասեն հայ արուեստին շուրջ։ Մենք զէժ չենք ո՛չ մէկուն եւ ոչ միւսին, ո՛չ լրագրութեան եւ ոչ քաղաքականութեան՝ ցորչափ անոնք իրենց զերին մէջ կը մնան։ Բայց մենք պիտի ըմբոստանանք ամէն անգամ, որ անոնք փորձեն արուեստին եւ գրականութեան անունով ներկայանալ եւ կամ գանոնք զէնք դարձնել իրենց նպատակին ծառայելու համար։ Մենք կը պահանջենք արուեստին կատարեալ անկախութիւնը։

Արուեստը՝ խենթութիւն մըն է, եւ իբր այս, ան կը մնայ վեր յեղափոխութիւններէ եւ յետաջրջականութիւններէ։ Ինքն իսկ ըլլալով կրօնական մոլեռանդութիւն մը, վե՛ր է նաեւ ամէն կրօնքէ։

Յեղ մը, որ կ'ուզէ ապրիլ՝ պարտաւոր է ստեղծել։ Մեհեան մը պէտք էր կանգնել։ Մենք կ'ուզենք ծառայել անոր կատուցման։ Մեր հայկական եւ խորապէս արիական հոգին՝ մերթ անսպասելի եւ տարօրինակ, եւ մերթ ամբարձիկ գիծեր պիտի գտնէ անոր սիւններուն վրայ, թերեւս անսխորժ, թերեւս ընդվզեցնող, բայց միշտ անկեղծ։

Մեհեան մը պէտք էր որ ստեղծուէր. մենք կ'ուզենք ստեղծել զայն։ Ո՛վ որ կը հաւատայ՝ թող ներս մտնէ, դրան առջեւ թողով անցեալին ու ներկային հանդէպ կոյրղկուբայնութիւնն ու նախապաշարումները, ներս տանելով երիտասարդութիւն, խանդավառութիւն, եւ մանաւանդ ստեղծագործական կորով։

Դրան վերեւը՝ իր աչքերուն պիտի բախի քանդակուած արձանագրութիւնը՝ ատեղծե՛նք։

Մտեղծե՛նք, ապրելու համար տեւականութեան մէջ. րստեղծե՛նք, հոն, այդ տեւականութեան մէջ, մեր ցեղին նոր շնչտերը աւելցնելու համար տիեզերական մեծ համերգութեան վըրայ։

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ	ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ
ՅԱԿՈՒ ԳԻՒՑԷՃԵԱՆ	ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ
ԱՀԱՐՈՆ	
digitised by	A.R.A.R.@

# ԶՐՈՅՑ ՄԵՆԵՆԱԿԱՆ ԵՌԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Սուրբհայր Երեմիայի Կաթողիկոսի լուսնալուսիններն և իմա զժամանակն անհոգիները:

Սուրբհայր Կարապետ չէ սրտապիտակ իրենց այժմէութիւնը մինչև որ պահող նշանաւոր հանգիստի բոլոր զբոսիւնները:

Սուրբհայր Կենսական է նաև Մեծնախնայնորէ կարգ ժամանակներուն ու սպասմաններուն նախորդ դասերու հանգամանքը: որչափնք զբոսի մը մէջ ամբողջ անհոգիները, փութիւնները, հիացումներն ու հեռակարային խանդավառութիւնները:

Անուստի այդ պրոյէքտ...

**ՀԱՐՑՈՒՄ** — Ի՞նչ է արուեստը:  
**Կ. ԶԱՐԵԱՆ** — Արուեստը բացարձակ խենթութիւն է... Աստուած ապաստարհելով անզոյութեան զէժ՝ սահղծագործեց. բանաստեղծը արարի: ին զէժ կ'ըմբոստանայ՝ նոր անզոյութեան զէժ: Արուեստը բժրոստութիւն է Աստուծոյ զէժ:

**ՀԱՐՑՈՒՄ** — Ի՞նչ գլխապատճառներն են միտում սկստի գնալ թե՛ քան թե՛ զարգանալ:

**Յ. ՔԻՒՑԻՃԻՃԻԱՆ** — Սկսելով շարքը այս յօդուածներուն, մենք նպատակ ունինք մեր գրականութեան վրայ, զանազան պարագաներու օգնութեամբ, իրենց սնամէջ բարձրութիւնները կ'որոշենք միջակութիւնները հասարակութեան կանչելու: ...Մենք պիտի մտնենք մեր գրականութեան մեծահանգիստներն ու մեր մուրճը պիտի փորձենք անոնց բաղնիքները գրաւոր բոլոր աստուածներուն ու կրօնաստուածներուն վրայ: ...Մենք պիտի փորձենք մեր մուրճը գտնել աստուածներու կոնակին: Պիտի փոխազնենք

անոնց անհարազատ գոյութիւնները, պիտի փռենք անոնց մոխիրները իսկական աստուածներու ոտքին տակ:

**ՀԱՐՑՈՒՄ** — Որո՞նք են արուեստին ճշմարիտ ակունքները:

**Կ. ԶԱՐԵԱՆ** — Հո՞նք ուր չկայ հոգեկան խորին կեանք, մտածումներու բուռն պայքար, անխնայ հարցերու անխուսափելի մրճահարում՝ հոն արուեստ չի կրնար ըլլալ: ... Արուեստը միտք արիւնի հրճուանքն է. հրճուանքն է նաև բախտաւոր տեսիլներու: ... Ձիւնը և Արիւնը ստեղծագործութեան կեդրոնն իսկ են, վասնզի առաջինը՝ նշանարանն է անարատութեան, իսկ երկրորդը՝ նշանարանն է գգայալատութեան գիւնիքն:

**ՀԱՐՑՈՒՄ** — Ի՞նչ սկզբունքներու վրայ կը յենու վերլուծման արարքը:

**Յ. ՔԻՒՑԻՃԻՃԻԱՆ** — Վերլուծումը կը սիրէ առաւելագոյն ա՛յն կալուածները, ուր բուսական կարեւոր ընդարձակութեան մը վրայ կը ծաղիկ Արուեստին փափուկ



պարտէզը: Վերլուծողը կը տարուի իր բնագլխէն, որ կ'առաջնորդէ զինքը անուններէն, գանձոք եղբորոջ ազուր բոյսերուն զանազանութեանը մէջ հաստատելու ծայր ձեւերուն ու բիւրեղացումներուն խուսափուկ նրբութիւնները: Ան կը սիրէ բոյսերուն բնականութիւնը ու լոյն համբոյր, որ տերեւներն ու ծաղիկները կը տեղաւորէ անտես ամպհովանիի ծը նման: Վերլուծողը մտիկ կ'ընէ նորատի թուփերուն սիրտը, ցօղուններուն բարախուն հասակը, երբ անոնք իրենց այլազանութեանը մէջ կը կրեն բնականութիւնը ու արիւն:

**ՀԱՐՑՈՒՄ.** — Արտճի եւն ժողովուրդի մը ապրելու եւ տեւելու կենսատու պայմանները:

**Կ. ՉԱՐԵԱՆ.** — Ժողովուրդը ծը, որ Հեքիաթներ կը պատմէ եւ երգեր կ'երգէ՝ պիտի ապրի: Բայց որպէսզի Մեծ Սիրտը նորէն բարձրացնէ իր իւրաքանչիւր եւ ամբողջական թնդիւնը, հարկ է ժողուել անոր կտորները եւ փնտռել անոր գոյացման, էրեւման նոր ձեւեր: ... Ոճը՝ ցեղին պատկերն է, զինանշանն է, թաղն է, զարդարուած թանկագին եւ խորհրդապահ քարերով... Ուժեղ անձնաւորութիւնը, ստեղծագործը, հանճարը, որ կը տեսնէ ամէն բան, պիտի տեսնէ եւ ոճը,

եւ պիտի յայտարարէ զայն: ... Հայրենիքին սիրտը պիտի ապրի Արուեստով եւ Արուեստին մէջ:

**ՀԱՐՑՈՒՄ.** — Ի՞նչ յատկանիւններ պէտք է օժնեցայ գրականութեան պատմիրը եւ ի՞նչ արժէք ունի գրականութեան պատմութիւնը ձեր մտածումներուն մէջ:

**Յ. ԲԻԻՏԻՆԻԱՆ.** — Մէնք, Մեհենապաններս, կը պահանջենք, որ մեր գրականութեան պատմութիւնը գրողները ունենան ամէնէն առաջ խոր հասկացողութիւն ու մարդուածութիւն միջնադարին գրականութեանց բոյսի երեսներուն, բոյսի անկիւններուն ու խորքերուն:

Պատմողը՝ պատմող բլլայէ առաջ, պէտք է բլլայ հոգեբան (ոչ ժրնեկն մրկայեայ), նոյնքան ալ իմաստասէր: Պէտք է ան հետազոտած բլլայ հին ու նոր բոյսը արուեստի հրաշակերտներուն նկարագիրը, համեմատած բլլայ հայ հոգին՝ հողիներուն հետ բոյսը այն ժողովուրդներուն, որոնց հետ նսկատապիրը դրած է զինքը նոյն արեւին տակ:

Մեր գրականութեան պատմութիւնը մեր երազին, մեր ոսկի երազին պատմութիւնն է:

**ՀԱՐՑՈՒՄ.** — Ի՞նչ նախապատճառներէ ու հեռանկարներէ դրդուած հուպակեցիք Հայաստանեայց Գրականութեան համագանակը, եւ ո՞րն է անոր իտէայը:

**Գ. ԲԱՐՍԵՂԵԱՆ.** — Հայաստանեայց Գրականութիւնը, կը հաւատանք, պիտի բլլայ լայն ու բուցարձակ արտայայտութիւնը Հայ Հոգւոյն եւ Հանճարին: Ան պիտի գրչադէ ինքնուրոյն ու սոճմիկ գիծագիծը հայ արուեստին ու գրականութեան, կը հաւատանք:

Կը հաւատանք, եւ մեր հաւատքը կը տանենք այսօր իրարու ձեռք սեղմած: Մեր եղբայրական ժպիտները անո՛նց, որ հաւատացին մենէ առաջ, անո՛նց, որոնց մէջ արձայունը կրեայ դտնել մեր ձայնը:

Մեր դուրդուրեանքն ու յարգանքը անո՛նց, որ, միջնադարէն մինչեւ մեր օրերը, Քույակէն մինչեւ Չարդարեան, Հայաստանեայց Գրականութեան ողին թրթրուցուցին զստեղծող եղանակներով:

երգերու եւ դմայլիկի կերու մէջ եւ մեղի յուսայ տուին, մեզ մխիթարեցին:

Հայ Հոգին, արտարեւում ցարդ, ընդհանրապէս, ժողովրդային Հանճարի արտայայտութիւններու մէջէն, եւ ա՛յնքան թիչ անկամ անհատ-Հանճարի բարախումներուն շնորհիւ, պիտի պանծայ գործերով, որոս արուեստագէտը պիտի կատուցանէ: Կարգը, այսուհետեւ, արուեստագէտինն է:

Հայ Հոգին՝ Արուեստի նորանոր արագացան մեւերու մէջէն, — ահա՛ Հայաստանեայց Գրականութեան իաջար:

Յ. Քրիճեհեան. — Հայաստանեայց Գրականութիւնը Հրաւէր մըն է ցեղին գաւակներուն:

Հրաւէր մըն է ան դէպի այն ասիւրը, դէպի այն տարածութիւնները ու բարձրութիւնները, ուր դարատը բնական մը Հետեւանքով ցեղը ինքզինքը աւելի համարձակ, իր Հանճարներուն մէջ աւելի արտադրող ու տառապանքին առեւն աւելի երկիւղած ու արտփուն կը գտնէ:

Հրաւէր մըն է ան դէպի Հայրենի կրկիրը, որ մեղի պէս ստրուկ ցեղերուն մէջ ստոր վրայ մնացող միակ աստուածունքութիւնը պէտք է ըլլար:

Մեր հրաւէրը ընդհանուր է: Ան կ'ուղղուի Հաւասար պաշտատնքով թէ՛ Պոլիսին, թէ՛ Մայր երկրին, թէ՛ Կովկասին, թէ՛ Ատրպատականին:

Կ. ՉԱՐԵԱՆ. — Երբ լայնածաւալ Հայրենիքի բոլոր անկիւններէն, լեռներու գագաթներէն, արտերու ծոցէն, ժայռերու բարձունքէն կը բարձրանան ձայները եւ երգերը անոնց, որ կ'ապրին՝ բստեղծելով եւ անխուսափելի պահանջը կը դպան ճակատագրորէն արտայայտելու Հոգիներու դողունքները եւ աչքերու լոյսերը, այն առեւն Հայրենիքի Միւտը պիտի թրթռայ զարմանալիորէն Հրաշալի կեանքով:

Ո՛ր մէկ կեդրոն: Աղքատի աչքերով շնայիլ ուրիշներու բրածին:

ՀԱՐՑՈՒՄ. — Խճ է բեմը կեանքանի պահող էական պայմանը եւ ինչո՞ւ թո՛յլ է մանուակակից բարոնը:



Յ. Քրիճեհեան. — Բեմը զերբ մըն է: Հոն ժամանակի, կացութիւններու, բառի անհուն անտեսութիւն է հարկաւոր: Բեմին վրայ ճիչ մը, առեւնին նետուած վանկ մը, յարմար լուծութիւն մը շա՛տ աւելի տպաւորիչ են, քան շողարձակ էջերուն պատկերափայլ բանաստեղծութիւնը:

Կ. ՉԱՐԵԱՆ. — Եթէ ներկայ ժամանակներուն մէջ թատրոնը գոյութիւն չունի, եւ հասարակաց խոյն է, որ անվայելութիւն կը տիրէ, պատճառը ա՛յն է, որ ներկայ ընկերութեանը, գանց ընելով հազուադիւրս արուեստագէտները եւ խորհուրդները, որոնք ազատութիւն կ'որոնեն, չունին ո՛չ կրօնական, ո՛չ Հոգեկան եւ ոչ տիեզերական մտադրազում:

ՀԱՐՑՈՒՄ. — Խճ բարեշրջումներ ապրած է մեր բանաստեղծութիւնը եւ ի՞նչ նոր առաջարկներ աւելի աչք մասին:

Յ. Քրիճեհեան. — Մեր բանաստեղծութեան մէջ վերանորոգումի փորձ եղած է 90էն ետքը՝ պատկերներու գեանին վրայ: Մեր իրապաշտները չեն իսկ անդրազարձած մեղեդիին աւագ կարեւորութեան վրայ: Ազատ ստանալը շուտով ի՞նչ անտազանդ քերթողներու սըրբապղծումին:

Մեր քերթողական շափը կը ծնայ աւելի քան երբեք խիստ վարդապետական: Ու կը դարձանան, թէ ինչպէ՞ս չենք փնտռած անոր ծագումը մեր մէջ: Ան տար կ'երեւի:

Ժողովուրդի բանաստեղծութեան մէջ Հատկապէս, թեւաւոր, ազատ է այդ շափը: Ան մեր շարականներուն մէջ կը ծրփայ սակի երկի մը նման, ծայրայեղ հասունութեամբ մը, Հետեւելով երկինքներու համերգին, գաշաւորութեամբ անոր զարկին, նուազումներուն ու ցայտեղներուն հետ:

Միջին գարու երգիչները բառերուն աստղութիւնը կը լսնցնեն իրենց երգին եզանակով: Տակաւին այսօր, երբ ժողովուրդը իր երգերը կը ստեղծէ, նախապէս կը շարձարուի անոր եզանակին վրայ:

Ինչ որ մեր սոցետը, ինչ որ մեր ցեղին բնազդը աշխատած է իրազործել, մեր պաշտօնական գրողները հետու են Հասկնալէ: Մենք առաջարկը բերինք Հայկական նոր Քերթողականին:

**ՀԱՐՑՈՒՄ** — Ի՞նչ կազուցուի կը պարզէ այսօրուան երիտասարդութիւնն ու ուսանողութիւնը:

**Կ. ԶԱՐԵԱՆ** — Այսօր, մեզ շրջապատող երիտասարդութիւնը մ'չ մտաւորական յանդուութիւն ունի, ո'չ որոնումներու ցանկութիւն եւ ոչ իսկ պարզ գեղարուեստական Հասկացողութիւն: Ան սորված է, որ մէկը գայ եւ մանրամասնօրէն իր առջեւ պարզէ այս կամ այն սխալները, այս կամ այն՝ այսօր փոխառփայական, վաղը բնկերային, միւս օրը գեղարուեստական օգուտը քաղելու ատկէ: Մտային ծուլութեան սոսկալի պատկերը կը պարզէ մեր երիտասարդութիւնը:

**Յ. ՔԻՒՑԻՃԻՃԻԱՆ** — Մենք կը Հաշտուինք մեր երիտասարդ ուսանողութեան նանիք երազներուն փաստակար պատրանքին հետ, Հերթէ է, որ անոնք, գրողներ եւ ուսանողներ, դիտակցութիւնը ունենան իրենց վրայ ծանրաջող բերին:

**ՀԱՐՑՈՒՄ** — Արուեստին հետ ի՞նչ

է ազերսր բարոյականութեան եւ անբարոյականութեան:

**Կ. ԶԱՐԵԱՆ** — Արուեստը բարոյականութեան կամ անբարոյականութեան գուր է. լաւ գրուած գործ մը միշտ բարոյական է:

**ՀԱՐՑՈՒՄ** — Տարակոյսի ու ժխտումի սեղաններէն կարելի՞ է օժեպ գործեր ակնկալել:

**Յ. ՔԻՒՑԻՃԻՃԻԱՆ** — Տարակոյսի ու ժխտումի սեղաններուն նակատագիրը սխալ է եղած: Կատարելի չգարչին տակ մենք կը դադրինք ուժով ապրել: Ժրխումները անէպցման կը տանին:

**ՀԱՐՑՈՒՄ** — Ո՞րք է ձեր կարծիքով հայ գրականութեան դժբախտութիւնը:

**Կ. ԶԱՐԵԱՆ** — Առհասարակ Հայ գրականութեան դժբախտութիւնը անոր մէջ է, որ ամէն երեւոյթի վրայ վարձապետի աչքով կը նայուի, եւ վարձապետի սահմանափակ մտային կարողութեամբ եւ սովորական երեւակայութեամբ կը ստեղծագործուի: Վարձապետը ամէնուրեք թշնամին է արուեստի, եւ ապագայ պարտաբար այդպիսիներու դէմ է, որ պէտք է ժողով: Անկցի՜ վարձապետը գրականութեան եւ արուեստի մէջ:

**ՀԱՐՑՈՒՄ** — Ի՞նչ է հիմա պայմանը ինքնատիպ եռչակուելու:

**Յ. ՔԻՒՑԻՃԻՃԻԱՆ** — Անհասկնալի, անկապ, անհասարակչիւս բլլարը Հիմա սլայման է ինքնատիպ եւ Հետեւաբար տաղանդաւոր Հոշակուելու...

**ՀԱՐՑՈՒՄ** — Որո՞նք են ձեզ խոզած տեսիլները, որոնց կենսագործման համար պիտի օւզէիք կոչ օւզղել իմն ու Ոոր գրողներուն, արուեստագէտներուն, մեծութեան խմոր ունեցող անհատներուն:

**Գ. ԲԱՐՍԵՂԵԱՆ** — Արուեստը՝ ազատութիւն է, բաւ ՎԵԻՆԱՅԻ Նշանակներէն մէկը: Գրականութիւնը՝ անկախութիւն է, պիտի ունեցնենք ես, եւ անկախութիւններուն ամէնէն մենք, ա-

մէնն թանկագինը, ներքին մարդուն անկախութիւնը, ուր մենք ինքզինքնուս հետ կրնանք ըլլալ՝ առանց արտաքին որեւէ միջամտութեան, քանի որ հոն մենք ինքզինքնուս վեհապետն ենք, վեհապետը մեր մտածմանց, մեր երեւակայութեան, մեր զգացումներու սահմանաւոր կամ անսահման աշխարհին:

Ասիկա ճշմարիտ է որքան ինքնատեղծ գործերուն, նոյնքան մեր դատումներուն համար՝ ուրիշ գործերուն վրայ: Կր սխալի՞նք թէ ոչ այդ դատումներուն մէջ՝ այդ շէ խնդիրը: Բաւ է՝ որ մեր բացարձակ անկեղծութեան մէջ ըլլանք հոն: Եթէ կան գրողներ, կամ քննադատներ, որ արտաքին աշխարհի յարաբերութիւններու, կախումներու, կեղծիքներու, երկիւղներու, նկատումներու հարկին տակ կը զգան ինքզինքնին գրականութեան աշխարհին մէջ ալ՝ կը նշանակէ թէ անոնք չեն գտած իրենց անկախութիւնը: Ստրուկներն են անոնք ու սրբապիղծները:

Գրական անկախութեան այս ըմբռնումը կ'ընդհանրանա՞յ, եւ գրականութեան աշխարհին անկախութեան սահմանները կ'ընդլայնի՞ն ասակաին մեր

շուրջը, եւ ե՞րբ՝ յատակ պատասխան չբնայ ատար, քանի որ մարդիկ՝ մարդիկ են, նոյնիսկ ըլլան տաղանդներ արուեստի ու գրականութեան գործերու համար: Ապաստելով ատար՝ հարթե՛նք:

Կ. ՋԱՄԵԱՆ. — Եթէ հայ ժողովուրդի դարերուն մարտիրոսութիւնը արեւմտեան կեանքի մէջ չպիտի կարողանար առաքելանալ եւ ստեղծել իր ատաղանդներուն զարմանահարչ պատկերը, եթէ այս բոլոր շարչարանքները պարի ու ծիծաղի պիտի վերածուին, այն ատեն ու՞ժը ունենանք ըսելու, որ մենք արժանի էինք մեր պատմութեան:

Յ. ՔԻՒՄԻՆՆԻՍԵԱՆ. — Կազմենք մեր մեծութիւնները: Կազմենք զանոնք մեր հայրենիքին ամէնէն նուրբ եւ ամէնէն ատկուն տարրերէն: Նեանք անոնց հողիին մէջ մեր լեռներուն ազատաժէ բարձրութիւնը, երկաթուղիները, մեր ջուրերուն մետաքսի պէս փափուկ փրփուրը ու մեր ծաղիկներուն արիւնը: Մեր աւերակներուն անհիւններովը խնկաւտանք մեր մեծերուն հողին: Մեր իրաւ ու ոչ իրաւ բոլոր փառքերուն խանդը թափենք անոնց սիրտին մէջ:

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

**Ֆ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն  
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց  
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը**

Պատմական, ընկերային և գիտական տեսակէտէ, այս վերջին 15 տարիները եղան խոռվայոյց ու բնորոշ: Թէև Համախարհային պատերազմ տեղի չունեցաւ, բայց տարի մը չանցաւ, որ աշխարհին մէկ կամ միւս անկիւնը տեղի չունենային արեւնայի բախումներ, ուր պղտիկ կամ քիչ մը աւելի մեծ երկիրներ չկոտին իրարու դէմ, երկու գերմեծերու քաջախիստներով և օժանդակութեամբ:

Շրջանային այդ պատերազմներէն յիշենք՝ Քորէան, Վիետնամը, Ալժիրան, Ասեզըր, Պիաֆրան, 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմը, և այլն: Գիտական գետնի վրայ պէտք է յիշատակել Մուրի Կակարինի անջրպետային Թոխըը 1961ին, և ամերիկացի աստղաւաւորներուն էջըը լուսնի վրայ՝ 1969ին:

Ընկերային մարզին մէջ, ընդհանուր մղում մը գէպի բնկերվարութիւն և, գրամատիական ու Համաշնամար երկիրներու միջև տիրող լարուածութեան մեղմացում: Արեւմտեան Հարուստ և մեքենականացած երկիրներուն մէջ՝ տեսակ մը վերադարձ գէպի նախնական պարզութիւնը, որ երիտասարդները կը մղէ լքելու քողքենի ապրելակերպը և զանոնք կը վերածէ խաղաղ, երբեմն բիրտ անխիտանականներու, որոնք կ'իյնան ճամբաները, կը լքեն տուն և տեղ և կ'ապրին նախապատմական ցեղախումբերու պէս: Այս շարժումին տուած են հիփիփիական մակդիրը:

Նիւթական յաստիքութեան, գիտական նուաճումներու և քաղաքական գէպերու այս արագ ընթացքը երբեք չէ տեսնուած պատմութեան որեւէ շրջանին: Կարծէք երկրագունտը աւելի արագ կը թաւալի և յեղաշրջումները գիրար կը հրմշտկեն: Նորարարութիւնը դարձած է այս շրջանին գլխաւոր յատկանիշներէն մէկը: Նորարարութիւն՝ հազուստ-կապուտի մէջ, նորարարութիւն արուեստներու մէջ, և նորարարութիւն՝ բանաստեղծութեան մէջ:

Բանաստեղծական գետնի վրայ նորարարութեան գլխաւոր պատճառները Հետեւեալներն են. նոր գրագէտները անզրադարձած են, որ կարելի չէ Հասնիլ հինբու կատարելութեան Հետեւելով անոնց հետքերուն, երկրորդ՝ հին գրելածին ու Հողերանութիւնը շին պատշաճիբ արդի մարդուն, և երրորդ՝ անխիտանութիւն և յարգանքի պակաս՝ հիներուն հանդէպ:



Դասական գրականութիւնը աշխարհի վրայ տիրեց երկու հարիւր տարի, երկու հարար տարի, եթէ հաշուենք Հիները, անոր յաջորդեց վիպապաշտութիւնը, որ տիրեց վաթսուն տարի, յետոյ եկաւ խորհրդապաշտութիւնը, որ տեւեց երեսուն տարի եւ, վերջապէս, ծնաւ դերիքապաշտութիւնը, որ տեւեց երեսուն տարի: Երբ տեւեց կրօնը, այժմ չէ կարծել, որ անոնց աղէթութիւնը մէկէնմէկ չքացաւ, որովհետեւ ե՛ւ դասականութիւնը, ե՛ւ վիպապաշտութիւնը, ե՛ւ դերիքապաշտութիւնը կը մնան կենդանի տարրեր եւ կը շարունակեն արգասաւորել մեր այսօրուան գրականութիւնը:

Փամանակին՝ յեղաշրջումները կը կատարուէին երկար փնտռութիւններէ եւ պայքարներէ ետք, որոնք կը տեւէին տարիներ: Յաղթական նորերը չէին արճաւարճեր սակայն Հին արժէքները, կը բանաձեւէին իրենց մտածելակերպը ու Հինին վրայ կ'աւելցնէին նոր բան մը: Այնպէս որ՝ տիրող շարժումին կը մասնակցէին բոլոր արժէքաւոր զրազէտները եւ հաւատարիմ կը մնային անոր՝ մինչեւ իրենց մահը:

Այսօր յեղաշրջումները կը կատարուին անհատներու կողմէ, յաճախ կամայական մղումով, պարզապէս նորութիւն մը բերելու համար: Երբեմն պզտիկ խմբակներ կը հաւաքուին ու կ'որոշեն յեղաշրջում մը առաջ բերել՝ միմիայն տարրերելու համար միւսներէն:

Ներտեսչ գերիքապաշտութիւնը, գրական բոլոր շարժումները յաղթանակը տարած են երկար փնտռութիւններէ ետք: Անոնց Հիմնադիրները աւրամարտութեամբ արտայայտած են իրենց նոյնիսկ անհնթեթ զազախարները եւ այս պատճառաւ համակրանքը չհանած են շտտերուն, որովհետեւ արամարտութիւնը մարդ արարածին զլիաւոր յատկութիւնն է:

Այսօր, սակայն, կատարեալ անշիջանութիւն մը կը տիրէ բանաստեղծութեան աշխարհին մէջ: Իւրաքանչիւր բանաստեղծ, իւրաքանչիւր խմբակ բռնած է ուղղութիւն մը, որ յաճախ անելով մը կը վերջանայ: Իվնով անուններուն ցանկը կ'երկարի օրըստօրէ: Ատեն մը պիտի գայ, երբ այլեւս նոր մեւ մի չգտնելով՝ բանաստեղծները պիտի Հետեւին Հանրի Պրեմոնի սահմանումին եւ գայն գործողքեն տառաջօրէն: Պրեմոնի սահմանումը Հետեւեալն էր. «Ջուտ բանաստեղծութիւնը՝ լուսիւն է»:

Այսօրուան բանաստեղծները մեծ աղճուկ կը հանեն, թէեւ անոնց ունկրդիքներուն թիւը շատ սահմանափակ է: Այսօրուան բանաստեղծութիւնը շատ կը սիրէ աղճուկը, մայնրու աններգաշնակ խաղը, որովհետեւ ան չեզոք է իր մայր նպատակէն, եւ երբեմնի այդ վեսքալը, որուն վրայ մահկանացուները կը վախճային աչք նետելէ, այսօր վերածուած է հասարակ պերճողի մը, որ կը ճշայ ու կը պարէ ցեխոտ հրապարակներուն վրայ, հասարակ ձեռնածուի մը բարբառնաքներուն կտուրով:

Այս խառնիճախանը արուեստական բան մը ունի եւ կը նմանի ովկիանոսներու մակերեսային ալիքոծութեան: Մինչդեռ յառակն է կարեւորը եւ յատկաւ կը մնայ խաղաղ ու խորհրդաւոր, եւ Հո'ն է, որ ջուրերու զաղտնի ալիքիմիակութիւնը ծնունդ կու տայ կաթնաթոյր եւ կապտաւուն մարգարիտներու: Այդ արուեստական ալիքները չեն կրնար խոսիչ բանաստեղծութեան անհուն ովկիանոսը, ուր կրնան նաւարկել միայն իրաւ ներշնչանքները:

Ականջ գնենք ալիքոծութենէ ախորժող նորերէն մէկուն:  
 «Քեր բանաստեղծութիւնը հիւնցած է, ծերացած է: Դուք հնարեցիք շարժարանքի գարծիքներ, որոնք կը կոչուին հատած, նմանատառութիւն, սոսք, յանգ, հնչեակ, զեզօմ, պալադ: Բայց չկրցաք չորցնել բանաստեղծութեան ակը, եւ այդ ակը՝ ե՛ս ձեզի պիտի բտմ թէ ինչ է:

«Մեմք հնարեցի՞մ տեւական խոսվութիւնը, նախապետութիւններու

գահավիժումը, ուներզ կերիլլան, իննք յոյսը... Մենք երկրագունտը վերածեցինք ճարհնի մը ծաւալին: Մենք հնարեցինք ցցումաթիւնը եւ շարժումը, ցուցափեղկերու փշրումը, բոցարձակը: Ա՛յս է մեր տիեզերքը, ա՛յս է մեր բանաստեղծութիւնը:

«Կեանքը կ'ընթացայ հրթիռներու արագութեամբ: Ինչի՛ կը ծառայէ գրիչը: Մենք իբր գրիչ ընտրած ենք *Լեզբ* ճառագայթը:

«Մեզի համար բանաստեղծութիւն կը նշանակէ ապրիլ, զգալ կեանքը, նայելուրարար արեւին տակ, առանց կօշիկի եւ պաշտպանի պարագ մնալու մեր իրաւունքը: Բանաստեղծութիւնը ապրելակերպ մըն է, գեղեցիկ ապրելակերպ մը:

«Մեզմէ ռմանք մեզի կ'ըսեն. «Պիտի լափենք մեր ժառանգութիւնները, եռշունջարդարի պիտի ենթարկենք մեր ինչէրը, մոխիրի պիտի վերածենք մեր գիրքերը, մեր դրամով փարթամ ինքնաշարժներ պիտի գնենք: Պիտի հալեցնենք մեր ոսկի ակումները, մեր դժուարիներուն մագերէ կեղծամի պիտի վերածենք մեր համաճուտիներուն համար, բայց մեր ծարպը օժտուի պիտի չլիերածենք, արովհետեւ որոշած ենք չլուալ մեր մեռելները...»

«Մեր բանաստեղծութիւնը լարուած ըմբոստութիւն է, անհնազանդութիւն, յեղափոխութիւն, պատերազմ: Զառանցանք եւ անկարգութիւն, պայտքութիւն, գայլոյթ: Արուեստ բառը իմաստ չունի այլիւս...»:

*Ժամանակին վտանգաւոր բան էր արձակագին ըլլալ եւ յայտնել ավանկարտ դազափարհներ, այսօր նշանաւոր դասնալու համար կը բաւէ ծայրայեղութեան դիմելը, անհնաթիւ պարզել իբր զբօշ եւ դասնալ հանրածանծթ:*

*Տաղանդը կարծես կարելոր չէ:*

*Ով որ բարձր կը պոռայ եւ կը հանէ այլանդակ ձայներ, ան բանաստեղծ կը նկատուի, որովհետեւ բանաստեղծութիւնը նախնական առաջնութիւն մը չէ, այլ՝ պատրուակ մը, որուն տակ կը ծածկուին խոստովանելի կամ անխոստովանելի դազափարհներ:*

*Բանաստեղծութիւն մը, որ իր սեռնդը կ'առնէ այսինչ կամ այնինչ դազափարսխօսութեան, կը դաւաճանէ ի՛ր իսկ սկզբունքներուն, որովհետեւ բանաստեղծութիւնը, ինչպէս բաժնէ բազմաթիւ անգամներ, զոց աշխարհ մըն է, ուր ենթակայ եւ առարկայ կը նոյնանան, ստեղծելու համար նոր աշխարհ մը, նոր տիեզերք մը, ուր ի զօրու չեն իրական կեանքի օրէնքները: Մզուած իրենց ներշնչումէն՝ բանաստեղծները կը պեղեն անտեսանելի, հոն գտնելու համար յաւիտենական ճշմարտութիւններ, զորս կ'արտայայտեն շատ քիչերուն հասկնալի լեզուով:*

*Անոնք, որոնք արդիականութիւնը կը շփոթեն արտասոցութեան հետ, կամ կեղծաւորներ են, կամ անպարարներ, որովհետեւ արդիական է ա՛ն, որ կը խօսի մեր սրտին եւ մտքին: Այս կապակցութեամբ կրնանք ըսել, որ շատ մը դասական արուեստագէտներ, երաժիշտներ, գրողներ եւ բանաստեղծներ աւելի՛ արդիական են քան բոլոր անոնք, որոնք իրենց տաղանդը կը մըտխեն կարծեցեալ նորարարութիւններու սիրոյն:*

*Մեր յօդուածաւարքին այս բաժնին ընդդրկած 15 տարուան ժամանակաշրջանին մէջ, ստեղծագործած են բոլոր հասանքներուն պատկանող բանաստեղծներ, թէ՛ աւանդական ուղիին հաւատարիմ հետեւողները, թէ՛ իրենց ներշնչմամբ զարտուղի արահետներու մէջ փնտռողները եւ թէ՛ անոնք, որ ինչպէս ՎԹԵԼ Գիլջի խուճրր, բանաստեղծութիւնը վերածած է անհեղինակ խաղի մը, կամ ինչպէս լիբրիսթները, որոնք նախադասութեան եւ բառին տեղ կը գործածեն տառը՝ իբր անկախ էութիւն:*

*Այդ թոհուրոհին մէջ տուայտող, այդ անհնաթիւն ճիւղաններուն մէջ*

արհեստագործ եղող այս երիտասարդները, որոնք երիտասարդութիւնը տեսան աւելի իբր ճուրջ երեսով, պոստային իրենց զայրոյթը աշխարհի մեծամեծներուն եւ տիրող կարգուսարքին դէմ: Եւ այդ զայրոյթին հետ խնդրոյ առարկայ դարձուցին թեզուսուած մտածելակերպը, ընկերային հաստատութիւնները, զազափարախօսութիւնները:

Այդ երիտասարդներէն նոյնիսկ ամէնէն խելօքները, որոնք հաւատարիմ մնացին աւանդական արժէքներու, բանաստեղծութեան հազրուցին նոր տարրազ եւ որդեգրեցին նոր գրելածնա մը, ուրիշ վտարուած են արամարանութիւն եւ բանականութիւն կոչուած նախկին տարրերը:

Միւսները, աւելի սանձարձակ եւ աւելի անիշխանական՝ մէկ ոտուամով հասան արտայայտութեան այնպիսի սահման մը, որմէ անդին կը տարածուին ունայնութեան ասփերը: Ետտեղ նոյնիսկ կասկածի սակ առին բանաստեղծութեան լրջութիւնը եւ գայն վերածեցին ձրի եւ անհեթեթ խաղերու, որոնցմէ իրենք իսկ հանոյք չէին կրնար առնել: Նոյնիսկ գերիպաշտներու արտասուցութիւնները ինչ ու յստակ գրութիւններ կը թուին այսօրուան շարժականութիւններուն հետ բազդատուած:

Եստ մը ջննդատներ կը վարանին բանաստեղծութիւն տեսնել տալ այդ խաղերուն, որոնց կը պակտի ան խորհրդաւոր միտոյրաւը, զոր բանաստեղծը կը յղանայ, երբ ներաշխարհը կ'որդասուարէ ներշնչումով:

Բարեբախտաբար, շատերու համար բանաստեղծութիւնը կը մնայ մարդկային մտքին գոհարը եւ ինչպէս կ'ըսէ Արապոն՝ «Այլիմիպապիտաւրիւն մը, որ տկարութիւններ կը վերածէ զիջեցկութեան»:

Անցնելէ առաջ նորագոյն բանաստեղծներու ծագկաբաղին, ահա քսուեակ մը, լեքրիստ գարոցի 'իմնադիր' Իդիտոր Իզուէն: Քուսակը վերարտադրուած է Հայերէն տասներով:

Ակուտարնիմէ ժափուրիքայի արիա փայլա  
Ակուտափուրէ ժանելէ քուայիս արիքա մելէ  
Ակուտափուրա փուլիփալ օւէ մալոֆա վիէ  
Ակուտափուրա ժանելէ փուլիփալ ժափալ տկուա

Ամբողջ հատարներ գրուած են այս եղանակով եւ այս սճով: Ընթերցողը կրնայ չփոթի մատնուիլ եւ կարծել, որ այս սողերը գրուած են փափուսցի կամ թայլանցի բանաստեղծի մը կողմէ, իր երկրին լեզուով, մինչդեռ անոնք գրուած են Փրանսերէնով արտայայտուող բանաստեղծի մը կողմէ, որ ուզած է նախադասութիւնը եւ բառը փոխանակել տասով: Արդիւնքը ո՛չ միայն առարոց է, այլեւ ծիծաղելի:

Եթել Գնլը կոչուած խմբակն ալ որդեգրած է գրելու ձև մը, որ կըրնայ կիրարկուել Յ տարեկան մանուկէն մինչեւ ութսուն տարեկան ծերունիին կողմէ: Նոյնիսկ գրել-կարգալ գիտնալը անհրաժեշտ չէ: Կը բաւէ ունենալ օրաթերթ մը, մկրատ մը եւ սսիքնի սրուակ մը:

Մկրատը կ'առնեն եւ թերթին մէջէն կը կարեն նոյն երկարութեամբ սողերը:

Սոսինձը կը քսեն ճերմակ թուզթի վրայ,  
Յետոյ՝ սողերը կը փակցնեն իրարու տակ, եւ՝  
Ստեղծած կ'ըլլան «հանճարեղ» բանաստեղծութիւն մը:

Նմոյշներ տալու անհրաժեշտութիւնը չենք տեսներ, որովհետեւ իւրաքանչիւր ընթերցող կրնայ անձամբ պատրաստել իր ուզած նմոյշը: Կարեւորը մկրատ գործածել գիտնելն է:  
Նիժա անցնինք թէեւ տարօրինակ, բայց աւելի լուրջ բաներու:

ՊՈՐԻՍ ՎԻԱՆ.— Մեծ է Փարիզ, 1920ին, եւ մեռած՝ 1959ին: Յետպատերազմեան շրջանի ամէնէն զարուգի դէմքերէն մէկը անկասկած: Հռչակաւոր Սանթրալ դպրոցէն վկայեալ երկրաչափ, ան պետական պաշտօնեայ է ցերեկը, իսկ գիշերները փող կը հնչեցնէ Սեն ժերմէն-ակ-Փրէ Հռչակաւոր մասաններէն մէկուն մէջ, ուր կը խուժէ տեղական գոյնի սիրահար միջազգային ընտրանի մը: Վիան կը նախըզա՞ր արդեօք իր կանխահաս մահը: Թերեւս Ամէն պարագայի, ան մրցումի ելաւ ժամանակին հետ եւ իրարու հասնէ արտադրեց վէպեր, պատմուածքներ, սենարիոներ, թատերգութիւններ, երգեր եւ պոեմներ: Իր բանաստեղծութիւնները Հրատարակուցան յետ-ժահու, «Պիտի չուզէի սասկիլ» հատորին մէջ:



ՊԻՏԻ ՄԵՌՆԻՄ ՈՂՆԱՅԱՐԻ ԽԼԻՐԴԷ ՄԸ

Պիտի մեռնիմ ողնայարի խլիրդէ մը  
 Եւ այդ պիտի պատասի իրիկուն մը  
 Ջինջ, տաք, ցանկայարայց եւ բարոզ:  
 Պիտի մեռնիմ արմատախլուած սրունքէ՝  
 Հոկայ ծակէ մը խայտաղ եսկայ անկտի մը կողմէ,  
 Պիտի մեռնիմ հարիւր ենգհերէ,  
 Երկինքը ինկած պիտի ըլլայ վրաս  
 Եւ պիտի փշրուի ծանր ապակիի մը պէս...  
 Պիտի մեռնիմ քաֆուն վերքերէ,  
 Բացուած՝ առտուան ժամը երկուսին,  
 Ճաղատ եւ վարանոզ դահիճներու կողմէ,  
 Պիտի մեռնիմ՝ առանց զգայաւ,  
 Որ կը մեռնիմ: Պիտի մեռնիմ  
 Թաղուած չոր անբակներու տակ...  
 Պիտի մեռնիմ մերկ, կամ կարմիր կտաւ հագած,  
 Կամ կարուած պարկի մը մէջ անձիի շեղքերով...  
 Պիտի մեռնիմ, երբ քակեն կոպերս  
 Կտաղած արեւի մը տակ,  
 Երբ սկանչիս ցած ձայնով  
 Փսփսան հայտնայանքներ.  
 Պիտի մեռնիմ՝ տեսնելով մամուկներ, գորս կը չարչարեն  
 Եւ մարդիկ՝ զարմացած են ու սծգոյն,  
 Պիտի մեռնիմ՝ ողբ-ողջ կրծուած  
 Որդերէ, պիտի մեռնիմ՝  
 Ձեռներս կապուած ջրվեժի մը տակ,  
 Պիտի մեռնիմ երկիզուած տխուր հրդեհի մը մէջ:

(«Պիտի չուզէի սասկիլ»)

ԺԵՐԱՆՏ ՆՐՎԻԾ.— Երան է Մար-  
տէյ, 19 Օգոստոս 1921ին: Բարեկամ բա-  
նաստեղծի մը Հետ Հիմնած է «Բանաս-  
տեղծական գործունէութիւն» պարբերա-  
կանը: Թշուառութենէ մեռած է Փարիզ,  
28 Փետրուար 1960ին:  
Հրատարակած է՝ «Մուշ Կնոց» եւ  
«Եօթը պատուիրանները» Հատորները:

**ՔԱՆԻ ՄՈՒ ՔԱՅԼ ԻՒՍ**

Երբոր արձակեմ բույս ուժերս  
փրփրացոյ փեղկով,  
մէկը պիտի անցնի  
խեղճ ու կանայ փողոցէն,  
փողոցէն՝ որուն բարբիջիները ճիշեր են:

Տեղ տուէք ամբան ցուրտին.  
փայլատակող կոճեր  
կ'անուշահատեն  
գիշերուան խուսափող ճառագայթները  
մինչեւ լուսիւն.  
ճեղ ու գորուար ձեռքը  
կ'անցնի պատուհաններու տակէն,  
կ'անցնի՝ առանց բարեւելու  
հունին ցօղունը,  
կը ծակէ դէմքերը,  
վազէն կապուտցած մեծ դէմքերը  
եւ գորս կը ճամլան յանկարծ  
ամայի զրհորներուն մէջ:  
Ճայթեցէ՛ք, քէ՛ք  
արհամարհանքի երկար բոցեր.  
պիտի ըսուի խօսք մը,  
որուն մէջ ելեւան պիտի գայ  
վարանող եւ յաղթական մարդը,  
իմպէտ դրօշակ մը,  
իմպէտ կարծր գարուն մը  
կապոյտ յորձուկով,  
ճաթրտած եւ ազտուտ քազով,  
վտանգներով:

Մարդ մը պիտի իջնէ սեւ ու սահուն փողոցը  
բացօդեայ,  
մարդ մը պիտի անկնդրէ անցքը  
գուրգուրանքիմ,  
պսկուած բուռնցքներուն մէջ:

*Ճե՛րմը՛ ֆր՛եւո՛ւ — Ծնած է 1922ին,  
 Ֆրանսայի Հիւսիսային շրջանը: Երկուս-  
 սարդ Հասակին ժառանգեցաւ Համաշ-  
 խարհային Բ. Հակաամաժարսին, յետոյ  
 քաշուեցաւ Հրապարակէն ու շարունակեց  
 պայքարը՝ իբր զէնք գործածելով բա-  
 նաստեղծութիւնը: Փրկօ կը Հաւատայ  
 ժարդկային արժէքներուն եւ գտնոնք  
 կ'երգէ իր յայն շունչով:*

**ԵՍ ՕՏԱՐԱԿԱՆ ՄԸՆ ԵՄ**

Ես օտարական մըն եմ: Սուգօ կրեցէ՛ք,  
 ես չեկայ շարունակելու համար հայրօ,  
 ոչ ալ ուղք-ուղք քաղաւելու ձեր բարեկեցիկ տուններուն մէջ,  
 Ուր եղբայրս միշտ քնացաւ մէկ աչքը թաց:

Ես երկոյորէն կը նայիմ կեանքին եւ կու տամ ամօր ամօնը,  
 ես պաշտօն կը ստանձնեմ հոտստելու համար ձեր արիւնը,  
 Ես ա՛ն եմ, որ կը մնայ անցորդներուն մէջ.  
 Ես ոչնչութեան մէջ մարդկութեան դեպքանն եմ:

Ընտանի՛ք, քեզ կը լքեմ այսքան գիշերներէ ետք,  
 Ի՛նչ գործ ունիմ ես ձեր հայելիներուն մէջ: Լաել  
 եւ անձամբը ձգել անթորհուրդ մեր մարմիններուն վրայ,  
 Որովհետք ամ շափուի ձանձրոյթի ուրաւականներուն հետ:

Ես չեմ ուզեր գիտնալ, թէ ի՛նչ եղան  
 Մաճկութեան եւ մեռած սէրերու բաները,  
 Մօրս գերեզմանը կը պահէ անոնց բոյրը.  
 Բացակայութիւնը տխուր եւ մերկ ձեռքերով պառաւ մըն է:

(«Որսակարգ»)

**Ո՛Ձ ՄԷԿ ԲԱՆ ԿՐՆԱՐ ...**

Ոչ մէկ բան կրնար մեզ կեցնել այն շրջանները՝  
 Աւագէ եւ հալած օսկիէ: Փոքօրիկներուն ծանր ջուրը  
 Կը հարուածէր ցառկը եւ սիրտս հաւատարիմ էր մեկնումներուն:

... Կ'ունկնդրեմ լուս փոփոխութիւն մը, որ կը ծնի մէջս  
 Երիտասարդութիւնս կը վերջանայ ամսուան դարձուածքին:  
 Բաց անդունդին առջեւ՝ ես ձայն չունիմ այլեւս:

Աշտարակներու վրայ կը հնչեն յիշողութեան ժամերը:  
 Միրոյ երկիրները այնքան հեռու են, որ կարելի չէ եւաւտալ անօր.  
 Ինձի կը մնայ ծերամալ երկու հոգամասերու միջեւ:

Բոյրը հին թոյներէն՝ յոյսը ամէնէն լեզիմ է:  
 Ազդիկները եւ զինին կ'երգեն նոյն եղանակը:  
 Կեանքիս մաւակը կ'երթայ զէպի ծովուն թացերը:

ԻՎ ՊՈՆՏՖՈՒՍԱ.— Մեան է թուր,  
 1923ին, ինքզինք պարտադրեց զան ան-  
 բեկանին հրատարակած իր անալիս հա-  
 սարով: Անոր բաները ունին կախարդա-  
 կան ներգործութիւն ժը: Զգոյնութիւնը  
 զուլումն է: Մանրասիւսն եւ լուրջ բանա-  
 անգծ ժը, որուն ներշնչումը զանգաղ-  
 օրէն կը բարձրանայ ասանձնութեան լըր-  
 հարէն:



Իր գործերէն յիշե՛ք՝ «Նարժում եւ  
 անշարժութիւն» (1953), «Նրէկ անապա-  
 տը կ'իշխէր» (1958), «Հակապաշտան»  
 (1962), «Գրումն էար» (1965):

ԻՍԿԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Անապատ պիտի տնուանեմ այն դղեակը, որ ծնայ,  
 Գիշեր՝ ձայնրդ, բացակայութիւն՝ դէմքդ,  
 եւ երբ օր մը իյնաս անբերրի հողին մէջ,  
 Ոչնչութիւն պիտի տնուանեմ կայծակը, որ քեզ ծնաւ:

Մտե՛ք երկիր մըն էր, գոր շատ կը սիրէիր: Կալ գաւ,  
 Բայց յախտեցականօրէն քաւ մուր ճամբաներդ  
 Կը քանդեմ տննչանքդ, ձեռք, յիշողութիւնդ:  
 Եւ քշեմսիդ եմ եւ գուր պիտի չուենամ:

Քեզ պիտի տնուանեմ պատերազմ եւ հետզ պիտի վարուիմ  
 Պատերազմի բոլոր ազատութիւններով եւ պիտի ունենամ  
 Զեւերս մէջ քաւ մտայլ ու բափանցիկ դէմքդ,  
 Եւ սրտիս մէջ, այն երկիրը, գոր կը լուսաւարէ փոքրիկը:

(«Նարժում եւ անշարժութիւն»)

ՍԻՐՏԸ ԱՆՔԻՊԵՏ

Այլեւ չեմ յիշեր երկինքի մէջ յագեած աստղերուն անունները,  
 Գլխաւոր երկինքները վազուց մեծած եմ ինձի համար:  
 Հուր, այս գիշեր, ինձի կը քերէ ստնաւայններ լողափներէն,  
 Վերջին կրակի մը տանգետածային զիպուածը:  
 — Լողափի ւտերակներէն մինչեւ ինձի բարձրացաւ ցարտը, եւ  
 հայելիներուն մէջ  
 Հողը կ'այլափոխէ կիներուն սառած դէմքերը, գորս կը ցցնո հովուն  
 Յիզակներուն վրայ...

Չեմ յիշեր այլեւ,  
 եւ սակայն պարտէր կրկին կը բացուի տարւոյն վախճանին,  
 Դարպառները չեն գիտեր չնայ,  
 եւ շնուցայ պարտէրներուն անաւոր լռութիւնը:



ԾԱՌԻՆ ԱՆՑԳԸ

**ԹՈՊԷՐ ՍԱՊԱԹԻԷ.**— Ծնած է 1923-ին, Ճրանտա: Ամէն բանէ առաջ Սապաթիէ քնարերգակ բանաստեղծ մըն է, որուն համար բնութիւնը՝ հովը, ծառը, արեւը եւ մայրակները հրաշալիքներ են: Աստուծոյ ստեղծագործութիւնը կը շողշողայ ամէն օր իրաւ բանաստեղծի աչքին եւ տն կը ստիպուի երգել իր հրաշումը, որուն մէջ վախի զգացումը տեղափառ չէ:

Հրատարակած է՝ «Արեւայի» տօներ» (1965), «Նաուս մը ձօնը» (1959), «Հեշտալի քայներ» ( 1966):

Ծառ մը կ'անցնի, մարդ մը կը նայի տնոր,  
 Եւ կը ճշմարէ, որ մագերը կանաչ են,  
 Կը շարժէ թեւ մը, ուր տերեւները կ'ազմկեն,  
 Փափուկ ձեռք մը՝ ֆաղելու համար ձմեռները՝  
 Դանդաղորէն կը սողոսկի պատին մէքէն  
 Եւ կը ստեղծէ պտուղ մը՝ փայփայելու համար ծովը:

Երբ մանուկը կու գայ. անտան է, որ կը խօսի,  
 Ան չի գիտեր, որ ծառ մը կրնայ խօսիլ,  
 Ան կը կարծէ լսել աւազի յիշատակ մը,  
 Ծերացած կեդիւր կը ճանչնայ գայմ,  
 Բայց կը վախճայ այդ դարուկ դէմքէն:

Ամէն մէկը կը հեռանայ — ան կը գողնայ քանի մը տերեւներ,  
 Ամբողջ ծառը կը շարժի եւ հրածնշտ կ'առնէ.  
 Հեղձի մը համար ան կու լայ եօթը աստղեր,  
 Աստղի մը համար ան կու տայ աչքերը,  
 Կը նետէ արմատը գետերուն մէջ:

Վերջին ճիչերը պիտի լինն կոկորդոները,  
 Երբ քայունները չքառիմ անոնց վրայ,  
 Մարդ մը մէկիկ-մէկիկ կը պատուէ աշունները,  
 Ծառին գաւազը կը տարածէ մերկ թեւերը  
 Եւ խօսեր կ'ըսէ, որպէսզի հովը խածնէ գամոմք:

(«Արեւայի» տօներ»)



**ՀԱՆՐԻ ՓԻՇԷԹ** — Մեծ և Շաթո-  
րու, 1924ին: Անըրպետային բանաստեղծ'  
անոր ձայնը մեզի կը հասնի համասե-  
ղութիւններու ջովէն: Բանաստեղծու-  
թիւնը իրեն համար հոմանիշ է մարդկու-  
թեան հաւաքական հոգիին: Բանաստեղ-  
ծութիւնը միեւնոյն ատեն աշխատանք է,  
արտայայտութեան լեզու մը, որ բառե-  
րու միջոցաւ կը ստեղծէ սիրոյ մթնոլորտ  
մը: Փիշէթ չ'ուրանար իր սիրած վար-  
պետներուն՝ Փեկիին եւ Քլոտէլին ազդե-  
ցութիւնները իր վրայ:

Իր գլխաւոր գործերն են՝ «Պոեմներ»  
(1946), «Քաղաքներու սունը» (1948),  
«Դուբլէա» (1950), «Առագաստին կեդրո-  
նը» (1952), «Պահանգները» (1957):

**ՀԱՆՈՒԳՈՒՆԻՄ 3**

Մարդիկ, յիշեցէ՛ք մեկնումներն ու հանգրուանները,  
Մարդիկ, այրած կոկորդով, խմեցի՞նք ազրիւրներու ջուրը,  
Մարդիկ, դուրսը ծռած, կառաշարները ձեզ կը տանէին,  
Մարդիկ, ձեզ կը տեսնեմ, երբ կ'արմիր վարդեր կը բաժնէիք,  
Մարդիկ, իմ փափկանկատներս, դուք թռչուններ կը սպաննէիք...  
... Մերկ մարդիկ, արգեօք անիծուած էիք հօրմէն մինչեւ որդին:  
Կըսեմ, որ ձեր արիւնին մէջ կը կրէք պատերազմը:  
Տոբէրներ, շինացի բեռնակիրներ, թամ-թամ գարնազ խափշիկներ,  
Ամերիկացի անգործներ, արար կարուանորդներ...  
Մարդիկ, որ ձեր մատը կը մխրձէ՛ք սկնկայն խաղողներուն մէջ,  
Անհայրենիք մարդիկ, որ կը խօսիք բազմաթիւ լեզուներ...  
Կանգը անոնց համար քիւրեզներու լոյսն էր...  
Սէրը պիտի չպագի այլեւ: Կեցէ՛ք, ո՛վ խռովարաններ...  
Ձեր սրտի հարուածներով կոտրեցէ՛ք լապտերներուն կեղծաւորութիւնը-  
Գիշերուան ազօտ լապտերները հայեայնաբաններ են:  
Նրկի՞նքը, կը թխտէ այրող արծաթէ դաճակներ:  
Պատի վար առնենք Ատաւածը: Սպասեցէ՛ք, որ գոյութիւն ունենայ:  
Ցեւառ թնդամօք մը օդը կը հանէ արեւը:  
Մարդիկ ձեռները կը գնեն իրենց աչքերուն վրայ: Խենթութիւն է:  
Գինով արեւը կ'անուամարկէ բարտիներուն մէջ,  
Եւ կ'արիւնի կերասներուն վրայ մինչեւ Ջատիկ:  
Այս երաշխի ի տես մեր գործաւորները կը յուզուին:  
Օդը լաւ է: Անոնց առածները կը ստեղծեն Տեառնընդառաջը:  
Ըմբոստութիւնը կը բացուի, ինչպէս Վրիստաւը, գոր կը գամեն:  
Արշալոյսի՞ն օւժանկուած կիւրտները կը տայրիւն.  
Եզանակները իրարու կը բայտին: Այլեւս չեն յիշեր:  
... Արիւնը կը ժայթ քէ եւ ցերեկը տեղ կ'առնէ՛ քարերուն միջեւ:  
Հիմա կըմանէ ըսել, թէ անոնք մեռան հայրենիքին համար:

(«Հակապոետներ»)

Կի ՔԱՊԱՆԷԼ.— Ծնած է Պեդե, 1926ին: Իր ժամակցութիւնը բերած է գերբնական շարժումին: Անոր ներշնչումի ազդեցութեամբ եղած են կախարչական գիտելիքն ու ալքիմիական իրազոյժումները:

Հրատարակած է՝ «Անու կենդանին» (1954), «Առայ տօները» (1967), «Ժամանակին օգակները» (1969):

**ԺԱՄԱՆԱԿԻՆ ՍՂԱԿՆԵՐԸ**

- Ճանեիք կը շարցնեն ծովը, քառանկերու ունին սեռային ամղամբ ճիշեր, որոնք կը մեռնին տնայապէս:
- Անոնք կը բնեն զգայնացնող ոչիւններ, կը բամեն արիւծը, կը ժայթքեն ծնիրներ, տեղատարափներ:
- Գազաքներ չօրին մէջ, դեղիններ չրհորին մէջ, Արարիոյ համայնքը, Ո՛հ, ծծումբը ձեռքին մէջ, փորին ծալքին մէջ, փտամի ուրախութիւն, Ինչո՞ւ կը փայփայես, միջատ:
- Արեւելի ծովերու գոռոզութիւն, այս հովը կ'արի մորթին տակ, համբոյրի խաւարծին:
- Անեւտները կը բզկտեն, կը բզկտեն մեծ ոտուներ ու խարին, որ կամզած է տանանդամի մը գազաքը, գերանդիի մը, ճեղքուած մկանները զոյց տալով երկինքի շարժուկներուն:
- Շամանդազներու լոյսին տակ՝ ճայեր արիւնելով կը մխրձուն յարդին մէջ, կարմիր՝ ինչպէս աչք մը շրջապատուած ոսկորներու շղթայով մը եւ գզացումի մը լպրծունութեամբ:
- Հեռացէ՛ք: Ես պիտի վագեմ խարտեալ չօրհրում վրայ, պիտի մտրակեմ քարերու եւ պիտի երթամ մեռելի մինչեւ Ղազի Այնթապ...:
- Դուռ մը կը շոտչէ: Համբոյրութիւն: Տեսէ՛ք անժամանակ մաւահանդիսուը լիճին մէջ:
- Առատը աչքերուն մէջ կը կառլի գերեկուամ վերքերուն, թայանքի լոյսը այն գեւեղութեամբ, որոնք կը խնդան չօրին մէջ:
- Եզիպասի ազդեցութեամբ, անգուք շրթունքներով, գիմիներու եւ փոթորիկներու պատճառով, ծիծեռնակներ:
- Զէնքերով ճերմակ գիշերը, լուսնով ծածկուած վագրով, բոցավառող գետափերու մօտ, գայլի բուն, ուշ գիշին մէջ, սատկած, խնձորինի ծաղիկն է կամ կարօտ մը, շուշանը սայալատակին մէջ, վերարկուին տակ գիշերը, թամբը ինչպէս մորթը:
- Լճումի կամ քերթաբարի կրակներ կը շրջապատեն թուրը, ուր դուն չկաս այլեւ, գեղեցիկ վեռիկ:
- Բայց ճիշեր կ'եզերեն այդ շունչը, գլուխները պոստած, փորերու ծղիտ, մրրիկ, ազնայարներ, անկիւմներ, այտերու խողերուն տօնը՝ ուրախութեամբ ստեմաններուն վրայ, վախի աստիճաններուն վրայ, որ կը հասնի խենթութեան, չօրի կեռ մը ոսկորներուն վրայ:
- Բացերը ծփացող արիւնը ոստումն է:

(«Առայ տօները»)

(ՇԱՐ. 7)

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Լ Է Ո Փ Ո Լ Տ Լ Ա Պ Է Ց

Գ Ի Ո Ղ Ն Ե Ր ՈՒ Ն Ա Կ Ա Տ Ա Գ Ի Ր Ը  
Յ Ե Ղ Ա Փ Ո Ս Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ ՈՒ Մ Ն Ե Ր ՈՒ  
Ը Ն Թ Ա Ց Ք Ի Ն

Հայացուց  
Ք Ն Ա Ր Ճ Ի Ն Պ Ա Շ Ե Ա Ն

Գրականութեան եւ յեղափոխութեան փոխարարութեանց գլխաւոր եւ մեայուն թեմաներէն մէկը կը հանդիսանայ գրական գրայութեան եւ քաղաքական հակադէմոկրատիայի, գրողներու եւ յեղափոխական զինավարներու միջեւ անկէ ունեցող արտակարծութիւնը: Յաճախ վերլուծողական ձեւով ակնարկութիւններ կը կատարուին վերեւ յիշուած հաստատումին շուրջ, բայց այդ ուղղութեամբ ամէնէն յառկանչական երեւոյթը կը պարզէ Ձինաստանը:

Ձինաստանի մէջ՝ ե՛ւ արդի գրականութիւնը, ե՛ւ յեղափոխութեան գաղափարը Արեւմուտքին ներածուած էին: Ձին մտաւարկանութիւնը նոյնպէս ձեւով ճիւղ արտագրութիւնն էր արեւմտեան մշակոյթի ազդեցութեան: Ատիկա մուտք գործեց Հոն 1911ին, Մանչու իշխանութեան անկումէն եւ չին գորգացած արարին անհետացումէն ետք: Արդի գրականութեան եւ յեղափոխութեան կապը ուրիշ ոչ մէկ անց աշխարհ սերտ եղած է, եւ ուրիշ ոչ մէկ անց այդ երկուքին խզումը եղած է այնքան ուժգին:

Ձինական արդի գրականութիւնը կը սկսի Հու Շի՛ի նախաձեռնութեամբ, ուր գոտական շինարէնին փոխարէն ժողովրդական լեզուն կ'օգտագործուէր՝ իբրեւ գրական արտայայտութեան միջոց: Այս առաջարկը բերող Հու Շի՛ի յօդուածը գրուած է, երբ չնկրեակը աւարտած էր արդէն Քուլումպիա համալսարանը: Թողուածը սպուած էր

1917ին, Փէքինի համալսարանի ճնար երիտասարդութիւնն հանդէսին մէջ: Անիկա կը նկատուի ազդանշանը չինական Մշակութային Յեղափոխութեան, որ յաճախ կ'անուանուի գրական վերածնունդ: Նոյն այդ Փէքինի համալսարանը չուտով պիտի վերածուէր Մայիս 30-ուի Շարժումներու քուրային, եւ պիտի դառնար նպաստաւոր գետինը ներմուծուող յեղափոխական շարժման: Իրերանման շարժումներ արդէն մղած էին դանոնք իրենց կապերը խզելու անցնելին հետ:

Առաջին՝ պէտքը, որ գրացուցաւ լքելու մահամերձ, բայց սրբասուրբ գրական ասանդութիւն մը, որ դարձած էր գաղանուսոյց եւ քանկագիրն, ու արտագրագրուած էր՝ վերածուելով խորթին ակնարկութիւններու եւ դատարկ հաստատումներու գրութեան մը: Սորմովի, բայց լքեալ ու չինցած ջլիչէններու մաշած լեզուն պէտք է փոխարինուէր չինացի ժողովուրդին կենդանի ու խոսակցական այն լեզուով, որով անցեալին չինական վէպեր արտագրուած էին:

Երկրորդը պարագան է չին կործանուող ընկերութեան, որ անկարող եղած էր արտագրելու բարեկարգութեանց բարձրորակ ձեւեր եւ պէտք ունէր յեղափոխութեան մը, որպէսզի կարենար տակալ 1917 եւ 20րդ դարերու ընթացքին Ձինաստանը ճշտող օտար ուժերու ազդեցութեան: Այսպէս, Ձինաստանի մէջ մարքսիզմը սնուցանեց այն երեւոյթները, որոնք, օրինակ, Երոպայի մէջ

չհաւուած էին դարձնել ընդունուած եւ գիւղացիական պատերազմներու մէջ, Ծրանասիան Յեղափոխութեան պարտազային՝ հայրենասիրական կոչերու մէջ, ուր հրաւեր կը կարդացուէր զկեանք պաշտպանելու հանրապետութիւնը եւ, վերջապէս, Ռուսական Յեղափոխութեան պարագային, որմէ առաջ Բողոքական ժառանգականութիւնը սուր ձեւով գրաց կը քողաքական եւ մշակութային հասկացողութիւններուն միջեւ տեղ գտնուած անհարգանքներուն եւ հրկրին տեսնական եւ բնկերային յետադիմութեան իրականութիւնը: Ակնհայտ էր, այստեղ աւելի տեղ ունի այլ հիմարտութիւն մը, քան պարագայէս հարապական գրական աւանկարտի եւ շնորհեան քողաքական վանկարտի ըմբռնողութեանը ներդասանականութիւնը: Բայց գրականութեան եւ յեղափոխութեան փոխադարձութեանը չուրջ տեղ գտած թիւրիմացութիւնները ուրիշ ոչ մէկ տեղ աշխարհ աւելի չհաւուած են, որքան Չինաստանի մէջ:

Քսանական թուականներուն չին գրողներու ժամ նկատելի են զաղտփարտանական ստորեր գիրքաւորումներ: Անոնք բոլորը կը միտէին յառաջդիմել՝ արդիականացումի միջոցաւ. ոմանք խանդավառուած էին ազատականութեամբ, ոմանք՝ Համայնագրութեամբ, եւ սուրիներ՝ անիշխանականութեամբ — բոլորն ալ ներածուած աշխարհահայացքներ: Երեսնական թուականներու չին մրտաւորականութիւնը կը դառնար աւելի արժատական եւ գրողներու մեծամասնութիւնը կը միանար Զախակողմեան Քեի Գրողներու Լիկայի Կուսակցութեան, որ հիմնուած էր 1930ի Մարտին՝ չին համալսարանի գրող Լու Հսունի ջանքերով: Ճափոնի հետ պատերազմի սկիզբը, այդ գրողներէն շատեր մեկնեցան Ինան:

Այսուհանդերձ, կուսակցութեան եւ յեղափոխական գրողներու միջեւ բախումը սկսած էր արդէն աւելի կանխիկ: Լու Հսուն, Ֆէնկ Հու-Ֆէնկ, Լու Ֆէնկ, Լու Շիու-Շուան եւ Սու Ուէն յաճախակի բախումներ կ'ունենային Լիկայի կուսակցութեան ղեկավարներու՝ Շու Շիու-Շէյի եւ Շու Շանկի հետ. վերջինը դարձաւ Գր-

նասանի Ժամանակը: Լու Հսուն մեռաւ 1936ին, եւ ինչպէս պատահեցաւ Ռուսիոյ մէջ՝ Գորկիի: Ան Գինաստանի մէջ կը հռչակուէր իրեն հիմնադիր սուրբը Համայնագրականութեան:

Ենանի մէջ, ուր գրողներ սկսած ասարտած կեցուածքներ ցուցաբերել՝ արտադրելով քննադատական գրութիւններ, 1946ին կազմուեցաւ Գրականութեան եւ Արուեստի Ատեան մը: Ատիկա Գինաստանի մէջ սեպտեմբերի 7-ը այն դերը, ինչ որ Ռուսիոյ մէջ սեպտեմբերի 30-ը Գրողներու Առաջին Համագումարը: Գինաստանի մէջ, Կուսակցութեան գրեց հակաշէտր գրականութեան վրայ Հաստատուած էր արդէն շատ աւելի առաջ, այն տակն, երբ Մաօ այլիս սկսաւ անհրաժեշտ շղանկ գրողները սիրաշահելու քողաքականութիւնը, այն գրողները, որոնք նախապէս կեդրոնացած էին Շանկ-Հայի մէջ: Մաօ Յէ Թունկ անմնայէս Հաստատուեց կանոնը, իր երկու ճառերով՝ սրուած Ատեանին. ան աշխատանքի գորակոչ կ'ընէր գրողներուն եւ կը հրաւիրէր գանոնը դառնալու արդիւտարականութեան եւ զանգուածներուն եզմերը, յայտարարելով՝

«Մեր Ապստակն է ապահովել յեղափոխական գրականութեան եւ արուեստին դէպի յառաջդիմութիւն տանող ուղի գնահատարիք: Ան սահմանեց գրականութիւնը իրրեւ թէ անիկա կոչուած բլլար սեռատարմորէն կատարելու յեղափոխական վարչամեթոտային ամբողջութեան մաս կազմող իր բաժինը»:

Մաօ կ'աւելցնէր.

«Ապա օրեմն, մարքս-լենինիզմը պիտի չկործանուէ՞ ստեղծագործ ազիմ: Ի նարկէ՛: Ամիկա պիտի կործանուէ որեւէ ստեղծագործական ազի, որ մաս չի կազմեր զանգուածին եւ պրոլետարիատին... Մտաւորականները իրենք գիրենք պէտք է նայնագնեն զանգուածին եւ ծառայեն զանգուածին: Այս արարքը վտանաբար պատահաւ պիտի դառնայ մեծ տառապանքներու եւ քայտամերուք»:

Այդպէս ալ պատահեցաւ:

Ատկէ ի վեր, Կուսակցութիւնը յաճախակի պաշարներով կը փորձէ շն-

չակնդմբ ընկել ընդդիմադիր գրողները ևս  
 Եկա պայքարեն-  
 րուն առաջինը պայթեցաւ Ենան Ծորու-  
 մէն անմիջապէս ետք, ընդդէմ Ուանկ Եի-  
 Ուէյի, Բլալայի Եուլալի (The Wild Lily  
 անուն ժողովրդական գրքին հեղինակին,  
 որ Համարձակութիւն ունեցած էր իր  
 գրութիւններուն մէջ յանապատեալու Կու-  
 սակցութեան քաարերուն մեծամտու-  
 թիւերը) Ենան Ծորումէն անմիջապէս  
 ետք՝ Ուանկ Եի-Ուէյ վերջնականապէս  
 կ'անհետանար հրապարակէն: Ուրիշ գր-  
 րող մը, Լուիս Եիւն, աշակերտը Լու-  
 Լուուի, Ենանի առեանին մէջ փորձեց  
 պիչուպանել Ուանկ Եի Ուէյը և անհետա-  
 ցաւ իր կարգին, 1944ին:

1949ին, Ժողովուրդի Հանրապետու-  
 թեան Հիմնադրութենէն ետք, ուրիշ բար-  
 քաթիւ գրողներ Հայաստանի ենթարկուե-  
 ցան, որովհետեւ չէին ուզեր Համակերպիչ  
 շրջանի փոխարեան իրապաշտութեան յի-  
 նարեան բարձրագոյն և կը ծառայէին իր-  
 բեւ րացասական օրինակներ գտնական  
 Եպայքարներու: Ընթացքին: Աւելի կա-  
 ռուի, Լուիս Եիւն, մանուրբացի ակամա-  
 ւոր գրողը թիրախ կը դառնար ուղղում-  
 ներու, երբ Կարմիր Բանակը գրուեց  
 Մանուրբեան (ուր ան կը կոչուէր Ֆետա-  
 յական խումբերու մէջ): Լուիս Եիւն մար-  
 քագործուեցաւ 1944ին: Յէնկ Լուս-Յէնկ,  
 Լու Լուուիի բարեկամը ևս Երկար Երթի  
 մասնակիցներէն մէկը կ'ենթարկուէր յու-  
 շորդական յարձակումներու: 1954ին ևս  
 1957ին: Զախ Թեւի Գրողներու Լիկայի  
 անդամ անոր պաշտօնակիցը՝ Լու Ծէնկ,  
 1965ի ամբողջ ասրուան ընթացքին կ'են-  
 թարկուէր Համրեղհանուր քարկոծումի:  
 Նուազ տաղակայի չէր կին նշանաւոր գր-  
 րող Թինկ Լինկի (Սասնիեան ժրջանակի  
 դափնեկիր) գէժ բացուած պայքարը, ո-  
 րուն իրբեւ պատիժ կը արուէր Կուսակ-  
 ցութեան պիւրոքորութենէն մէկուն գրա-  
 սենեակը աւելու պարտականութիւնը:  
 Հակա-աջ պայքարի նոյն աջ տարուան  
 ընթացքին կը դատուէր դիւցազներգակ  
 բանաստեղծ Այ Եի'նկ, ինչպէս նաեւ Նը-  
 ւազ Համբաւաւոր գրողներ, որոնք անխո-  
 ւհմութիւնը գործած էին հրապարակաւ  
 արտայայտելու իրենց զգացումները՝ Լու-

րիւր Մաղիկներու ազատութեան կարճ  
 ժամանակաշրջանին:

Յաջորդաբար այլ բարեմեծեր տեղի  
 ունեցան Կուսակցութեան և ուրիշ գրող-  
 ներու միջև, ինչպէս պատահեցաւ քնա-  
 րերդակ բանաստեղծ Զօ Եի'նկ-Յանկի  
 պարագային, 1959ին ևս 1960ին, բայց  
 ընդդիմադրութեան մեծ ոգին աստիճա-  
 նաբար պակասեցաւ ևս գրողներուն Համար  
 պակասեցոց իրենք զիրենք պարտադրու-  
 առիթները, մինչև որ անկէտ, ընդդի-  
 մադրութեան նոյն ոգին՝ վերջնականա-  
 պէս նգծուեցաւ Մշակութային Յեղափո-  
 խութեան ընթացքին: Այս պայքար ուղ-  
 դուած էր ո՛չ միայն Մարտի կուսակցական  
 հակառակորդներուն դէմ, այլև թիրախ  
 ունէր շինական մշակութային պատմական  
 տաւաթութիւնները: Մտաւորականներ,  
 ինչպէս նաեւ թանգարաններ յարձակումի  
 կ'ենթարկուէին Կարմիր Պահակազունդին  
 կողմէ, և կոմփիլիկոստեան աւանդութեան  
 դէմ պայքարը կը շարունակուէր անգամ  
 Մշակութային Յեղափոխութեան աւար-  
 աէն ետք:

Այսուհանդերձ, 1966էն ետք, միայն  
 Կարմիր Պահակազունդը չէր, որ շարու-  
 նակ նգծումի կ'ենթարկէր շին գրական  
 մտաւորականութիւնը, որ ծնունդն էր  
 1917 թուականէն ետք պատահած վերա-  
 ծնունդին, որ այնքան խանդավառու-  
 թեամբ որդեգրած էր յեղափոխութեան  
 Դաւար, Ձինաստանի մէջ: Անոնք կը մե-  
 կուսացուէին սիրբու զատակարգ մը, ո՛չ  
 անուշա սասնիեան զուլազներու նման  
 գանգուանային ձեռով, այլ շարունակա-  
 կան և տաղակայի պայքարներու միջո-  
 ցաւ, որոնք կը մղուէին՝ Եուսուցանելու  
 Համար Մարտի գանգուաններուն ծառա-  
 յելու: Կոչուած Ենանեան ցուցումները:  
 Մշակութային Յեղափոխութենէն ա-  
 ռաջ, կարգ մը գրողներու պարտադրուե-  
 ցաւ վերամշակել նախա-Համայնագար  
 Ձինաստանի մէջ հրատարակուած իրենց  
 գործերը և, ինչպէս Եոլիտով, Կլասիկով  
 և Ֆազայիս Խորհրդային Միութեան մէջ  
 րրին, նոյնպէս և շինացի այդ գրողները  
 շատամտեցան պարտադիր այդ աշխա-  
 տանքին ենթարկուելու: Ամէնէն նշանա-  
 կելի պարագան շին ժողովրդական և ա-

նի:խանական դրող Փոյ Ձինի պարագան է (որուն որդեկրան գրչանունը առնուած է Պարունիէն եւ Քրոփոթրինէն), որ Մառնի յաղթանակէն ետք սկսած բլլալով վերածչակուծի ենթարկել իր աշխարհա-հասցիսցը՝ բնգունեց համայնագրու-թիւնը եւ անմիջապէս յապաւուծի են-թարկեց իր գիրքերուն մէջ անց դասած անի:խանականութեան ի նպատակ բուր-խանդագառ արատայաութիւնները:

Մշակութային Յեղափոխութեան բն-թացքին, Ձինաստանի մէջ գրականու-թիւնը պարզապէս գաղղիցաւ գոյութիւն ունենալէ: Ոչ մէկ բան կ'արտօնուէր արդ-ւեւոյ, բացի Ղարապետած պաշտամու-տային գրութիւններէն, ուր կը գովեր-գրէր Մառնի Հաննարը եւ կասաղի յար-ձակուծի կ'ենթարկուէին անոր թշնամի-նեքը: Խորհրդանշական էր ա՛յն, որ չի-նական արդի գրականութեան եւ յեղափո-խական շարժումներու օրբան Փեքինի հա-մալարանը փակ կը մնար Մշակութային Յեղափոխութեան ողջ անեղութեան: Կարելի չէ աւելի ծայրայեղ օրինակով մը լուսարանել գրականութեան ու յեղափո-խութեան միջեւ գոյութիւն անեցող կա-պը: Նախաբխտանէական առաջին դա-րուն, չին կայսեր իշխանութեան ժամա-նակ գիրքերը կը հրկիզուէին ա՛յ թէ յեղա-փոխութեան անունով, այլ պաշտական պաշտօնեայի մը խորհուրդով, որ իր յու-շագրին մէջ գիտել կուտար, թէ Վճռո-ւթուրդը, որ կ'ուզէ ուսում ստանալ՝ հարկ է որ պաշտականները ունենայ իրբեւ ուսուցիչը:

Մշակութային Յեղափոխութեանէն ետք, կարգ մը գիրքեր սկսան երեւիլ հրա-պարակի միայ, բայց անոնք, բոլորն ալ, կը թուէին ղեկավարուած բլլալ, ինչպէս ստայինեան Ռուսոյ գրականութիւնը, վերադաստիարակելու համար չինական vydvizhentsyնը, գիւղացիութիւնը եւ աշ-խատարութիւնը, զաւակները զգանգր-

ւածին (որուն օգտին կը վերադասուէր նաեւ Փեքինի համալսարանը): Այսպէս, Մառնի մտայուն յեղափոխութեան կը զո-հարերուէին ա՛յ միայն չին մաստորակա-նութեան գրական ճաշակները, այլև ա-նոնց ղեկերային գերբրը: Վերադաստիա-րակութեան այդ աշխատանքներուն բն-թացքին անոնք պարտուոր էին բլլալ չն'ս կարմիր, ե՛ւ մասնազէտ: Մշակութային Յեղափոխութեան բնթացքին անոնք սա-սապէցան նաեւ ղեկերային անկումէ: Ձի-նական Յեղափոխութեանէն առաջ՝ չին մը-սաստորականութիւնը փոքր, բայց կարե-ւոր խմբակ մըն էր: Մշակութային Յեղա-փոխութեանէն ետք՝ գործնականօրէն ան-հետացաւ ան: Հնարաւոր չէր, որ կարե-ւոր կրկնել իր նախկին գերը: Մշակու-թային նոր քաղաքականութիւնը, որ ձե-ւով մը կը թուլցնէր Մշակութային Յե-ղափոխութեան կողմէ պարագրուած ձեռնակապերը եւ ոչ-մարքսիստ գիրքե-րուն շրջադասութեան համար թոյլ արբ-ւած արտօնութիւնը (ինչպէս Մոնթեսքի-էօյի «Օրէգմներու ոգին», Ռուսոյի «Ըն-կերային համաձայնագիրը» եւ Քիւստի-տիսի «Փշլոփոնեամ պատերազմի պատ-մութիւնը»), չէին կրնար, բոլոր պարա-գաներուն, վերակենդանացնել ղեկերային ձեւաւորումը, որ խորտակուած էր: Ո՛չ անգամ արեւմտեան մշակութային ազդե-ցութեան օտար քաղաքականութեան մը արեւելումը պիտի կարենար գեր մը կա-տարել ու Ձինաստանին վերադարձնել ա՛յն մի՛նակը, զոր ունէր անիկա նախա-պատերազմեան չրփանին: Ձինական գրա-կանութեան գասական գործերու «վերա-հաստատումը», որ արգիլուած էր նախա-պէս, թերեւ կարենայ վերստեղծել մշա-կութային շալ ունակելիութեան մը պայ-մունները, բայց մասաւորաբար պիտի չկա-րենայ վերապրեցնել արեւմտեան ազդե-ցութեան ծնունդ գարգացած մասաւորա-կանութիւնը:

(Շար. 3)

ԼԵՌՓՈՒՏ ԼԱԳԷՏ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ՏԱԳՆԱՊԱՀԱՐ ՄԱՆՈՒԿԸ — ՍԱԼԻՄ ՊԱՐԱՔԱԹ

*Բռնասեղծութիւնը զարգացնութիւն չէ: Կր ճերձէ վեճա-  
բանութիւնը, որովհետեւ չ'ընկուծիք արեւն սահմանում: Անիկա  
բժրուածի օգրիներուն զարգացման արժեքը կը բանայ անհաս-  
նն ի ստիճաններ:*

*Այս արեւ, Սալիմ Պարաքաթ, այս ճանակ-ձայնը կու գայ  
բանկելու: Ընկայնայ կասոյցներու անարժուութիւնը եւ շնորհիւ իր  
սիճակահասութեան զօրք կու գայ cercle vicieuxէն:*

*Յե՛ծպոյ՛ որչա Պարաքաթ եւս կը գրէ լաւ ժողովայն արժեք  
ժը իր բռնասեղծութիւնը կը կրէ հուսութեան բայթը: Կ'աննոր՛  
կի: Քին կ'ախարհանքը, շարգուածին հետաքրքրականութիւնը եւ  
զո սուր կ'առում ժը զի՛ղի անձեանքը:*

*Սալիմ Պարաքաթ կամ արտրական բռնասեղծութեան ա-  
ստեճանախորհնայ ճանակ-ձայնը, ժարգարհական, այսինքն՝ ան-  
բողջական ձայնին եւ ժեղք, եւ վայրայ ճանկութիւնն է:*

ԱՄԻՐԱ ԵՂ—ՁԵՑԻ

I

1951ին, Հիւսիսային Աուստրալիոյ Գաճիչի քաղաքի չքուոր ժէկ երդիքին  
ժէջ աչքերը կը բանար արտրական երկաստարգ բռնասեղծութեան զամն-  
նաչիւսացուածն, բայց գիւղացիի իր համեստութենէն ոչ իսկ կրամ ժը  
գիւղած ժիւածիս ճանուկը՝ Սալիմ Պարաքաթ:

Այնպիսի գոյնգոյն կեանք ժը չէր սահմանած իրեն: Անօթութիւնը,  
զրկանքն ու աստատարողը գարձան իրենց իրճիթին ներկայութենէն,  
որոնք բարեպաշտ հօր օւտին թախծանչիւն եղանակներուն հետ կոփեցին  
իր ճանուկ հոգին, զօրացուցին զաման ստորեան ու լեղի ճակատագիրը  
ճանկան ժը ժիւածիս հայեացքով եւ գիւղացիի հաստատ վճարակամու-  
թեամբ գիճագրուելու կարողութիւնը:

Բայց լաւ է, որ պահ ժը ինք խօտի իր գրականութեան եղանակներէն  
ժէկը հանդիսացող դասն ճանկութեան ճասին:

Եվ սիրեմ կեանքը, կը սիրեմ արեան հոսքին գեղեցիկ լինելութիւնը,  
որ եզաւ մանկութեանս հետ հասակ մետած ե'ւ քանկագին, ե'ւ անգութ,  
բայց անդաւաճան խաղրնիկերս: Ջայն ժառանգած եմ ոչնչպիսի հորմէս: Այն-  
հեր մեծ հօրս փոսը ինկած աչքերուն յստակ ու բարի հայեացքներու էջե-  
րուն կարդացած եմ այդ պարզ իմաստութիւնը, որ իր շրթներուն բազա-  
րոյ հեփիաթի բառերուն պէս ստիճանացած է ինձի. քէ մարդկային գոյու-  
թեան իմաստը կը կայանայ պայտարիմ մէջ. կեանքն ու աշխարհը զիմակա-  
լիլու, արիւնջիլու, ասպետի մամ գայն կարեճալ նուանելու կորովիմ եւ  
նուանուած արդիւնքով երբե'ք ու երբե'ք չչլանալու, այդ գաւաղի բմբի-

ըին անձնատար չըլլալու եռատատակտութեան ու հոգին սակարամային աման առնուարի չվերածելու իմաստութեան մէջ:

«Երջանիկ եմ, որ ծնած չեմ գիտալ ինչի մը փափուկ կամ մեղկ անկունը: Մեծագոյն հարստութիւններ կը կազմեն մանկութիւնս, հարուստ ու բազմերես մանկութիւնս, մանկութեանս հիւղակը, անոր հողածեփ պատեցն ու տախտակաշէն պատահանները, որոնց նեղքերէն ներս կը խուժէր սմբակ սրտատմ քամին, որ ելեհարակամ եռամեփի մը պէս կը խայթէր քանիքին հագուազիւտ չերմութեան կծկուած մեր մկանները...»

«Գիտեմ, թէ կեանքը զուարթ գոյներու հրախաղութիւն մը չէ միայն, ոչ ալ մութ գոյներու անձրեւ, ու լաւ է, որ այդպէս է: Ոչ միօրինակ, բազմերես, հարուստ եւ երբեմն անտարիկ, որում գոյութեան ի տես մարդուն մէջ կ'եռայ գայն նուաճելու, քոնարարելու խանդը»:

*Աշխարհով գինով, բայց միտմամբանակ աշխարհի անտարիկ կացութիւններն ու յուր յաջքները բոնարարելու, ապա իր սեփական ներաշխարհը իւրապատակ ոճով եւ եղակի լեզուով կառուցելու վճռակամութեամբ ընկալէց ան աշխարհը, եւ նոյն Հայեցողութեամբ վարուեցաւ իր գրականութեան հետ:*

*Վաթուռական թուականներու առաջին կիսուն արդէն որոշ հետաքրքրութիւն ստեղծած սուրիացի երիտասարդ բանաստեղծներէն Նազիհ Ապու Աֆըշ, Սալիմ Պարաքաթի անդրանիկ Հատորին նուիրուած շնորհակցանքներու ճնշողական զեպարտիստ ճնշողական զեպարտիստ խորագրեալ իր գրախօսականի ընթացքին, հակադրարար Սալիմ Պարաքաթի պարզ ու համեայ նկարագրին, կ'անդրադառնայ սնայարծութեան, փառամտութեան ու ինքնահաւանութեան ոչ աղածարդկային ա՛յն ախտին, որ վարակիչ հիւանդութեան նման բոյն հաստատած էր նոր բանաստեղծութեան անդիմազին գպրիներուն գանկին մէջ, եւ թուրքեր գրկած նոյնիսկ կարգ ժը շնորհալի բանաստեղծներ: Մասնաւորելով իր խօսքը, Ապու Աֆըշ կը գրէր-*

«Սալիմ Պարաքաթ այս սպաննիյն ու թաւ խառնիծաղամեփի մէջ միակն էր, որ կը ստեղծագործէր բանաստեղծական ուշագրաւ կտորներ: Հետու ժխորէն՝ ան ներամփոփ կ'ապրէր բանաստեղծութիւնը թէ՛ իբր լսգու, թէ՛ իբր կեանք եւ թէ՛ իբրեւ անձնական աշխարհիկականում. սկսեալ Պամիշլիէն զրկած իր առաջին փորձերէն, որոնք կու գային յայտնելու ճշմարիտ բանաստեղծի մը գոյութիւնը, եւ որ պիտի կանգնէր իր ստեղծում վրայ ու դուրս գար այս խառնիծաղամեփ յայտնակէն:

«Եւ որովհետեւ յորովայնէ բանաստեղծ էր Սալիմ Պարաքաթ, ուրեմն, ան ճշմարիտ մանուկի մը հիացած հայեացքով կը բացուէր աշխարհին, մարդուն եւ դարուն՝ իր իսկ բանաստեղծութիւններու ընդմէջէն: Անլի'ն- ամ մանկական, բայց խեղացի հիագմուճեմով կ'ընկալէր տեսանելի այս իրազութիւններէն անդին գտնուող աներեւոյթ աշխարհը, ուր կ'ապրէր ինք. կը շարժէր իր աշխարհին մէջ ամենայն ապշութեամբ եւ անկեղծութեամբ՝ ինչպէս քունի կացութեան մէջ...»:

*Հետագային, երբ պատանի բանաստեղծին ծնողքը կը գաղթէ Դամասկոս, Սալիմ Պարաքաթ, Հաւատարիմ իր էութեան՝ կ'ապրի հետու ժխորէն, բանաստեղծական ջինջ եղանակներու մէջ: Կը գառնայ գրական ամսագրերուն, շարաթաթերթիներուն եւ օրաթերթիներու գրական էջերուն ամէնէն փնտռուած անուններէն մէկը, միշտ մնալով հետու թեմերէն, գրական ձեռնարկներէն, երեկոյթներէն եւ, նոյնիսկ, խմբագրատուններէն:*

*Բնորոշ է իր ապրած ու հետագային գրողներու միջին գումարտուող երեկոյթներու ընթացքին բազմիցս պատմուած սա մանրադէպը:*



Ճիգերապէս անձանօթ, բայց բուրբէն փնտրուած զնորեալի երիտասարդ բանաստեղծը , որ ժրն ալ կը ստանայ Վերար Գրողներու Գանձակցութեան Սուրբոյ Ճանաչմանի կարգաւ, բանաստեղծ Ալի էլ ձրնուիէն երկազ ժը, ուր, վերջինս, յայտնելէ ետք իր համակրանքը՝ կը հրաւիրէ գինք հանդիպումի ժը, իրարու հետ ժտերմանալու եղբայրական բաղձանքէ ժը թելադրուած :

Վերկար մտածելէ ետք, որոշոյի երթալ — կը պատճէ Պարաքաթ ու կը շարունակէ — որոշեալ օրը, տասնութամեայ նիւարակազմ պատանին, դողազոզ մատնեով բախեց նախագանին գուար ու մտաւ ներս, ուր պարթեւառասակ ամս մը, տարուած գրութիւն մը արարելու մթնոլորտէն՝ շնըշմարեց զիս: Պահ մը կարծեցի, թէ սխալած կրնամ բլլալ: Պարտկտկան գորգը, պատէն կախուած իւզաներկ պատտոցները, գեղեցկօրէն կանաւորուած զանդիմի մը սպաւորութեանէն ծնած սարակաւտանքս զիս մղեցին համել կօշիկներս, տեղաւորել տալօթիս տակ եւ ստփի մատնեբուս վրայ մտննալ գըրասեղանին: Պանի մը վայրկեան ետք, իրտաղէմ բանաստեղծը արձրացուց դէմքը, ուր գծագրութեամբ գարմանի նշաններ, որոնք կամաց-կամաց կնձռտոսեցան, ու գոռաց:

« Ըրգար արճամ պատուիրած եմ քեզի, որ վիճակահանութեան տուս մը ծախելու համար յիտ՛գարես դիս... »

Վեցկտուր բռնեով հասկուցի, թէ Օման նպատակով մը ներս մտած չեմ, այլ ինք նշգած է ժամագրութիւնը: Երբ ներկայացուցի ինքզինքս, քան-քան մը լեզուց օրաւը, ապա՝ ուշադրութիւնը գրաւեց անօթիս տակ գտնուող հօշիկներս եւ պիշ-պիշ սկսաւ չափփել զիս:

« — Մեր տան օսվորութիւններէն է գորգի վրայ կօշիկով չկոխել — ըսի եւ նախագատութիւնս դեռ չաւարտած՝ կրկնապատկուեցաւ քան-քանը, եւ ժպիտը դէմքին անկցուց մտերմիկ շնչոսով:

« — Կօշիկը օտէզ անցուր ու Յստէ ճայինք: Ի՞նչ կը փափաքի իմել մեր շնորեալի երիտասարդ, ո՛չ, ներառութիւն, պատանի բանաստեղծը... »: Իրենց տան մէջ կարգեալ գոտ ուրիշ տեսած պատանին, այլեւս, կրնար ազատ-համարձակ երթիւնկէլ զարգապատ գահիճներուն մէջ: Ասկայն, այս բուրբ ուրիշ փոխեցին գիւղացի ազուն հոգիէն: «Ալ Սաւրա» (Յնկափոխութիւնը) օր-թերթի շարժական գրական էջին օգնական իրմբարդի պատասխանատուութիւնները ստանձնած ազան երբեք ջուր չխառնեց իր արիւնին, մնաց ինքնիրմէլ գծող հոյն պատանին, որ, օր մըն ալ, իր գրական հետաքրքրութիւնները ամբողջական կերպով չգոհացնող Օմայտներու մայրաքաղաքին հրաժեշտ տալէ ետք, փոքր պայուսակ մը ձեռնարկէ ուղղուեցաւ գեպի արարական նոր գրականութեան մայրաքաղաքը՝ Պէյրութ:

II

Պէյրութի մէջ, բանաստեղծութեան եւ նամակադրութեան ճամբով հասուեցած Ատոնիս-Պարաքաթ մտերմութիւնը ստացաւ անելի խոր բովանդակութիւն: Ատոնիս մեծ կարգ մը նման գուրգուրաց ինքնատիպ պատասխաններէ վրայ, լայն բանալով ո՛չ միայն ՎՄԱՍԱԲԷՓՅԻ էջերը անոր ստեղծագործութեան առջև, այլևս գրական ու մտկոլթային հանդիպումներէ փախուտ տուող պատանի բանաստեղծը պարճուց իր անբաժան զինակիցը:

1973ի Յունիսին, Ատոնիս ՎՄԱՍԱԲԷՓՅԻ հանդէսը արարական նոր բանաստեղծութեան յաակացուց իր 24-25րդ միացեալ թիւը, ուր խմբուած էին 31 բանաստեղծներ: Այդ բացառիկին մէջ քերթուածներ ստորագրած էին

Ֆրանսադիր և արարադիր Հանրածանօթ թէ երիտասարդ և թէ նորագոյն սերունդը ներկայացնող խումբ մը բանաստեղծներ, ինչպէս՝ Նատիա Խուկէնի, Իթէլ Աանան, Միշէլ Թրատ, Ազգրա Տին էլ Մունասարա, Փօլ Շաուուու, Սուպի Հապաշի, Ամիրա էլ Ջէյն, Սամիր էլ Սայեղ, Քամալ Ապու Տիպ և ուրիշներ:

Մէկէ աւելի Հասարակեաց Հեղինակ կամ նորագոյն տնտեսներուն ըստեղծագործութիւնները հիւրընկալող «Մաուաֆէֆ ի այդ Համարը, ստակայն, մատուրական և ընթերցող խաւերուն կը ներկայացնէր բացառիկ անակնկալ մը: Երիտասարդութեան սեմէն դեռ նոր մուտք գործած Սալիմ Պարաքաթ կը գերազանցէր ոչ միայն ինքզինք, այլև արարական գրականութեան մէջ յաջողութիւններ արձանագրած վերոյիշեալ տնտեսներէն շատերը:

«Մաուաֆէֆ ի ինչորոշ ասարկայ այդ թիւին մասին յօդուած ստորագրող բոլոր մատուրականներն ու քննադատները բնդգծեցին այն, որ Սալիմ Պարաքաթի «Տեմոա Պոնվա, եկո՛ւր դաշունաետրուածի մը խաղաղ» խորագրեալ բանաստեղծութիւնը մ'չ միայն անմիջական բանաստեղծութեան նուիրուած այս բացառիկ Համարին բացառիկ անակնկալն էր, այլև՝ վերջին երկու տասնամեակներու արարական բանաստեղծութեան եզակի նուանումներէն մէկը:

Օրին, ըննարկելէ ետք «Մաուաֆէֆ»-ի 24-25-րդ թիւին պարունակուած թիւեր, երիտասարդ քննադատներէն Մունիր էլ Աբուլ լաադոյն կերպով կը գրեւորէր բնդանուր կարծիքը՝ ուշադրաւ ու խիտ հետեւեալ տողերով.

«Տարրէն եզակի տեսիլներու եւ մարգարեական շունչով կտառուցած Սալիմ Պարաքաթի այս բանաստեղծութիւնը կը կենդանորէ իմքնուրայն յղաց մը: «Տեմոա Պոնվա, եկո՛ւր դաշունահարուածի մը խաղաղ» բանաստեղծութեան մէջ գործածուած հազուագիւտ լեզու, իր հարուստ բառապաշարին լայնածաւալ հեռաւորութիւններով, բիրեղացումներով եւ յուսկեալ իմաստներով վեր կը բարձրացնէ Սալիմ Պարաքաթի ստեղծագործական սրակը, գումարելով անոր վրայ եզակի, ուժեղ ու յուսալից դրոշմ մը:

«Եթէ Սալիմ Պարաքաթի ապագան դիտելու ըլլանք իր շոնդալից մաւտին չափանիշով՝ կը տանանք այն նշանները, ըստ որում՝ եկած է նոր բանաստեղծութեան փորձերը մարտոգ ձայնը, եւ հոր բանաստեղծութիւնը արդէն իսկ սկսած է ձերբազատուիլ դասականացումի եւ ամլութեան անտերէն»:

Արարական աշխարհի հարիւրէ աւելի երիտասարդ բանաստեղծներուն մէջէն, որոնք Հրապարակ իջան վաթսուական թուականներու առաջին կամ վերջին տարիներուն, անջատուեցան տասնէ աւելի տնտեսներ՝ Տասէլ էլ Ազգաուի, Մամուու Ատուան, Տասուի Քարիմ, Փօլ Շաուուու, Ազգրա Տին էլ Մունասարա, Ուալիտ էլ Սէյֆ, Ամիրա էլ Ջէյն, Սամիր էլ Սայեղ, Տայեղ Քատուուր, Սուպի Հապաշի, Քամալ Ապու Տիպ, Ուալիտ Սաաուէ, և այլն:

Շնորհիւ իր ետուն խառնուածքին, իր սերունդին ոչ-համալսարանական հազուագիւտ տղոց հազուագիւտ ներկայացուցիչն եղաւ Սալիմ Պարաքաթ, որ անխնջ ընթերցանութիւններու և պրպտումներու զծով ծանօթացաւ արարական ու Համաշխարհային դասական ու նորագոյն բանաստեղծութեան փորձերուն, և շնորհիւ իր ծանօթութիւնները իր մէջ տարբարութեան բնդունակութեան՝ գատորոշուեցաւ նոյնիսկ Համալսարանաւարտ ու գրականութեան տնթարայի արժանացած ու թեղ պարաստող իր ու զինք կանխած բանաստեղծներու հոյլէն:

1973ին, երբ «Մաուսֆէթի բացառիկ համարէն քանի մը ամիս ետք, նոյնիքն «Մաուսֆէթ» մասնաւորէն լոյս կը տեսնէր Սալիմ Պարաքաթի բանաստեղծութիւններու անդրանիկ ժողովածուն, քանը նոր թեւակոխած բանաստեղծը հաստիճն զուրս կը ձգէր առհասարակ սուրիական մամուլի էջերուն լոյս տեսած թիւով քառասունէ աւելի քերթուածներ:

Այս քառասուն քերթուածները հատարներէ բոլորովին դուրս նետուելիք կտորներ չէին: Անոնց մէջ կային յայտնի: Սակայն, ըստ երեւոյթին, Սալիմ Պարաքաթ կը ձգտէր իրականացնել աւելի նոր ու հսկայ երազ մը: Այն բանաբարուի իր անունին շուրջ հետաքրքրութիւն առաջացնելու մարմաջով: Կ'երազէր մուտք գործել յաղթական քայլերով, իր բացառութեամբ՝ շրջապատել բանաստեղծութեան ընկալեալ յացֆները, կերտելու համար իր էութիւնը հարազատութիւն դրսևորող նոր մեհեմը:

Բանաստեղծը յաջողեցաւ իրականացնել այդ մեծ անսխալը:

Շիրաքաճիւր ճերս մտնող բացագոնութիւններով պիտի ծափուցունէ զիս, եւ իւրաքաճիւր դուրս կ'իլոյ՝ ճանաչ... Խորագրեալ իր հատորով Սալիմ Պարաքաթ կու գար հաստատելու միամիտ մանուկին ա'յն հաստորը, ըստ որում՝ իր ներաշխարհին ներս մուտք գործելու ընդունակ իւրաքանչիւր արուեստասէր ընթերցող, որ զիտակէց է մարդկային հոգիին անհասանելիան, ցնծերգներով պիտի ողջունէ բժրոտութեան եւ ազատութեան խորոյքը, եւ իր հոգիէն սեան իւրաքանչիւր կրտսրական ընթերցող պիտի դառնայ զդուրս կ'իլոյճ ազատանել ա'յն արկածախնդիրը, որ պիտի ըմբռնուանայ բոլոր կաշկանդումներուն զէմ, եւ պիտի հասնի բանաստեղծին երազած ազատանել ժողովուն, ա'յն մարդուն, որուն գերագոյն նպատակն է կեանքը վերածել ազատութեան գոյազաւա հրախաղութեան մը՝ յար ու նման զինք այդ ապրելաճանին առաջնորդած բանաստեղծին:

Փոքրածաւալ վաթսուն էջերէ կը բաղկանայ այս բանաստեղծին ըմբռնութեամբ հանրապետական մերթ շտա վայրագ, եւ մերթ շտա քնքուէ մտաւանը, որ կը պարունակէ եթէ չհրթրութեամբ — «Տեմոսա Պրեվա, եկա'ր դաշտանաբար՝ 'ո խաղազ», «Երան ուզուրեանը ընթացող արագաստը արբանեակները», «Թիքեռնիկներուն պատգամաւորը», «Մամուկներուն դետայներ», «Արտասովոր քիթեռնիկի մը մարմինին պահանջուր», «Ազգականութեանց համագործակցութիւնը ու «Ես եմ խալիֆան, բայց չունիմ շխտուր»:

Սալիմ Պարաքաթի հատորը կը բացուի նոյնքան հետաքրքիր մուտքով մը:

Երբ հիստիւն կը թեքին վոնակաները գայլերուն, որոնք իրենց յետմամասերը քարչ կու տան ձիւնին վրայ ու կը հաչեն, կը հրդեհուին փարսիները կղպուած ու կոկորդները շուներուն, եւ կը լսեմ հոնգիւնը Տեմոսային

(Վկայութիւն)

Տեմոսա,

Ես ի՞նչ քանք արարողներուն, որոնք թամբեր կը գետնին բարակներու կոնականներուն Սընճար լեռան ստորտը, եւ տակաւին՝ Ապտըլ Ազիզ լեռան լանջին: Ենչ մը պահուրտած ես դուն, գուցէ գումի մը մէջ, կը հոտուրտաս դուն հողն ու կոտորները մաքիմներուն, մեծ ես դուն, ու քամին ես ցողաքեր, բնականաբար հունձաւ եւ ինձնով...

Պատկերները կը սկսին քակուիլ ներկայէն զէպի անցեալ, անցեալէն digitised by A.R.A.R. @

կ'ուզողուն ներկայի քրաննը անտաններուն, ապա գէպի ապագայի անծա-  
նոթ իւրաքանչիւր կայանին, կամ իր բռտերով՝ զոչպի Աստուած ու զէպի  
իւրաքանչիւր յոգնատանը երկիւնք: Այսպէսով, բանաստեղծը տէրփոխի մը  
նման կը սկսի երգել այն աշխարհը, ուր գոյութիւն չունին սահման ու պատ-  
նէշ, ժամանակ կամ վերջակէս: Փոխարէնը, կը հանդիպինք սոպի արտերու,  
վայրի կերտանիքի, բմբուս գետերու, գայլերու, շուներու, մորենիի մա-  
ցառներու, անապատի, ծովու, երկինքի, արագասոյր արբանակներու, եւ  
անապատային բոց ապփստատաններու տարածքին աստղադասան, գազաննե-  
րու կողմէ խոչտանգուած, մարդկային մարմնի անգամահատուած մասերու:  
Այս բոլորը կու գան զունուարելու Սայիմ Պարաքաթի բանաստեղծութիւն-  
ներուն աշխարհը Հեքիաթային մշուշով, կոյս անասաներու շափ Հոգեկան  
խոր կացութիւններու անակնկալ պատկերներով, որոնց լուսարձակին ասի  
իր բռտերն ու պատկերները կը ճամբորդեն միասնաբար գէպի նախամար-  
դուն Հոգւոյն ծալքերը, ուր կ'իրականանայ Ֆրէյդստան զարմ դէպի սազմ  
(«The back to the womb») անութիւնը, եւ քերթուածի էութենէն կը ժայթ-  
քեն սղծածայն սազմունք ու արնարոյր Հեթանոս համերգներ:

Արդարեւ, Պարաքաթի քերթուածները կը պոռթկան գարերու արգան-  
